

2 - 32

Զամեն վարդապետ:

ԳԵՂԻ ԳԵՂԱՐԱԽԵՍԻ — ՀԱՅՐԵՆԻՔԸ

Առաջնորդիչ համագործակցություն
Պօլիտ և Զամեն վարդապետ պետ Յանձնական;

— Ա Հ Յ Ո Ւ Թ Յ Ի Շ Ա Խ Ա Բ —

Архимандритъ Завойтъ.

НА РОДИМЫХ ИСКУССТВА.

Студенческая экспедиция через Константинополь и Смирну
въ Грецию.

— Ա Հ Յ Ո Ւ Թ Յ Ի Շ Ա Խ Ա Բ —

Տ Պ Ա Ր Ա Խ

Ա. Թ. Շահբաշեան, Բագր.

Տիպ. С. Т. Шахбагова, Баку.

1910

910-4

2 - 32

Աշունի աթարքական իշխանության
10 ՀՈԿ 2010

910.4
գ-32

Զաւեն վարդապետ

ԴԵՊԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ

ՀԱՅՐԵՆԻՔԸ



Առանձնահատ նախապարհորդութիւն

Պօլսի և Զմիւռնիայի վրայով դիսպահ Յունատան:

——————

Տ Պ Ա Ր Ա Ն
Ս. Թ. Շահբագեանի, Բազու.
Տիլ. Ս. Թ. Շահբագով, Բակու.
1910



АРХИМ. ЗАВЭНЬ.

НА РОДИНУ ИСКУССТВА.

Студенческое путешествие через Константинополь и
Смирну в Грецию.



3441 ՁԿ

Ազնուատոհմ հանգուցեալ տիկին

Զառվարդ Բէզլարեան Լալայեանցը,
յայնտի տոհմանուն և բարերար Կարապետ-աղա
Լալայեանցի ամուսինն էր և աչքի էր ընխում
իւր բարեմասնութիւններով։

Հանգուցեալ Զառվարդը, լինելով բարձր
ընտանիքի տան տիկին, շատ շատերի նման եր-
բէք անվայել բան չէր համարում ու խուսա-
փում սեպհական տան գործերին վերահասու
լինելուց կամ անձամբ կատարելուց։ Ամէնայն
սիրով և պատրաստակամութեամբ, առանց արար
աշխարհին յայտարարելու, իւր հիւրասէր յարկի
տակ ընդունում, պահում և խնամում էր ոչ
միայն չքաւոր ազգականներին, այլ և օտարնե-
րին, որոնց համար և մայր էր կոչւում։

Բացի այս, հանգուցեալը, իբրև նահապե-
տական ընտանիքի սիւներից մէկը, մինչև իւր
կեանքի վերջը հաւատարիմ է մնացել ազգի,
եկեղեցու գաղափարին։

Ուստի ՚ի ՅԻՇՑՕՒԿ քրիստոնէական առաքի-
նութիւններով օժտուած հանգուցեալ տիկին
Զառվարդի մահուան տարելիցի, Մեծ. պ. Լալա-
յեանցի գործերի կառավարիչ պ. Յովհաննէս
Պետրոսեանցի խնդրանոք, հրատարակում է սոյն
գրքոյկը, որից ստացուած արդիւնքը յատկաց-
ում է չքաւոր դպրոցներին։

Զ. Վ.



Ազնաւոր սիկ. Զառվարդ Լալայեան
1842—1909

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Որովհետեւ ոչ մի երկիր հնում այնքան
նշանաւոր գեր չի խաղացել, որքան Յունաստան,
ուստի աւելորդ չենք համարում, նախ քան մեր
ճանապարհորդական նկարագրութեան անցնելը,
յառաջարանի փոխարէն մի քանի խօսք ասել
մեր ընթերցողներին յունաց պատմութեան ծագ-
ման մասին, մանաւանդ երբ մեր այցելած աւե-
րակներն էլ մասնաւորապէս կապ ունին այդ
պատմութեան հետ:

Ինչպէս բոլոր ազգերի, այնպէս և յունաց
հնագարեան պատմութիւնը ներկայացնում է մի
դաշտանկար (լանդշաֆտ), որի մօտի բարձրու-
թիւնից նայողի աչքին անտեսանելի են դառ-
նում դաշտանկարի մանր իրերը, չկորցնելով
իհարկէ ընդհանուր պատկերը: Որոշակի ասել,
թէ այս ինչ ժամանակից է սկսում յունաց
պատմութիւնը, կարելի չէ. այդ մասին լուս
են նոյն իսկ յոյն՝ հնագարեան պատմագիրները,

իրենց ազգի ծագումը դիւցազուններից սերուած համարելով: Ո՞վ զիտէ, գուցէ հնադարեան այդ մատենագիրների նպատակից դուրս է եղել իրենց ժողովրդի ճշգրիտ պատմութիւնն աւանդելը և այդ պատմուածքների հետ դիւցազունների մասնակցութիւնը միայն այն նպատակով է եղած, որ իրենց գրուածքները ընթերցողներին աւելի հետաքրքիր դառնան: Մոռանալ պէտք չէ սակայն, որ յոյնը թէս չունի իւր ծագման ճշգրիտ պատմութիւնը, բայց ձիգ դարեր հողի տակ ծածկած պահելով իւր անցեալ փառքի աւերակ յիշատակները, գրամները, արձանագրութիւնները, արձանները և առհասարակ հնութեան այս տեսակի մնացորդները, այսօր ամբողջ լուսաւորեալ աշխարհի առաջ ոչ միայն պարծանքով կարող է խօսել, այլ և իւր աշխարհը, մշուշով ծածկուած իւր նախնեաց կեանքը, պատմութիւնը պարզել, լուսաբանելը հնարաւոր է դարձրել:

'Ի վաղուց անտի յոյնը հասկացել է, որ հնութեան այդ մնացորդները բոլորն էլ արժէքաւոր են, որովհետև նրանք ըստ մեծի մասին կապ ունին ինչպէս ընդհանուր քաղաքակրթութեան, այնպէս և ազգային պատմութեան, ժողովրդի կացութեան, հաւատի հետ: Հին գրամների միջոցով, օրինակ, կարելի է մօտաւոր գաղափար կազմել ժողովրդի տնտեսական կեանքի մասին. երբեմն էլ այդ գրամների վրայի կրօնական նկարները կարող են ծառայութիւն մատուցանել կրօնի ուսումնասիրութեան համար:

Արձանագրութիւններն ու արձաններն*) էլ յունաց մշուշապատ պատմութիւնը պարզաբանելու թէս զիսաւոր աղքիւր չեն կարող ծառայել, բայց փոքր ծառայութիւն չեն անի, երբ պարզաբանեն ժողովրդի հաւատալիքը, սովորութիւնները և ընդհանրապէս հնարաւորութիւն տան գաղափար կազմելու յունաց ներքին կեանքի և յոյն մտքի ստեղծագործող արուեստի մասին:

Ահա հէնց այդ յիշատակներն են, որ միջոց են տալիս գիտնականներին կարծելու, որ յունաց հնադարեան պատմութիւնը ծածկող մշուշը ցըռուել է սկսում, երբ հանդէս են գալիս տառերը, գրականութիւնը և դրա հետ էլ դուրս են գալիս այդ մշուշից մարդիկ: Հաւանական է համարւում, որ սրանց տառերի գիւտը եղած լինի 1X-րդ կամ VІІI-րդ դարում թ. ա.: VII-րդ դարուց յիշատակներ կան մնացած. ամէնահին արձանագրութիւնը համարւում է VII-րդ դարունը՝ փորագրուած մի անօթի վրայ, որը պահւում է Աթէնքում. իսկ VI-րդ դարուց արձանագրութիւններ շատ կան արդէն:

Աթէնքում արքոնաների (իշխան) անունները յիշատակւում են մօտաւորապէս VІІ-րդ դարու սկզբում—682 թ.**) Այդ նոյն դարում սկսում են գըել վճիռներ, օրէնքներ: Հաւանա-

*) Որոնցով մի ժամանակ հարուստ է եղել Յունատանը, իսկ այսօր միայն պատճէններն են պահւում. իսկականները գտնւում են իտալիայում, Գերմանիայում, Անգլիայում, Կ. Պոլսում և այլ տեղեր:

**) Celzer.

կան է համարւում, որ այս դարուց մնացած լիւնին ինչպէս ընդհանրապէս արձանագրութիւններ, այնպէս և գերեզմանաքարերի վրայ ննջեցեալների անուններ գրելու սովորութիւնը։ Ոչ մի տեղ գրաւոր աղբիւրներ չ'կան դրանց մշուշով ծածկուած պատմութիւնը պարզող։

Հաւանականօրէն այդ ժամանակ գրով օգտաւողնորի թիւը շատ քիչ էր, չ'կար ընթերցող հասարակութիւն, միայն անհատներն էին օգտաւում... Բայց որովհետեւ բանաստեղծութիւնը մինչև վերջն էլ չապրեց դիւցազունների աշխարհում և քանի գնաց, այնքան մօտեցաւ կեանքի առօրեայ երևոյթներին,—օրինակ, Սողոնը պատմեց իւր օրէնսդրութեան մասին, Տերտուղիանոսը՝ մեսսենական պատերազմների, Ներոդոտը՝ պարսկական պատերազմների (480—479), Թուլիդիտեսը՝ պելեպոնեսեան կոիւների մասին որպէս ականատես (429), Քսենոֆոնը՝ իւր պատմութիւնը հասցրեց մինչև 362 թուականները և այլն,—ահա Յունաստանի հնութիւնները, պատմութիւնը ծածկող մշուշը աստիճանաբար ցրուել է սկսում և պատմական երևոյթներն ու դէմքերը կամաց-կամաց երեսում են այդ առասպելախառն պատմութեան միջից։

Եթէ հարցնեն, թէ ի՞նչ պէտք է մեզ յունաց աշխարհի պատմութեան ուսումնասիրութիւնը, կասեմ, որ այդ անհրաժեշտ է նոյն իսկ, որովհետեւ յոյնի անցեալ պատմութիւնը յաւիտենականապէս հետաքրքիր է բոլոր ազգութիւնների, մարդկային ցեղի պատմութեան համար. որով-

հետեւ այն, ինչի համար մենք ու մեր ժամանակի մարդիկ աշխատում ենք և չենք կարողանում լիուլի ձեռք բերել, այն է՝ կուռում ենք արդարութեան, ճշմարտութեան, ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան համար,—այս ամէնի համար շատ վաղուց կուռել է յոյնը և ցոյց տուել արար աշխարհին ոչ թէ կեղծ, այլ ճշմարիտ զարգացման այն ճանապարհը, դէպի ուր մարդկային ճշմարիտ քաղաքակրթութիւնը պիտի գնայ: Վերջապէս, այդ պատմութիւննուսումնասիրել պէտք է, որովհետեւ եւրոպական արդի քաղաքակրթութիւնն էլ, ենթադրում է, որ հիմնուած է յունական քաղաքակրթութեան վրայ: Մենք ամէնքս էլ, բոլոր պետութիւններն էլ իրենց զիտութեամբ, արուեստներով, իդէալներով, քաղաքական և մտաւոր ազատութեամբ պարտական ենք Յունաստանին: Յունաց պատմութիւնը մասնաւորապէս հետաքրքիր է և մեզ, հայերիս համար, որովհետեւ մեր խաւար միտքը՝ պարզող առաջին լոյսն այնտեղից ճառագայթեց...

Թողնելով յոյն կեանքի և նրա յիշատակների հետ կապուած մանրամասն պատմութիւնը մասնագէտ պատմաբանների, ես միայն իմ այցելած տեղերի ու տեսած հնութեանց վայրերի նկարագրութիւնը կը տամ, այդ ժողովրդի ե երկրի մասին մի քանի խօսք ասելուց յետոյ:*)

Ի սկզբանէ անտի որտեղ էր ընտրել իւր համար ասլրելու տեղ այդ հնդիկ-գերմանական

*) Յունաց պատմութեան և կեանքին մօտիկ և մանրամասն ծանօթանալու ցանկութիւն ունեցողները կարող

ցեղը, յայտնի չէ. բայց դրանց (յոյների, պարսիկների, գերմ., կելտերի և այլն) զանազանաւկերպ լեզուների համեմատութիւնից եզրակացնում են, որ նրանք խաշնարած կամ թափառական ժողովուրդ են եղել: Իսկ այս տեսակի կեանքը, շատ բնական է, որ չէր կարող իւր լեռներով, անտառներով սահմանափակուած մնալ. ինչպէս մարդկանց, այնպէս և անամսոց բնական աճեցողութիւնը խաշնարածութեամբ զբաղուող ժողովրդին սահպել է դուրս գտլ և ցրուել աջ ու ձախ աւելի ընդարձակ տարածութիւններ բռնելու: Բնական այս ճանապարհովն ահա հնդիկ-գերմանական ժողովուրդը, առանձին խմբակներով ցրուելով զանազան կողմեր, կամայ-ակամայ պիտի ընդհատէր իւր ներքին կապը միւսներից. լեզուի և սովորութիւնների մէջ ահազին փոփոխութիւններ ունենալով հանդերձ: Հետեւանքն այն եղաւ, որ իւր ժամանակին մի ամբողջութիւն կազմող ժողովուրդը բաժան-բաժան եղաւ և կազմեց առանձին ցեղեր ու ազգութիւններ: Որովհետև ազգային ինքնուրոյնութիւնը ըստ մեծի մասին ապահովուում է լեզուով,*) յոյն ազգի գոյութիւնն էլ ճանաչուեց են օգտուել՝ ի միջի այլոց հետեւալ աղբիւրներից. Փյութել և Կուլանյ (Древнія общини, изслѣдованія о культе, правѣ и учрежд. Греціи), Э. Курциусъ (Греческая история), Герцбергъ (Исторія Греціи), Пельманъ (Краткій очеркъ греч. ист.), Белохъ (Ист. Греціи), Гиро (Частная и общ. ист. грековъ, ихъ быта и т. д.), Гуревичъ (Исторія Греціи) և այլն:

*) Ազգայնութեան մասին ճշգրիտ գաղափար տալիս է Հերոդոտ պատմարանը (440 թ. Ք. ա.):

այն օրից, երբ նրա լեզուն վերջնականապէս զատուեցաւ հնդիկ-գերմանական լեզուից: Հէնց այդ օրուանից էլ սկսած յունաց պատմութիւնը իւր յիշատակներով հանդերձ պարտական է իւր լեզուին:

Այս երկիրը, որտեղ յոյներն առաջինանդամ աեղաւորուեցան և քաժանուեցին. ու մշակեցին իրենց ազգային ամբողջութիւնը կամ ինքնուրոյնութիւնը պահպանող օրէնքը, կարգերը և այլն, թեսալիան է համարւում, որտեղից նրանք ժամանակի ընթացքում ցրուելով դէպի հարաւ, բռնել են Եգիեան և Հոնիական ծովերի միջավայրը,—մի երկիր, որ համարեա թէ ամբողջապէս ծածկուած է բարձրաբերձ լեռներով, որոնք և յունաց դիցաբանութեան պատմութեան մէջ դարձել են չաստուածների բնակարան (Օլիմպիոս, Պառնաս, Պինտոս): Այս երկիրը զարդարող լեռները յաճախ միանում են միմեանց հետ ձորերով և նեղ հովիտներով. երկրագործութեան համար միանգամայն անպէտք երկիր լինելով, տեղացիք ըստ մեծի մասին ստիպուած են հացը դրսից բերել:

Լեռներով և ծովերով հարուստ այս երկիրը իւր բնութեան գեղեցկութեամբ գուցէ նմանը չունի: Ըստ մեծի մասին բուսականութիւնից զուրկ լեռները, ներքեսում երեացող կապոյտ ծովը, հարաւային արեգակի փայլն ՚ի մի խառնուելով, մի այլ տեսակ հրաշալիք են ներկայացնում: Ամէնայն հաւանականութեամբ յոյներն իրենց այս հայրենիքում շատ երկար ժամանակ

մնացին կիսակիրթ և վայրենի դրութեան մէջ, Բայց ժամանակի ընթացքում աճելով ու բազմանալով, սկսեցին միմեանց մօտիկ բնակութիւններ հաստատել, ընկերական կեանքի վարժուել, հողային իրաւունք ձեռք բերել, սեպհականութեան իրաւունք սահմանել, ընտանիք, ցեղ և ազամբողջ գիւղեր ու մանր իշխանութիւններ կազմակերպել, պահպանելով իրենց մէջ մի ընդհանուր ներքին կապ: Իսկ մօտաւորապէս 9-րդ դպրում այս ցրուած իշխանութիւններն էլ մի վերջնական կազմակերպութիւն են ստանում: Մտաւոր կարողութեամբ օժտուած այս ժողովուրդը հաւանականօրէն 9-րդ դարուց յետոյ կրկնապատկում է իւր մտաւոր յառաջադիմութիւնը, որի արդիւնքներին երկրպագելու է գնում այսօր իսկ ամբողջ գիտնական աշխարհը, միանգամայն հիանալով յոյն մտքի ստեղծագործութեամբ:

Յաւելով պէտք է ասել սակայն, որ յոյնի ընաւորութեան մէջ շատ վաղ ժամանակներից մնացել է մի վատ յատկութիւն. այդ նրա խարերայութիւնն է: Առանց չափազանցութեան այս պակասութեան մէջ յոյները շատ հեռու են գնացել նոյն իսկ պարսիկներից. արդէն դրանց դիցարանութեան մէջ գովասանքով է խօսւում Հերմէսի անիրաւացի և աւազակային յաղթութեանց մասին. նոյն իսկ բազմափորձ Ողիսևը դարձեալ չի կարող ազնւութեան տիպար համարուել: Հեսիոդոսը պատմում է ժամանակի յայտնի դատաւորների կաշառակերութեան մա-

մին, Սողոնը՝ Աթէնքի պետական մարդկանց պնդանուութեան մասին և այլն. Քժբախտացար այս ախտար յայնի մէջ շարունակոյիէլ է նոյն իսկ, երբ սկսել է իւր քաղաքակրթութեան գագաթնակէտին հասնել: Այս շրջանում էլ դատուողներից մեծագոյն մասը մեղադրուում էր դողութեան, կաշառակերութեան, խաբեքայութեան մէջ:

Բայց մի բան, որ մինչեւ այսօր էլ յոյնի մէջ մնացել է և որ ըստ ամէնայնի օրինակելի է, այդ այն է, որ, չնայելով լեռներով բաժանուած են եղել միմեանցից և ունեցել են իրարից անկախ ու բաժան-բաժան մանր իշխանութիւններ, թագաւորութիւններ, տարբեր բարբառներ, սակայն նրանք շատ հին ժամանակներից իրենց հնադարեան պատմութեան մէջ իսկ; իրենց ազգային միութեան տեսակէտից, օրինակ են հանդիսացել շրջապատող ազգերին, իրենց ազգի և հանդիսական կեանքի առաջնորդող գաղափար ընտրելով գիտութիւնն ու ճշմարտութիւնը:

Հերոդոտն ամէնայն իրաւամբ կարող է բարձրաձայն կոչել, թէ յոյների պէս միաբան ազգ չկայ աշխարհիս երեսին. նրանց գոհարանները, տաճարները, բնաւորութիւնները միատեսակ են... Յոյներն ունեցել են և քաղաքական տարածայնութիւններ, բայց երբէք չեն մոռացել իրենց ազգային միութեան անհրաժեշտութիւնը: Եւ ահա այսօր, շնորհիւ այդ արժանիքի, թէև արտաքին թշնամիները յոյնի համար շատ բան չեն թողել անցեալից, յոյնը սակայն

գեռ չի կորցրել և չի կորցնի իւր ազգային ինք-
նուրոյն կեանքը, եթէ անդաւաճան սիրով սիրէ
իւր հայրենիքն ու նախնիքների փառաւոր յիշա-
տնակները:



Ուղեւորութիւն:

Մոսկուայի Կայսերական համալսարանի-
պատմական-լեզուագիտական ընկերութիւնը, իշ-
խան Տրուբեցկոյի (այժմ հանդուցեալ) նախա-
գահութեամբ, 1903 թ. ամառն ուսանողների-
մասնակցութեամբ ձեռնարկեց մի ճանապարհոր-
դութիւն Պօլսի և Զմիւռնիայի վրայով դէպի-
Յունաստան, որը պիտի ունենար ոչ միայն ընդ-
հանուր կրթական, այլ և գիտական բնաւորու-
թիւն:

Ցուլիսի 29-ին ճանապարհորդ ուսանողների-
խումբը, որոնց թիւն Օդեսսայում 140-ի հասաւ,
ուսուցչապետների և մի քանի բժիշկների ու-
ղեկցութեամբ հրաժեշտ պիտի տար Մոսկուային:

Ուսանողների խումբը, որոնց թւումն էր և
տողերիս գրողը, բաղկացած էր բժիշկներից,
պատմաբաններից, բնագէտներից, իրաւաբաննե-
րից և լեզուագէտներից: Թէև այսքան տարբեր,
բայց ամէնքի նպատակը մի լինելով՝ ուսանող-
ների ամբողջ խումբը ներկայացնում էր մի
ընդհանուր միութիւն: Եւ կարելի է պարծենա-



3441-84

լով ասել, որ այս երիտասարդ սերունդն իրեն արժանի պատուով մինչև վերջն էլ պահպանեց այդ ամբողջութիւնը, ընդհանուր ոգերութիւնն ու համերաշխութիւնը:

Սովորականից դուրս այդ օրը կուրսկի կայարանում մի աւանձին կենդանութիւն էր տիրում. բացի ուսանողներից խմբուել էր այստեղ ահազին բազմութիւն,—բարեկամներ, ընկերներ, մայր, քոյր և այլն,—ամէնքն էլ իրենց ծանօթներին կամ զաւակներին ողջ երթ մաղթելու։ Չորս վագոն յատկացրած էր բացառապէս էքսկուրսանտներին. մէկը՝ երկրորդ կարգի—ուսուցչապետների և հիւանդների, իսկ միւս երեքը՝ երրորդ կարգի—ուսանողների համար։

Դեռ Մոսկուայից չէր հեռացել մեր շոգեկառքը, որ ուսանողներն իսկոյն խմբերի բաժանուեցան (ամէն մի խումբը մօտ 10—12 հոգուց բաղկացած). իւրաքանչիւր խումբ իւր համար մի աւագ (շարօտ) ընտրեց, որի պարտականութիւնն ու իրաւունքն էր պաշար մատակարարել իւր խմբին։ Պէտք եղած դէպքում միայն այս աւագները պիտի ներկայ լինէին այսպէս կոչուած տնտեսական խորհրդի նիստերին և վճռէին ու կարգադրէին ընդհանուրի վերաբերեալ այս կամ այն խնդիրը. նոյն իսկ ուսուցչապետների խորհրդակցութեամբ ծրագիրներ պիտի մշակէին մեր անելիք ճանապարհորդութիւնների համար։

Որովհետև ուսանողների բազմութիւնը դժուարութիւն կարող էր պատճառել խմբովին

մի բան դիտելու, Օդեսայում յարմար դատուեցաւ երեք մասի բաժանել ամբողջ խումբն առանձին-առանձին ուսուցչապետների առաջնորդութեամբ. ուսուցչապետ Մայլբերգը պիտի բացատրէր հութիւնների կամ արձանների գեղարուեստական մասը, իսկ Լեպպեցն ու Նիկիտսկին՝ պատմական-հնագիտական նշանակութիւնը պիտի պարզէին։

Շնորհիւ այս տեսակի նախապատրաստական միջոցների, կարելի է ասել, որ ճանապարհորդութեան ընթացքում ժամանակն ըստ ամէնայնի նպատակայարմար գործադրուեցաւ։ Բացի վերոյիշեալ ուսուցչապետներից, մասնակցում էին էքսկուրսիային նախագահ Տրուբիցկոյ, Լոպտին, Ագնիով, Դաւիդով և մի քահանայ։

Շուտով երրորդ կարգի վագոններից մէկում տեղաւորուեցաւ թէյտունը երեք հակայական հեշտաեռներով, ածուխի տոպլակներով, հացով լի քաղլակներով, շաքարի, թէյի և այլ իրերի արկղներով։ Միւս վագոնում բացուեցաւ գեղատուն, որտեղ և տեղաւորուած էին ի միջի այլոց ուսանող բժիշկները, իսկ երրորդ վագոնը՝ ընդհանրապէս յայտարարութիւնների և տեղեկատու բաժանմունք (справочное отделение)—պօստային մարկաններ, բաց նամակներ վաճառելու մաս կոչուեցաւ։

Այսպէս, որոշ կազմակերպութեամբ, «մնաք բարեաւ»-ի աղաղակներով օդը թնդացնելով, թողեցինք Մոսկուան, որ մի քանի ըոպէից յետոյ անյայտացաւ մեր տեսողութիւնից։

Կիևի վրայով երրորդ օրը հասանք Օդեսսա, որտեղ մեզ համար գիշերելու յարմարութիւն էր պատրաստուած Ռիշելիսկի կոչուած գիմազիայի շենքում։ Գիմազիայի տեսչի պաշտօնակատարը ոչ միայն սիրով և քաղցրութեամբ ընդունեց մեզ, այլ և մօտ վեց օր սիրալիր կերպով պահեց, երբ ստիպուած եղանք որոշած օրերից աւելի մնալ. խորհուրդ չէին տալիս էքսկուրսանտներին Պօլսում լիջնել, այլ ուղղակի ճանապարհը շարունակել մինչև Պիրէյ։ Այդ ժամանակ Տաճկաստանն ու Բալկանեան թերակղզին ծածկող դիպլոմատիկական սեսե ամպերը դեռ չէին պարզուել, և որովհետև մեզ Պօլիս հասցնող շոգենաւը Պիրէյ չպիտի մտնէր, ուստի ստիպուած եղանք հինգ օր աւելի մնալ Օդեսսայում և սպասել Աղեքսանդրիա գնացող շոգենաւի։

Ազատ ժամանակից օդտուելով, ուսուցչապետ Մայլբերգը յունական հնագիտութեան վերաբերեալ երկու նախապատրաստական դասախոսութիւն կարդաց։ Բացի այդ, խմբերով պտտեցինք Օդեսսայի ուշադրութեան արժանի աեզերը—լիման կոչուած աղալողարսանները (որտեղ ապաքինում էր Բեսսարաբիայի թեմակալ առաջնորդ նորին բարձր սրբազնութիւն Տ. Ներսէս արք-եպիսկոպոսը), հիւանդանոցները, հրէից սինագօգան և այլն։ Ամբողջ քաղաքն անխօս կերպով գեղեցիկ է նոյն իսկ Մոսկուայից։ Փողոցներն ուղիղ, լայն, տները ճաշակաւոր և նոր, առևտուրը, քաղաքի կենդանութիւնը, վայելչութիւնը՝ նախանձելի։ Հազնուած են եւրոպական

ճաշակով, բայց պարզ։ Երբ ինձ հարցնէք, թէ Օդեսսայում հայ կայ, կը դժուարանամ պատասխանել, որովհետև հայի անուն կը ողներ շատ տեսայ, բայց եկեղեցում նոյն իսկ մայրենի խօսք չլսեցի ոչ պ. երէցփոխից և ոչ էլ հասարակութեան մի որևէ անդամից։ Մի խօսքով, դոլմա ու վլաւ ուտող տեսայ, բայց ճշմարիտ հայ չ'տեսայ . . .

Սեւ ծովի վրայ։

Օգոստոսի 7-ն էր։ 140 ուսանողներ յիշեալ ուսուցչապետների հետ մտանք «Նիկոլայ II» կոչուած շոգենաւը։ Օրը բաւական տաք էր և պայծառ, ողը թարմ և առողջարար, այնպէս որ քաղաքի ծանր օդից յետոյ այստեղ կարելի էր ամբողջ կրծքով շնչել։ Երբ մեր շոգենաւը սկսեց շարժուել, չէի կարողանում նկատել, թէ շոգենաւը շարժում է, այլ, կարծէք թէ, քանի գնում, այնքան ցամաքը հեռանում էր մեզանից։ Շոգենաւը հեռացաւ Օդեսսայից շատ աննկատելի կերպով. քաղաքը քանի գնաց, կամաց-կամաց փոքրացաւ և մի քանի ժամից յետոյ, երբ մենք արդէն ծովի անհունութեան մէջ էինք, քաղաքը և ցամաքը անյայտացան մեր տեսողութիւնից։

Առաջին անգամ ծովի վրայ լինելով, մի գաղտնի երկիւդ ինձ տանջում էր, մանաւանդ երբ տեսնում էի, որ ամբողջովին ջրով եմ շրջապատուած և կտրուած ցամաքից։ Այդ երկիւդը քանի գնում, այնքան սարսուռ էր բերում ինձ

վրայ, և ծովի անհուն տարածութիւնն աննկատելի կերպով թուլացնում էր ինձ։ Այդ ըովէին ես կարօտում և ցանկանում էի ցամաքին մօտենալ, բայց իզուր. քանի գնում, այնքան, կարծէք թէ, հորիզոնը փոքրանում էր և տիրութիւնը մուայլում իմ ներքին աշխարհ։ Երբ նայում էի դէպի վեր և ապա դէպի վար, դիտում լեռնացած ալիքները և այդ գոռ ալիքների վրայ տաշեղի նման օրորող շոգենաւը, զգում էի մարդու փոքրութիւնն ու ոչնչութիւնը։ Ով կամենում է իւր մեծութիւնը տեսնել, թող ճանապարհորդէ ծովի վրայ։

Մեր շոգենաւն առաջ էր սլանում։ Ես դեռ կանգնած էի տախտակամածի վրայ և թէև երկիւղով, բայց հիացած նայում էի անծայր հեռաւորութեան, որ, երկնակամարի հետ խառնուելով, մի առանձին խորհրդաւորութիւն էր ներկայացնում։ Անհուն ծովի ալիքները զարմանալի հեշտութեամբ օրորում էին մեր շոգենաւը։ Առաջ էր ալեաց ճղփիւն և ծովի վրայ սուլող քամու ձայնը։ Երկար ժամանակ երկիւղով էի նայում մեր նաւի հետ կռուող ալիքներին։ Արեգակը դեռ նոր էր թեքուել դէպի արևմուտք, որ լուսնեակը ծովի անհունութեան միջից շղարշածկ հարսի պէս երեսը ցոյց տուաւ մեզ։ Օդը մեղմ էր և ախորժելի. ծովը սպասածից աւելի կամաց-կամաց խաղաղում էր։ Վերևն անամպ երկինքն էր, ներքեր՝ ծովը, հեռու հորիզոնում՝ երկինքն ու արեգակը գրկախառնուել էին։ Արևմուտքն այդ ըովէին հնոցի էր փոխուել, որ

և մի քանի ըովէից մարեց ծովի մէջ։ Սգոյ մի շարշ ծածկեց ծովը, վերևում երկինքը սկսեց մթնել, իսկ աստղերը՝ պայծառանալ և աւելի հետաքրքիր դառնալ։ Ժամը 7-ին հոգեոր երգեցողութիւնը թագաւորեց ալիքների վրայ և ապա ուսանողները, իմբերի բաժանուելով, տեղաւորուեցին շոգենաւի զանազան մասերն և սկսեցին խմբական երգեցողութիւն մինչև կէս դիշեր։

Շոգենաւում տախտակամածի վրայ ամբողջ ուսանողութիւնն օգտւում էր մի ընդհանուր սեղանից. ճաշելուց յետոյ սկսւում էր նուագածութիւն։ Աւելի յաճախ երեկոները խմբւում էինք դաշնամուրի շուրջը, կոնցերտներ տալիս, նուագելով դաշնամուրի, ջութակի, փանդիռնի, կիթառնի և այլ գործիքների վրայ։ Երգում էինք երբեմն երկայն, երբեմն սօլո—«Ֆառստից», «Եւգինէ Օնեգինից», «Կարմենից» և այն, մեծ մասամբ էլ քառաձայն—ազգային զանազան երգեր և այսպէս ամբողջ ճանապարհի վրայ դէպի ծովի խորքերն ուղարկում մեր լողաբերն ու հընդուանքը . . .

Հրաշալի առաւօտ էր, երբ դուրս եկայ տախտակամածի վրայ. առաջին անգամ զով, կազդուրիչ, մեղմ և քնքոյց գեղիւուը շոյեց իմ դէմքը. ամէն ինչ հանդարտ էր և արել վերևից պայծառ փայլում էր։ Շոգենաւի վրայ մի պտոյտ անելուց և չորս կաղմս դիտելուց յետոյ, նաւի առաջին մասում տեղաւորուելով, սկսեցի նայել դէպ յառաջ, դէպ անհուն և անծայր ծովը։ Շո-

գենաւը առաջ էր սլանում խաղաղ ծովի վրայ, միայն շոգենաւի հետ խաղացող փրփուր ալիքներն էին իմ շուրջը շարձրացնում: Շրջապատող տեսարանն այնքան գրաւիչ էր, որ կարելի էր ամբողջ օրերով կանգնել և հիացմունքով դիտել նրան, որ այդ բոպէին մի անծայր հայելի էր ներկայացնում: Մի քիչ յետոյ փայլուն արել հեռու հորիզոնում տեսանելի դարձեց Բալկանեան թերակղղին և Փոքր Ասիայի լեռների գագաթները: Ես դժուարացայ և նոյն իսկ չկարողացայ որոշել, թէ ինչպիսի զգացմունքով եմ մօտենում ցամաքին և օսմանեան մայրաքաղաքին: Սրտի արագ բարախումից և անորոշութիւնից թէև տանջլում էի, բայց որովհետև քանի գնում, այնքան տեսարանը հետաքրքիր էր դառնում ու խլում մեր ուշադրութիւնը, երկար ժամանակ յափշտակուած մեր շրջակայ տեսարաններով, անշարժութիւնը գերադասեցինք: Շուտով մեր դիմացի ահազին լեռնաշղթան միանգամայն երկու եղաւ և մեզ համար ճանապարհ բաց արաւ դէպի Բոսֆոր:

Բոսֆոր:

Շոգենաւը կամաց-կամաց առաջ է գնում, իւր ետև թողնելով փրփուրներից կազմուած մի ծիր: Մի քիչ յետոյ արդէն եւրոպական և ասիական ցամաքները տեսանելի են դառնում: Մեր աջ կողմը Եւրոպան է, ձախը՝ Ասիան: Ամէնքիս էլ մի անպատմելի ուրախութիւն տիրեց և մեծ

հետաքրքրութեամբ ամէնքն էլ իրենց համար տեղեր բռնեցին. հեռաղիտակներն ու լուսանկարչական գործիքներն իսկոյն մտան իրենց դերի մէջ: Սև ծովը մոռացութեան տալով, կազմու պատրաստ նաւի տախտակամածի վրայից Բոսֆորին դիմաւորելու ելանք:

Այնտեղ, որտեղ Սև ծովը նեղանում և Բոսֆորն է սկսւում, շոգենաւը իւր ընթացքը դանդաղեցրեց. օսմանեան օրէնքի համաձայն, շոգենաւերը, եթէ երեկոյեան դէմ են համնում Բոսֆոր, պարտաւոր են ամբողջ գիշերն անցկացնել ծովի վրայ և առաւօտը մտնել Բոսֆոր: Բարեբախտաբար, դեռ օր կար և մենք պիտի շարունակէինք մեր ճանապարհը:

Բոսֆորի երկու ափերն էլ, Սև ծովից մինչև Մարմարա ծովը, մօտ երեսուն վերստ երկարութիւն ունին և ծածկուած են կանաչազարդ ծառերով: Եւրոպական ցամաքամասը, համեմատելով ասիականի հետ, բուսականութեամբ աւելի աղքատ է երեսում. ասիական մասն ամբողջապէս ծածկուած է կանաչով: Բոսֆորի բնութիւնն այնպիսի մի հրաշալիք է, որ դժուար է մինչև անգամ նկարագրել և դրանով իսկական գաղափար տալ ընթերցողներին. այլ պէտք է տեսնել, որպէսզի կարելի լինի հասկանալ նրա գեղեցկութիւնը, հրաշալի բնութիւնը, անձամբ ճաշակելով նրա զովարար օդը: Մի յայտնի հեղինակ ասում է. «Մի որեկցէ բան համեմատել Պօլսի կամ Բոսֆորի գեղեցկութեան հետ-

արարչագործութեան դէմ մեղանչել կամ հայիոյել
կը նշանակէ»:

Շարունակ փոփոխուող և միմեանց յաջորդող
տեսարանների միջով մեր շոգենաւը կամաց առաջ
էր ընթանում։ Ասիական ցամաքում առան-
ձին ուշադրութեան արժանի է այն մասը, որտեղ
տաճկական բնակարաններն են երեսում։ Հէնց
առաջին իսկ հայեացքից կարելի է զաղափար-
կազմել տաճկական անճաշակ ճարտարապետու-
թեան մասին։ Սրանց բնակարանները տարօրի-
նակ են թւում և, կարծէք թէ, տան նմանութիւն
չունին. 5—7 յարկանի աշտարակներ են բազմա-
թիւ պատուհաններով։ Երբեմն էլ այս աշտա-
րակները ընդհատում են, և շարունակութեան
վրայ դուք տեսնում էք գերեզմանատներ, որոնք
նոյնպէս քիչ չեն խլում ամէն մի անցորդի ուշա-
դրութիւնը։ Մեչիդներն էլ իրենց մինարէթ-
ներով անպակաս են։

Ահա մի քիչ առաջ երեսում է Բումելի-Հիսար,
իսկ նրա դէմ—Անասօլի-Հիսար աշտարակները։
Երկուսն էլ թէն աւերակ, բայց իրենց հսկայա-
կան մնացորդներով Բոսֆորի հին դիտարաններն
են։ Մուհամմեդ II-րդ, նախ քան կ.-Պօլիս առ-
նելլ, երեք ամսուայ ընթացքում շինել տուաւ
այս հսկայական հինգ սաժէն հաստութիւն ու-
նեցող պատերով բաւական բարձր դիտարան-
ները։

Շուտով մեր շոգենաւը մօտեցաւ այդ տեղին։
Հստ երևութիւն, սա Բոսֆորի ամէնանեղ մասն է,
որտեղ շինուած պէտք է լինի և կամուրջ, որի

վրայով էլ յունական տամնեակ հազարաւոր
գնդեր անցել են դէպի Եւրոպա։ Ուղիղ այս դի-
տարանների դիմացից ասիական ափից Բոսֆոր է
թափւում Դէօնու կոչուած գետակը (Գէօքսու-
կապոյտ կամ Երկնային աղբիւր կամ ջուր)։
և իրօք միայն Երկինքը կարող էր այդ գետակին
տալ այդքան սիրալիր տեսք։ Նա սկիզբն է առ-
նում լեռների բարձունքից և նոճիների ստուե-
րով, կանաչով ու ծաղիկներով զարդարուած հո-
սում է դէպի Բոսֆոր։ Ասում են, թէ այս գետի
եզերքները հասարակական զրօսավայր է, նա-
մանաւանդ գարնան և ամառը, երբ այստեղ
սկսում է կանաչ երեալ։ Սովորութեան համաձայն,
ուրբաթ օրերը քառասպատկւում է զրօնողների
թիւը։

Մեր աջ կողմը, Եւրոպական ցամաքի վրայ,
սուլթանական ամբողջ պալատներն ու մեջլ-
ներն են, իսկ մեր դիմացն ամբողջ ժամանակ
երեսում է Լէանդըրի աշտարակը։ Ասում են, թէ
սա այն աշտարակն է, որտեղից Բայրոնը նետել
է իրեն Բոսֆոր և անցել միւս ափը, որն իհարկէ
անհաւատավի է և ոչ էլ այնքան բանաստեղծա-
կան։ Այս աշտարակի հետ աւանդութիւնը կա-
պում է տաճկական մի սուլթանի գեղեցիկ դստեր
անունը. աշտարակն էլ կոչում է Գըզ-Գու-
լիսի, այսինքն աղջկայ աշտարակ։

Աւանդութիւնը պատմում է, թէ այդ աղջիկը,
իւր դէմ լարուած որոգայթներից ազատուելու
համար, ապաստանարան է գտել այստեղ, որպէս
ապահով տեղ, մանաւանդ որ մի ինչ որ կախարդ-

գուշակել էր աղջկայ համար, թէ նա անբնական մահով պիտի մեռնէ և այն էլ օձի խայթոցից։ Մէկ անգամ պարսից շահը ուղարկում է նրան գեղեցիկ ծաղիկներից հիւսուած մի փունջ, թաքնելով այնտեղ մի օձ, որը և մահացու կերպով թունաւորում է սուլթանի աղջկան։ Նա մեռնելու վրայ էր, որ շահը օգնութեան է հասնում և իւր կրքու համբոյրներով ծծում թոյնը ու կենդանութիւն տալիս նրան։

Մեր աջ կողմը հսկայած կանգնած է լերան բարձրութեան վրայ Իլդիզ-Կիօսկը՝ սուլթան Աբդուլ-Համիդի պալատը։ Հեռուից այնքան էլ գեղեցիկ չի երեսում այս պալատը։ Չը ջապատռած է պարտէզներով, որոնք նոյնպէս պարսպապատ են։ Այս պալատի մօտ է Համիդիէ կոչուած մեշիդն, ուր սուլթանն ուրբաթ օրերը աղօթելու է գնում։ Թէև այնքան էլ մեծ շէնք չէ, բայց նրա բարակ և բարձր մինարէթը բարձրանում է, կարծէք, մինչև երկինք, սպիտակ փայլ տարածելով հսկայական բարձրութիւնից։ Այս մեշիդը Բուֆորի և Մարմարա ծովի հրաշալի դեկորացիայի մէջ ամէն ըոպէ տեսանելի է։

Աւելի հետաքրքիր է Զըրաղան կոչուածը։ Սրա հիմնադիր Աբդուլ-Ազիզը գուցէ ՚ի նկատի չի ունեցել, թէ այս շէնքը խայտառակ դեր պիտի կատարէր։ Գեղեցիկ է այս պալատը իւր ճարտարապետութեամբ, դէպի Բուֆորը նայող աստիճաններով, մարմարեայ պատերով, գոյնզգոյն ապակիներով և շրջակայ ծառաշատ պարտէզներով։ Բայց ի՞նչ արած, որ այս ամէնից երկար

տարիներից ՚ի վեր մեռելային սառը հողմ է փչում։ բանտը գեղեցիկ պատերի մէջ էլի բանտ է. ոչ մի կենդանութիւն, պատուհաններն վանդակապատ ու նեղ։ Սա հարեմն է։ Ասում են, թէ այս հարեմին զոհ դարձած խեղճ ու անօգնական արարածները մինչև անգամ իրաւունք չունին դէպի Բուֆոր նայող պատուհաններին մօտենալու. նրանք միայն կարող են հակառակ կողմի պարսպապատ այգում զբօսնել։

Դրա մօտն է Գօլմա-Բահչէ կոչուածը—մարմարեայ և ուկեպատ գոներով, ուր միայն ընտրեալ պալատականները կարող են զուարձանալ։ Այս շէնքը թէև մօտ երեքհարիւր սենեեկից է բաղկացած, բայց անմարդաբնակ է, կառուցուած է նիկողայոս Պալեան ճարտարապետի ձեռքով։ Աբդուլ-Մեղջիտի օրով։ Շէնքը եւրոպական, ասիական և տաճկական ճաշակի խառնուրդ է ներկայացնում։ Նոյն ուղղութեամբ Բուֆորի ափով շարունակում է Թոփիսանէ կոչուած փողոցը, որտեղ է և Մահմուդ Ալ-դի մեշիդը, որն առանձնապէս աչքի է ընկնում իւր ճարտարապետութեամբ։

Բուֆորը, Սկիւտարի կողմից սեղմուելով, իսկ եւրոպական ափից Ստամբուլի և Ղալաթիայի մասից ծոռուելով դէպի ձախ, միանում է Մարմարա ծովի հետ, բայց Ստամբուլի և Ղալաթիայի մէջ տեղը բաժանում է մի փոքրիկ ծոցով, —սա Ոսկեղջիւր կոչուածն է, որտեղ և կանգնեց մեր շոգենաւը։ Երեակայութեամբ պատկերացնել այն տեսարանը, որտեղ կանգ

առաւ շոգենաւը, կարելի չէ։ Որպէսզի ընթերցողը մօտաւոր գաղափար կազմի այստեղ գտնուած մեծ և փոքր նաւերի և նաւակների քանակութեան մասին, թող երևակայէ մի տերևաթափ անտառ։ Զտեսնուած կենդանութիւն էր տիրում այսպէս կոչուած Ղալաթիոյ քարափում։ Մի ակնթարթում մեր շոգենաւը շրջապատուեց փոքրիկ նաւակներով։ Այ ու ձախ սուլոցների ձայներ, մեծ ու փոքր նաւերի այս ու այն կողմը սրբնթաց անցնելը, կարմիր փեսաւորների համագին բազմութիւնը, նաւերի վրայ գոյնզգոյն դրօշակները, երբեմն էլ կարմիր փեսերի միջից երևացող չալմաները և այլն մի աննկարազրելի տեսարան էին ներկայացնում։

Մեր շոգենաւի մօտ փոքրիկ նաւակի մէջ տաճիկ ոստիկանն անցաթղթեր էր ստուգում։ Շուտով մեզ համար ցամաք իջնելու հրաման եղաւ, և որովհնտես գեռ օր կար, Պօլսի ուսւաց հնագիտական ճեմարանի տեսուչ պ. Ուսպենսկու առաջնորդութեամբ ուղկորուեցինք դէպի Ստամբուլի ափը Այեա-Սոֆիան տեսնելու։ Տաճկական փոքրիկ շոգենաւը մի քանի ըռպէից յետոյ կանգնեց Ստամբուլի ափին։

Ո՞հ Տէր Աստուած, ինչ է ներկայացնում Ստամբուլը։ Որքան նա գեղեցիկ է երեսում հեռուից, այնքան աւելի վատ ներսից։ Նեղ, կեղտոտ փողոցներ, փոքրիկ, տղեղ տներ, անտառներ, մինչև անգամ շնչառապ անելու չափ գարշահոտութիւն, փողոցներում կեղտոտութեան

կոյտեր, որոնց շուրջը պահապանների դեր կատարում են անթիւ ու անհամար շներ։

Ստամբուլը, ինչպէս և Սկիւտարը, թէն Պօլսի մի բաժինն է համարւում, բայց իսկապէս իւր հարիւր հազար բնակիչներով առանձին քաղաք է ներկայացնում իւր ժողովրդի առանձնայատուկ նիստ ու կացով, սովորութիւններով։ Ստամբուլը, ինչպէս և Սկիւտարը, ունի իւր առանձին քաղաքապետը (միթէսարիֆ), որը Պօլսի գլխաւոր չորս մոլաներից մէկն է։ Բնակչութեան մեծամասնութիւնը տաճիկներ են, կան մեծ թուվ հայեր և յոյներ։

Առաջին անգամ այստեղ գտացի, որ Տաճկաստանումն եմ և տաճիկներով շրջապատուած։ Մարդոց ամբոխը, նեղ, ծուռ ու կեղտոտ փողոցները, փոքրիկ խանութներում պազած պտղավաճառները և խանութների առաջ նարգիլէ քաշողների խմբերը մի այլ տեսակի խառնիճաղանճ տեսարան էին ներկայացնում։ Այդ ըռպէին իմ շրջապատի տեսարանը մի դժոխք էր թւում ինձ։ և կարծէք թէ մի հիպնոսական ոյժ զրկում գիտակցութիւնից, ազդելով ջղերիս վրայ։ Դէպի որ կողմն ուզում էք շարժուեցէք, որ կողմն ուզում էք նայեցէք, — նոյն արտասովոր պատկերը նկարւում է ձեր աչքի առաջ։

Ցամաքի այն մասից, ուր մենք իջանք, սկսում է տաճկական շուկան։ Այս շուկայից դէպի վեր տանող փողոցը սովորական փողոցներից աւելի լայն է և բազմամարդ։ Թէկ այստեղ ևս գարշահոտութիւն է փչում, բայց յուսա-

հատական չէ։ Երբեմն էլ այդ բազմութեան միջից արագ անցնում էր երկու ձիանի կառքը։ Բայց քանի հեռանում էինք շուկայից, այնքան էլ փողոցն անմարդաբնակ էր դառնում և մեռելային պատկեր ներկայացնում։ Այս փողոցը զարդարող տներն էլ բանտի ձև ունին, պատուհաններն էլ վանդակապատ, որտեղից երբեմնակի բանտարկութեան դատապարտուած գեղեցիկ սեռը ժպտուն դէմքով անցորդի ուշադրութիւնն է խում և ապա մի ակնթարթում յետ փախչում, մթութեան մէջ անյայտանում։

Այեա-Սովիա:

Մեր առաջնորդ գաւասը (տէրութեան ոստիկանը) մի քանի ըովէից յետոյ ցոյց տուաւ մի շէնք, ասելով. «ահա Այեա-Սօվիան»։ Ես դժուարանում էի հաւատալ, որովհետեւ այդ շէնքն ինքն ըստ ինքեան հեռուից ուշադրութեան արժանի ոչինչ բան չունէր։ Դրսից քարերի լեռնացած մի կոյտ էր երկում և ոչ թէ մարդկային հանճարի արգասիք։ Որքան մօտենում էինք տաճարին, այնքան էլ դրսից շըջապատող մինարէթներն ու անճաշակ պատերը շատանում էին։ Դժուարանում էինք հաւատալ, թէ այդ քարակոյտի մէջ կարող է թաքնուած լինել հոչակաւոր ճարտարապետ իսիդորի հանճարի հետքերը։

Երբ հասանք փողոցի կողմից տաճար տանող դրան, գաւասն իսկոյն առաջ անցաւ—

առաջնորդելու տաճարի երկրորդ յարկ տանող նեղ և ոլորապայտ անցքով դէպի վեր։ Անցքի առաջ մեզ հանդիպեցին մի խումբ իմամներ, որոնց դէմքի արտայայութիւնից երկում էր անբարեհաճութիւն։ Գաւասը մի քանի խօսք փոխանակելուց յետոյ խնդրեց մեղ կատարել իմամների ասածը, այն է՝ հեռազիտակներն ու լուսանկարչական գործիքները թողնել լրենց մօտ և այնպէս մտնել տաճար։

Իմամների պահանջը կատարուեցաւ և մենք բարձրացանք այդ նեղ ու մութ, եթէ կարելի է ասել, գետնափոր անցքից տաճարի երկրորդ յարկը, որտեղ բացի փոշուց և կեղտութիւնից ուշադրութեան արժանի բան չկարողացանք տեսնել. տաճարի ամբողջութիւնն էլ չէր երկում։ Վճռեցինք ցած իջնել և ներքեցից, տաճարի միջից դիտել։ Յիշեալ իմամներն այժմ էլ հողաթափ առաջարկեցին տաճար մտնելու համար։

9 դուռ բոլորն էլ մի կարգի վրայ բացւում են դէպի տաճարի ներսը։ Գլխաւոր տաճարի դրան ճակատին էլ մնացել է աւետարանի նկարը բաց և յունարէն տառերով գրուած։ Գլխաւոր դռնից ներս մտանք տաճար։ Ոչ մի բան ինձ վրայ այնքան խորը և խորհրդաւոր տպաւորութիւն չէր արել, այն էլ միանգամայն անսպասելի, որքան այս հսկայ տաճարը։ Ուղիղ մեր դիմաց, սեղանից վերև, հսկայական պատերը, վերևում զարդարուած պատուհաններով, կամարաձև միանում են սեղանի կորածելութեան

հետ և կազմում մի կիսագմբէթ։ Մեր աջ ու ձախ կողմից ձգւում են երկու կարգ մեծ-մեծ սիւներ, որոնք միմեանց հետ միաւորուած են կամարներով։ Այս կամարները ծառայում են միենոյն ժամանակ որպէս պատուանդան երկրորդ յարկի, որոնք, աղեղնաձև յենուելով այլ շարքերի աղեղներին, միանում են մեծ աղեղի հետ և լցնում տաճարը մարմարեայ սիւների ցանցով, որը և տափս է տաճարին աննկարագրելի գեղեցկութիւն և մի առանձին խոքհրդաւորութիւն։ Այս ծիածանաձև աղեղները կամ կամարներն իրենց վերեսում պահպանում են մօտ վաթուն պատուհաններով զարդարուած քարեայ օղակ գմբէթի հիմքը, որի վերեսում, կարծէք թէ հորիզոնում, հանգստանում է հրաշագեղ գմբէթը, — երկնակամարից յետոյ գուցէ ամէնագեցիկն աշխարհիս երեսին։

Անշուշտ գոռոզութիւնը չի ստիպել Յուստինանուսին այս տաճարը մտնելիս ասելու. «Սողոմն, ես յաղթեցի քեզ», այլ դա մի հասկանալի հիացմունք է եղել, որ բնականօրէն արաւայատուել է ճարտարապետութեան այս չտեսնուած հրաշալիքի առաջ։ Այս աաճարը կառուցանելու համար ամբողջ հին աշխարհը զոհել է իւր գանձը. Եւրոպայից, Ասիայից, Աթէնքից, Եգիպտոսից և այլն բերուել են մարմար և այլ թանկագին քարեր, սիւներ, և այդ թանկագին նիւթերից իսկորի հանճարը ստեղծել է այս հրաշալիքը, որի նմանը գեռ չի ստեղծել ճարտարապետութիւնը աշխարհի և ոչ մի անկիւ-

նում։ Երկրաշնորժը, խաչակիրների կողոպուտը, տաճիկների ֆանատիկոսութիւնը, սուլթան Մահմէտի զօրքերը թէև քարուքանդ են արել նրա մարմարեայ սիւներն ու մողայիկները, բայց և այնպէս այս տաճարը մնացել է իւր ամբողջութեամբ որպէս մի անընկճելի յաւիտենական յիշատակ ճարտարապետութեան։

Կարելի է ասել, որ Այեա-Սօֆիան իդէալական գեղեցկութիւն չէ, բայց նա անպայման մարդկային հոգեւոր գեղեցկութեան մի հրաշալիք է. նրա ծիածանաձև կամարների, երկնանման գմբէթի տակ մարդ, կարծէք թէ, մոռանում է այն, ինչ որ աշխարհային է, ինչ որ անցողական է։ Ես տեսել եմ Մոսկուայում Յիսուս Փրկչի տաճարը (Խրամъ Христа Спасителя), որը նոյնական ուշադրութեան արժանի է իւր ճարտարապետութեամբ։ և հարստութեամբ։ բայց Այեա-Սօֆիան տեսնելուց յետոյ Փրկչի տաճարը միայն մի թանդարան է երեսում, որտեղ կայ ճարտարապետութեան ու արուեստի փշրանքներ միայն։

Այեա-Սօֆիան իւր պարզութեամբ, ընդհանուրին մատչելիութեամբ՝ ու մեծութեամբ առաջին իսկ բոպէից հիացմունք է պատճառում։ Հարկաւոր չէ ասել, թէ այս տաճարը մի ազգութեան է պատկանում, որովհետեւ նա մի տաճար է ընդհանուր մարդկութեան համար, նուիրաբերուած միայն աստուածային իմաստութեան։ Նրա վեհութիւնը ազգում է մարդու հոգու վրայ և մատչելի կամ հասկանալի է ամէնքին։ Նրա

հրաշալի, վսեմ ու բարձր գմբէթի տակ կարող են ապրել բոլոր հաւատացեալները և ոչ-հաւատացեալները, ինչպէս որ ապրում են նրանք երկնակամարի տակ: Եթէ Բոսֆորի վրայով տասնեակ տարբեր դաւանութեանց ներկայացուցիչներ մտնեն այստեղ, ամէնքն էլ կարող են հանգիստ հոգւով աղօթել: Մոհամմէդ Ա-ը ձիով այս տաճարը մտնելով, հիացմունքով բացականչել է. «Ահա Աստծուն յարմար աղօթատուն»:

Տաճարի մեծութիւնն այնքան զրաւիչ է, որ մարդ երկար ժամանակ չի կարողանում միւս զարդարանքներին ուշը դարձնել: Հայեացքդ որ դարձնում ես դէպի պատերն ու կամարները, ինչ որ խորհրդաւոր նշաններ ուշը են զրաւում. այդ յունական մոզայիկի և արձանազրութիւնների մնացորդներն են: Տաճարի վերևի մասում, սեղանի եռամկիւնաձև պատերի կորացման միջավայրում մոզայիկներից նկարուած է Սօֆիայի, այն է՝ Իմաստութեան նկայական պատկերը կանացի դէմքով, իսկ գմբէթից ցած, երկրորդ յարկի սիւնազարդ կամարների անկիւններում մոզայիկից նկարուած չորս սերովբէներ և մի քանի սրբերի հազիւ նշմարելի պատկերներ: Ափսոս, որ բոլորի դէմքերն էլ ծեփուած են ներկով: միայն երեսում է նկարների ընդհանուր ձեր թաքնուած կիսամթութեան մէջ:

Չի կարելի ասել, թէ տաճիկներն այստեղ շատ հետքեր են թողել, բայց կարելի է ասել, որ աւերել են անխնայ կերպով: Այժմ սեղանին

փոխարինում է մի մարմարեայ քար, որը ցոյց է տալիս ճանապարհ դէպի Մելկա, իսկ նրանից ներքեւ կախուած է մի գորգ, որի վրայ Մոհամմէդը կատարել է իւր աղօթքները: Սեղանի աջակողմեան սիւնազարդ ճեմելիքում (ոչ հեռու սեղանից) կանգնած է փայտեայ ամբիոնը լուսնինկարով, որտեղից Շէլիս-ուլ-իսլամը մերկացրած սուրբ ձեռին կարգում է դուրանը: Գմբէթից ներքեւ կախուած են իրար դիմաց բաւական: մեծ ցուցանակներ, վրան արաբերէն տառերով գրած: «Լահ-իլա իլլազան, Մոհամմէդ ուսիր ուղան», որ նշանակում է. «Աստուած մի է և Մոհամմէդը Նրա մարդարէն»: Սիւնազարդ կամարներից դէպի տաճարի միւս մասերն անց են կացրած: մետաղաթելեր, որոնք պահպանում են հորիզոնական շրջանակները, որոնց վրայ տեղաւորուած են. ճենապակեայ կանթեղներ:

Ահա այն ամէնն, ինչ որ այս տաճարի մէջ հեթանոսական կարող է համարուել: Ոչ թէ ամիսների ընթացքում, այլ նոյն իսկ մի քանի օրում կարելի է նկնջել իսլամականութեան հետքերը: Ափսոսում է մարդ, երբ այս հրաշալի տաճարի մէջ տեսնում է իմամների նման անձանց աղօթելիս, որոնք իրենց տարօրինակ դէմքերով, չալմաներով, ձեռքերը գետին խփելով ու երեսին զարկելով, վերջն էլ ամբողջ մարմնով երեսի վրայ գետին փոռւելով, աղաղակներով, ապշեցնում են մարդու: Բայց երբ մէկ էլ հայեացքդ վեր ես բարձրացնում դէպի գմբէթ, վերստին մոռանում ես այդ մահկանացուներին

և կարծում ես, թէ գտնւում ես հարաւի կապոյտ
երկնքի տակ:

Գաւասը յայտարարեց, թէ ժամանակ է
հեռանալու, որովհետև արևը մայր մտնելուց
Ստամբուլի փողոցներում ման դալ կարելի չէ:

Ար-Մէյդան

Այեա-Սօֆիայից երբ դուրս եկանք, արեգակն արդէն մօտեցել էլ իւր մուտքին, և որովհետև մի քիչ ժամանակ կար, կամեցանք տեսնել Ար-Մէյդան կոչուած հրապարակը։ Դէպի այս հրապարակ տանող փողոցը ներկայացնում էր մի այլ տեսարան։ Հների բազմութիւնները խմբուած կեղտոտութեանց կոյտերի շուրջը, մարդոց խառնիճաղանձ ամբոխը, փողոցներում քաղակների մէջ խաղող, թուզ վաճառողների պղաղակները մարդու ականջ էին խլացնում։

Այս փողոցում կարող էք տեսնել ամէն տեսակի գէմքեր ու հագուստներ։ Ահա տաճիկը չալմայով (զլխի փաթաթոց), յոյնը ֆէտով, արնաուտները, հրէաններն այս ու այն կողմն են վազվում կամ խանութիւններից բարձր ձայնով միքան գնելու հրաւիրում անցուդարձ անողներին։ Ահա աղքատների կամ կաղերի մի խումբ պատի տակ կուչ եկած, սրանցից ոչ հեռու չերուիր քաշողների մի խումբ քարերի վրայ կկղած ներտես քաշում ծուխը մինչև թոքերի խորքը։

Ահա վերջապէս Բիւզանդական հին յիշապակների հանդիսարանը—Ար-Մէյդան հրապա-

րակը, առանց չափազանցութեան կեղտոտութեան իսկական մայրաքաղաքը։ Ի՞նչ չի պեսել այս հրապարակը։ մի ժամանակ սլացել են այստեղ ոսկեայ կառքեր, տաճկական ոսկեդարում ձիարշաւների և զանազան խաղերի հանդիսարանն է եղել... Իսկ այսօր այս պատմական հրապարակի մի կողմից կանգնած է Ահմէդի հսկայական մեշիգը, իսկ միւս կողմերից՝ տաճկական փայտեայ և ողորմելի բնակարանները, որոնք միմեանցից բաժանւում են վերին աստիճանի նեղ ու կեղտոտ փողոցներով։

Ցուստինիանոսի ժամանակ այս հրապարակը զարդարուած է եղել մետաղեայ և մարմարեայ արձաններով, սակայն այսօր այդ ամէնին փոխարինում են քարերի և կեղտոտութեանց կոյտեր... Ամբողջ հրապարակի վրա կայ միայն երկու հնութիւն։

Առաջին Այեա-ՍոՅիայի կառուցանողի կողն միապաղաղ մեծ քարից, որ շնորհիւ անգլիացիների, վանդականատ է։ պատուանդանի վրայ նշմարւում է յունարէն արձանագրութիւն...

Երկրորդ՝ սրանից ոչ հեռու կանգնած է այսպէս կոչուած Օձասիւնը, որն աշխարհիս ամէնահին յիշատակարաններից մէկն է։ Հերոդոտը ևս յիշատակութիւն ունի այս մասին։ ասքերուած պէտք է լինի կոստանդին կայսեր օրով Դելֆեան տաճարից։ Այս պղնձեայ երեք օձերն, իրենց պոչերը յենելով սեան պատուանդանին և հիւսուելով միմեանց, բարձրանում են ուղ-

դաձիդ սեան վրայ և վերեի մասում գլուխները հեռանում են միմեանցից դէպի զանազան կողմեր։ Երեքի գլուխներն էլ ամբողջովին չը կան։ Ասում են, թէ Մոհամմեդ Ա-ը Պօլիսը տիրելու ժամանակ, երբ մտել է այստեղ, սրի մի հարուածով կտրել է մէկի գլուխը, իսկ միւս երկուսինն էլ յետոյ տաճիկներն են ջարդել, կարծելով, թէ գանձ կայ թաքնուած այստեղ։

Կայ մի այլ սիւն ևս քանդակներով, ոչ այնքան խորհրդաւոր։ Ամէն ինչ այստեղ տգիտութեան աւերիչ ձեռքը ոչնչացրել է և եղած արձաններն ու քարերը յափշտակուել ու գործադրուել են զանազան բաների համար։ Մարմարեայ արձաններից ոչինչ չի մնացել, իսկ մետաղներն էլ վերածուած են թնդանօթների։

Պատմում են, թէ Մոհամմէդ Ա-ը, կտրելով այդ օձի գլուխը, թաքցրել է սեան տակ նրա հետ և մարդկային բոլոր հիւանդութիւններն ու ցաւերը և, որպէս զի չ'փախչեն, ծածկել է քարերով։ Այդ ժամանակից էլ այստեղ եկող բոլոր հիւանդները մօտենում և քար են նետում սեան, որպէսզի իրենց հիւանդութիւնն էլ այլև յետ չ'դառնայ։

Այս մոլեռանդ սովորութիւնն առաջ, նախ քան վանդակապատելը, շատ էր կրկնւում, և ամէն կողմից հիւանդները գալիս էին մի քարի տակ ծածկելու իրենց հիւանդութիւնը։ Վանդակապատելուց յետոյ տաճիկներն ասում են, թէ բարբարոսներն այդ արել են դիտմամբ, որս պէսզի մուսուլմանները մահանան։ Ասողներ էլ

կան, թէ այն օրից, ինչ վանդակները դրուեցան, Պօլսում էլ սաստկացան զանազան անասելի հիւանդութիւններ ու ցաւեր։

Այս նախապաշարման հետևանքն է, որ այսօր ինկ Ա.հիմեդիէ կոչուած մեշիդի դրան խմբուած հիւանդների բազմութիւնը քարեր է որ նետում է վանդակի ներսը, իւր հիւանդութեան միակ պատճառը այստեղ փնտաելով...

Ղալաթիա:

” Արեգակն արդէն թաք էր կացել լեռան ետևում, երբ մենք Ստամբուլից մտանք Ղալաթիա։ Այս երկու քաղաքամասերը միանում են փայտեայ երկու կամուրջով։ առաջինը՝ հին, իսկ երկրորդը՝ նոր, որ իւր կառուցանողի անունով կոչւում է Վալիդէ-Սուլթանիի Էկօրմիսի (Մայր թագուհու կամուրճ)։ Երկու կամուրջներն էլ անց ու դարձ անողների վրայ սարսափ են աղուում իրենց խախուտ դրութեամբ։ Ամէն մի անց ու դարձող վճարում է 10 փարա (երկու կոպէկ)։

Ղալաթիան էլ իւր առանձնայատուկ կեանքով մի այլ պատկեր է ներկայացնում։ Տեսանք, որ միայն Ոսկեղջիւրը չէ, որ Ստամբուլը բաժանում է Ղալաթիայից, այլ և բնակիչները տարբերում են իրենց պարապմունքներով, կենցաղավարութէամբ։ Տիրապէտող տարբն այստեղ յոյնն է, որին և պիտի վերագրել այն կենդանութիւնը, որ տիրում է այստեղ։

Հալաթիան սկսում է հին կամրջից և վերշանում է Թոփխանէ կոչուած տեղում, որի շարունակութեան վրայ Բոսֆորի ափով տեղաւորուած է տաճկական նոր բնակչութիւն, որ տեղափոխուած պէտք է լինի այստեղ այն ժամանակ, երբ սուլթանները Ստամբուլի Սերայլ (առաջուայ պալատը) կոչուած տեղից փոխադրել են իրենց աթոռն այժմեան տեղը։ Մինչև այսօր էլ նրանք ապօռում են հին կեանքով։ Ասում են, թէ երեկոյեան ժամը 6-ից յետոյ այստեղ անց ու գարձ անելը վտանգաւոր է, թէև մի քիչ վերե, Պերայում, ազատ և ապահով ման գալ կարելի է նոյն իսկ գիշերուայ ժամը երկուսին։

Մեր աջ կողմը թողնելով դէպի Թոփխանէ տանող մեծ փողոցը, խմբերի բաժանուած (բոլոր խմբերի համար գիշերելու տեղերը որոշուած էին առաջուց), մտանք մի կեղտոտ, քարքարոտ փողոց։ Խառնիճաղանն ամբոխի աղաղակներից և շների հաշոցներից խլանալ կարելի էր։ Մեզ շրջապատող 3-4-5 յարկանի տներն էլ այնքան են սղմուած ու մօտիկ, որ մարդ դժուարանում է երեսակայել, թէ ցերեկով արևի մի ճառագալթ անգամ կարող են տեսնել այս խոնաւու կեղտոտ փողոցները։ Ըստ երեսութիւն, այս գեռ լայն փողոցներիցն էր, որովհետեւ ձիաքարշի երկաթուղիներ էլ կային։

Մի քանի ըովէից վրայ համաւ ձիաքարշը, որի ազդարարող զանգակին փոխարինում է ձիաքարշի առջևից վաղող մի տաճիկ, մի ձեւքում ունենալով փշելու խողովակ—ամբոխը

ցրելու և ճանապարհ բաց անելու համար, իսկ միւսում՝ բարձր բռնած դրօշակ։

Հարիւրաւոր շների խմբակներ թրիւ են գալիս փողոցի մէջ, ամէնևին ուշադրութիւն անգամ չգարձնելով անցորդների վրայ, և զարմանալի պաշտպանութիւն են գտնում տաճիկներից։ Այս հանգամանքի շնորհիւ է, որ Պօլաւմ շներն այնքան են բազմացել, որ այսօր նրանց քանակն աւելի է համարւում մարդկանցից։ Նրանք գիշերցերեկ փողոցումն են ապրում և իրենց մնունգն էլ այնտեղից ստանում։

Շները Պօլսի համար անհրաժեշտութիւն են համարւում, որովհետեւ առանց գրանց Պօլսի փողոցները կը լցուէին կեղտոտութեամբ։ Դրանք, եթէ կարելի է ասել, դռնապանների պաշտօն են կատարում։

Առաջին անգամից դժուար է որոշել, թէ ամբոխն ինչ ազգութիւններից է բաղկացած։ Նպամանաւանդ հայը և ցոյնն այնքան նմանութիւն ունին, որ նոյն իսկ անկարելի է տարբերութիւն գտնել։

Տների ներքնի յարկերը խանութներ են, իսկ երկրորդ յարկը՝ ըստ մեծի մասին սրճարաններ, 3-ըդ-և 4-րդ յարկերն էլ՝ բնակարաններ։

Առևտուրը Ձալաթիայում բաւական ծաղկոծ է. վաճառւում է ամէն տեսակի ապրանք։ Ահա ձեր առաջ տաճիկը, մակեղզնացին իրենց փոքրիկ վարունկի և հացի խանութներում, պարսիկը՝ իւր թէյի և թութունի, բուլղարացին պանքի ու կանաչու խանութում, յոյնը, հրէան,

ալբանացին՝ շագանակի, հալվայի, հին հագուստների, կօշիկների, կաշիների ահազին կոյտերի ու կապոցների մօտ նստած... Ահա հայ արհեստաւորները—սեբաստացի բաղնիսպանը, ակնեցի հացագործը կամ սեղանաւորը, կեսարացի ներկարարը կամ ածուխ-վաճառողը, վանեցի և մշեցի մշակը, տիգրանակերտցի կիր եփողը, բալուցի որմնադիրը կամ ճարտարապետը և այլն։ Սրճարանների մեծ մասը յոյների ձեռքին է։

Ասում են, թէ, չ'նայելով, որ տաճկացօրէնքով արեգակը մայր մտնելուց յետոյ առետուր անեն այլու կարելի չէ, բայց և այնպէս նրանք շարունակում են մինչև կէս գիշեր և նոյն իսկ ամբողջ գիշերը։ Մինչև անգամ ցոյց տուին այնպիսի սրճարաններ ու խանութներ, որոնք իբրև թէ տանիեակ տարիների ընթացքում փակուած չեն։ Իսկ կառավարութեան սահմանած օրէնքի անգործադրութեան համար, եթէ պէտք է նկատողութիւնից ազատուել, փրկարար է հանդիսանուել մի թեթև բախշից։ (Կայսերական տօներին Պօլսում խանութները բաց են մնում),

Մութը վաղուց վրայ էր հասել և մեր խմբերը բաժանուել էին միմեանցից, մեր խումբը պիտի գիշերէր ոռւսաց դեսպանատան դպրոցում (Կալաթիայում)։ Մեր շրջապատի անսովոր տեսարանից սակայն դժուարանում էինք բաժանուել։

Սրեր մայր մտնելուց յետոյ սրճարաններում, խանութներում և նոյն իսկ փողոցնե-

րում իսկոյն վառւում են գոյնզգոյն լապտերներ, և այդ կիսալուսաւորութեան տակ տները, խանութները, սրճարաններն ու փողոցները՝ կարծէք թէ, աւելի գրաւիչ են թւում։ Երբ մենք անցանք մի այլ փողոց, այնտեղ լապտերների լոյսն արդէն հանգչելու վրայ էր և փողոցներում ու խանութներում խորին մթութիւնն էր սկսում թագաւորել. մարդ շփոթութեան մէջ է ընկնում և շրջապատի խաւարը սարսուռ է ազդում, թէն անց ու դարձ անողներ կան այդ մթութեան մէջ։ Իւրաքանչիւր նկարչի համար այս տեսարանը մի այնպիսի գեկորացիա է, որ ոչ մի երեակայութիւն սատեղծել կարող չէ։ Ամբոխն անց ու, դարձ է անում, բայց բոլոր դէմքերն էլ մթութեան մէջ են. մարդ դժուարանում է նոյն իսկ իւր ընկերոջ ճանաչել մի քանի քայլ հեռաւորութիւնից։

Մեր առաջնորդ ոռւս աբեղան, վերջապէս մի հինգհարկանի նեղ և բարձր տան առաջ կանգնելով, հրաւիրեց ներս, ասելով, թէ այս է մեզ համար պատրաստած շէնքը։

Այս շէնքը ոռւսաց դեսպանատան շէնքն է, որտեղ սովորում են մօտ 40 հոգի, երկու սեռից էլ։ Բացի այդ կան և 12 հոգի լսողներ։ Դպրոցում աւանդում են կրօն, ոռւսաց, տաճկաց, յունաց և ֆրանսիական լեզուները, թուաբանութիւն, եկեղեցական պատմութիւն, ոռւսաց պատմութիւն և աշխարհագրութիւն։ Շէնքն ընդհանրապէս ներսից անձաշակ չէ, բայց ուսումնարանի շէնք լինելու յարամարութիւնից շատ հեռու է,

Իսկ կրօնական միաբանութեան համար ամէն յարմարութիւններ ունի: *)

Որքան էլ ճանապարհից դադրած, բայց չկարողացանք գիշերը հանգիստ առնել. մի կողմից մեր ստացած տպաւորութիւնները, միւս կողմից փողոցի պահապանների աղմուկները հանգիստ չէին տալիս (գիշերապահները, սուլիչների փոխարէն, յատուկ պատրաստած ձեռքի հաստ փայտերը քարերին խփելով էին միմեանց ձայն տալիս):

Օսօմանեան քանզարան:

Որոշման համաձայն յաջորդ օրը բոլոր խմբերն էլ առաւտօնեան ժամը 10-ին ուղևորուեցին Ստամբուլ թանգարանները դիտելու: Կէս ժամից յետոյ մտանք Ստամբուլ: Մեծ և լայն քարեղին դռներից ներս մտնելուց յետոյ, մեր առաջ մի նոր տեսարան բացուեց. ահազին քանակութեամբ արձաններ անխնամ թափթփուած են ճանապարհի երկու կողմի վրայ էլ. Չ'գիտեմ, հիացմունքս թէ բարկութիւնս զսպել չկարողանալով, դուրս ելայ ճանապարհից և մտայ դիմացի այգին, որը վերստին լիքն էր անխնամ թափթփուած, այս ու այն կողմն ընկած արձաններով: Քանի գնում, տեսարանն ինձ վրդովում էր, պարտէզն ինձ համար թանգարան էր թւում, ամէն քայլափոխում գլխից կամ թերից զրկուած արձանները, կարծէք

*) Այս տեսակ հաստատութիւններ բոլոր ազգերն էլ պահում են և առանձին միսարա ունին կատարելու:

թէ, խօսում են անցորդի հետ, ողբալով իրենց վիճակը:

Տէր Աստուած,—բացականչում է մարդակամայից,—ինչո՞ւ մարդկանց այսպէս տարբեր հոգով և շնորհով ես ստեղծել. մէկին տուել ես ստեղծագործելու հանձար, վառ երևակայութիւն, իսկ միւսին՝ աւերելու, քանդելու ու ոչնչացնելու, ինչ որ աստուածային, գեղեցիկ և շնորհալի է:

Այսպիսի խոհերով ու կամաց քայլերով միւս խմբերի հետ բարձրացայ դէպի մեր գիմացի հսկայական շինութիւնը տանող կիսամարմարեայ աստիճաններով Օտտոմանեան կոչուած թանգարանը: Մեր աջ կողմը նայող դուռը բաց արաւ մեր առաջ արձանների մի հրաշալի տեսարան, որի մէջ աչքի էր ընկնում իւր զարմանալի մեծութեամբ ու գեղեցկութեամբ այսպէս կոչուած Լալկան կանանց կամ եղերամայրերի մարմարեայ սարկօփազը (շիրիմ, դամբարան կամ մահալան), որը համարւում է Խ-րդ դարու գործ (Ք. ա.):

Այս սարկօփազի վրայ փորագրուած են կանացի ամբողջական նկարներ 18 տեսակ, որոնք ներկայացնում են լացող կնոջ հոգեկան տխուր վիճակի տարբեր արտայայտութիւնները: Նկարները դասաւորուած են այսպէս*) և բաժանում են իրարից փոքրիկ և նուրբ բարձրաքանդակ (բարել'եֆ) խոյակներով, որոնք աւե-

*) 6□6
3

Մոգեղեցկութիւն են տալիս ինչպէս նկարներին, այնպէս և սարկօփագի ընդհանուր պատկերին։ Ամէն մի պատկեր և դէմք էլ ունի իւր առանձին արտայայտութեան ձևը, իսկ ընդհանուրը միասին տիրութիւն է բերում մարդու հոգուն։ Ամբողջ սարկօփագը մարմարեայ է. նկարներն այնքան նուրբ և պարզ, որ նայելիս կարծում ես, թէ խօսում են հետդ։

Թանգարանի ձախ դուռը բաց արաւ մեր առաջ Ալէքսանդրեան կոչուած մարմարեայ սարկօփագը, որը իւր նրբութեամբ ոչ միայն ոչնչով յետ չի մնում առաջնից, այլ և գերազանցում է ըստ ամէնայնի։ Սարկօփագի մի կողմը ներկայացնում է Ալէքսանդր Մակեդոնացու պատերազմը պարսիկների դէմ, իսկ միւս երեսի վրայ՝ նրա որսը. — Ալէքսանդր Մակեդոնացու ամբողջական պատկերը անսովոր կենդանութեամբ է երևում թէ կոռուի և թէ որսի ժամանակ։

Օտտոմանեան թանգարանում այս երկու սարկօփագներից զատ կան շատ արձաններ, բայց ոչ այնքան հետաքրքիր։ Սակայն այս երկու սարկօփագներն էլ բաւական են օտարների ուշադրութիւնը գրաւելու և նոյն իսկ Ամերիկայի հագէտներին յատկապէս Պոլիս բերելու համար։

Նոր թանգարանը զարդարուած է յունական գեղարուեստով ու սարկօփագներով, որոնք ընդհանուր առմամբ Սիդոնեան են կոչում։ Տեղափոխուած են այստեղ 1887 թ. հին Սիդոն քառաքի շրջակայքից թանգարանի վերատեսուչ

Համդի-բէզի օրով։ Այդ քաղաքի անունով էլ Սիդոնեան են կոչւում։

Նոր թանգարանի ուղիղ դիմացը գտնւում է հին թանգարանը, որը նորի համեմատութեամբ փոքրիկ շէնք է։ Այստեղ արդէն ուշադրութեան արժանի շատ բան չկար։ Սովորական արձաններն ու արձանագրութիւններն են, ինչ որ ընդհանրապէս սովորական թանգարաններում տեսնում է մարդ. հին դրամներ, կաւեայ ամանների կտորներ, կան և հայերէն երկաթագիր մի քանի արձանագրութիւններ։

Բեզիսէ:

Երբ թանգարանից դուրս ելանք, արդէն ժամը երկումն էր, դուրս անձրև էր շաղում, այլևս հնարաւոր չէր խմբովին պտտելը, ուստի յետ պիտի դառնայինք մեր կացարանները։ Օգտուելով աղատ ժամանակից, վակ կառքով դիմեցի հայոց պատրիարքարան։ Այստեղ յայտնեցին, որ ամէնապատիւ սրբազն պատրիարք Օրմանեանցն ապրում է Պերայում, և որովհետև յաջորդ օրը Պօլսին հրաժեշտ պիտի տայինք, ուստի սրբազն պատրիարքին տեսնելու փափագն անկատար պիտի մնար կամայ-ակամայ։

Կառքը դարձին, մի քանի խուլ փողոցներից անցնելուց յետոյ, մտաւ քիչ թէ շատ ուշադրութեան արժանիք Բեզիսէ կոչուած կտաւագործների շուկան, Ղալաթիայի կամրջից ոչ այնքան հեռու։

Այստեղ, ըստ երեսութին, առևտուրը հայերի և յոյների ձեռքին է։ Խանութներն իրենց քիչ թէ շատ կանոնաւորութեամբ աչքի են ընկնում։ Առաջին իսկ հայեացքից կարելի է նկատել հայի, յոյնի և տաճկի առաւել և պակաս կողմերը։ Շուկայի մի անկիւնում տիրում է շարժողութիւն, կեանք, իսկ տաճիկների մասում մեռելային խաղաղութիւն։ Տաճիկը իւր սովորական չալմայի մէջ (փաթթոց) ծալապատիկ նստած է խալիչայի վրայ լուռ ու մունջ…

Շուկան լաւ դիտելու համար կառքը կանգնեցնել էի տուել։ Մի քանի ըուղէում շրջապատեցին կառքը մի խումբ մարդիկ անհասկանալի դիմումներով։ Ինչքան ուզում էք, հրաժարուեցէք խօսելուց, նրանք իրենցն են շարունակում։ Խօսակցութիւնը երբ տաճկերէնի փոխուեցաւ, բացատրեցի, որ անցորդ եմ, միայն դիտում եմ շուկան։ Երևաց, որ սրանք այսպէս կոչուած միջնորդներ են, որոնք գնողներ են որսում այս կամ այն խանութն առաջնորդելու, որտեղից իրենք էլ բաժին ունին սուանալու թէ գնողից և թէ վաճառողից։ Դրանցից երեքը հրէաներ էին, երկուսը՝ բուլղարացիներ։

Արքայական կղզիներ:

Ժամը երեքն էր, երբ մտայ Ղալաթիա։ Սնձրել դադարել էր արդէն։ Տեսնելով Ոսկեղջրի ափին մի խումբ ընկերներ, դիմեցի այնտեղ և միացայ նրանց խմբի հետ Սկիւտար և Արքայա-

կան կղզիներ ուղևորուելու։ Յունական փոքրիկ շոգենաւը շուտով, անցնելով Ոսկեղջիւրը, մտաւ Բոսֆոր և ապա Մարմարա ծովը։

Մեր դիմացն է Սկիւտարը։ Յամաք չ'պիտի իջնէինք, բայց այնքան մօտեցանք, որ ամէն ինչ տեսանելի էր և մարդկանց ձայնեցը լսելի։ Մեզ առաջնորդող գաւասի բացատրութիւններից կարելի է եզրակացնել, որ Սկիւտարն իսկապէս, որպէս Պօլսի հին մասը, սիրելի է ամէն մի տաճկի համար։ Թէև մի առանձին կեանք ու կենդանութիւն չ'կայ այնտեղ, ինչպէս Ղալաթիայում և Պերայում, բայց և այնպէս տաճիկն առանձին հաճոյքով է ման գալիս Սկիւտարի խուլ փողոցներում, աղօթում իւր նախնեաց մզկիթներում, զբօնում նոճիների հրաշալի անտառներում, որտեղ ամփոփուած են նրանախնեաց շիրիմները։ Որքան տարօնինակ է անցորդի համար այս ամէնը, այնքան էլ բնական և հասկանալի տաճկի համար։

Գաւասը ցոյց տուաւ մեզ նոճիների մի անտառ, ասելով. «ահա այս մեր ամէնամեծ գերեզմանատունն է»։ Մի քիչ հեռուից նա ներկայացնում է գոյնզգոյն գորդի ձև, որտեղ կան և միլիօնաւոր մեռեալներ։ Այս մեռեալների թագաւորութիւնը իրեն լուռթեամբ, գունաւոր գերեզմանաքարերով հեռուից իսկ սարսափ է ազդում մարդու վրայ։ Գաւասն աւելացրեց, թէ այստեղ միևնոյն ժամանակ նրանց զբօսավայրն է և առանց սեռի և դասակարգի խտրութեան ամէնքն էլ զբօնում են այստեղ։

Գաւասը ցոյց տուաւ մի այլ գերեզմանատուն, նոյնպէս շրջապատուած նոճիներով, ասելով, թէ այս էլ անգլիացւոց զօրքերի գերեզմանատունն է, որոնք ընկել են ոռւսանգլիական պատերազմի ժամանակ, 1854—1856 թուականներին։ Այս գերեզմանատունը իւր գեղեցկութեամբ և կանոնաւորութեամբ տաճկական գերեզմանատան հակապատկերն է ներկայացնում։ Այստեղից արդէն պարզ երեւում են Սրբայական կղզիները, որոնցից աւելի հեռու, երկնակամարին կպած, երեւում են Փոքը Ասիայի բարձրաբերձ լեռները։

Սրբայական կղզիները հրաշալի պատկեր են ներկայացնում ծովի վրայից։

Կղզիներից մի քանին իրենց ճոխ բուսականութեամբ, բնութեան գեղեցիկ տեսարաններով նմանւում են Մարմարա ծովի մէջ բուսած մի փունջ ծաղկի։ Հեռուից կղզիները թէև միացած են երեւում, բայց իսկապէս փոքրիկ կղզիների մի խմբակցութիւն է (ընդամէնը 9 հատ), որ ընդհանուր անուամբ կոչւում են Սրբայական։ Հին հելլենացիք անուանում էին Դեմօնիզի, այսինքն ժողովրդական կամ հասարակական, ազգային։ Յետոյ Բիւզանդական գաղաքանութեամբ կոչւում են Սրբայական։ Այսինքն քահանայական կղզիներ։ Բայց երբ կղզիները ընկել են իշխանների կամ արքաների ձեռքը, նրանք էլ անուանել են արքայական կամ իշխանական։

Այս կղզիները բիւզանդական պատմութեան մէջ որոշ դեր են կատարել. եղել են ինչպէս

ուրախութիւնների ու գուարճութեանց վայր յատկապէս պալատականների ու արքայազունների համար, այնպէս էլ բանտ, որտեղ մահացրել են այս կամ այն յանցաւոր դքսին կամ պալատականին։ Այստեղ մինչև անգամ զանազան թագաւորների և կայսրների աչքի լոյսից և գլխից զրկել են... Բիւզանդական յայտնի գործիչների և պատրիարքների համար երկար ժամանակ պատժարան է եղել։ Հաւանականօրէն մեր Մեծն Ներսէս Հայրապետն էլ այստեղ պէտք է աքսորուած լինի։

Այս կղզիներից միայն չորսի վրայ բնակչութիւն կայ։ Յայտնիներն երկուսն են — Հայկի և Պրինկիպօ կոչուածները, որոնք իրենց ճոխ բուսականութեամբ, եկուոր և նոյն իսկ մշտական բնակչութեան մեծամասնութեամբ պօլսեցիների նախանձը կարող են շարժել։ Այս կղզիների վրայ ըստ մեծի մասին ապրում են եւրոպացիներ, հայեր, յոյներ, իսկ տաճիկներ շատ քիչ։ Պրինկիպօ կղզու վրայ կայ և հայոց եկեղեցի։ Այս կղզիներից մի քիչ հեռու կայ մի կղզի ևս, առանձնութեան մատնուած, որը կոչւում է Ինսիզադա (անմարդաբնակ կղզի)։

Երկնքի վրայ ամպերը սկսել էին աւելի սկանալ և երբեմն հեռու հորիզոնում, ասիական լեռների բարձունքում, երեւում էր մութ ամպերի միջից երկար տարածութեան վրայ կայծակի բեկ-բեկ երկայն շղթան։ Մարմարա ծովը սկսել էր անհանգստանալ և տաշեղի նման օրորել մեր նաւը, քամին սուլում էր, ցամաքի

Եղերքների փոքրիկ նաւակները, կարծէք թէ, անգործութեան էին մատնուել: Ժամը եօթն էր, որ վերադարձանք Ղալաթիա: Բաժանուելով լնկերներից, ոռուս աբեղայի առաջնորդութեամբ գնացի Ղալաթիայում գտնուած հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին: Նեղ, ծուռ ու կեղտոտ փողները սկսուեցին վերստին: Քսան ըռպէից յետոյ, շնորհակալութիւն յայտնելով աբեղային, հասայ Ս. Լուսաւորիչ եկեղեցու բակը: Ի դէպ ասեմ, որ Պօլսում եկեղեցիները չեն փակում:

Ժամերգութիւնը վերջացել էր, բայց գեռաղօթողներ կային ներսը, երբ մատայ եկեղեցի: Այստեղ մի քանի վայրկեան մնացի անշարժ. կառկածում էի, չլինի թէ մտել եմ օտար եկեղեցի, որովհետեւ առաջին հայեացքից չէր կարելի որոշել: Երեք մեծ կամարներ իրենց առանձին-առանձին սեղաններով միանում և կազմում են մի ամբողջութիւն: Սեղանները ցած, ժողովրդի համար նստարաններ դրուած: Մօտեցայ միջի սեղանին,—այնտեղ շարուած հայերէն գրքերը փարատեցին կասկածաւ:

Խնդրեցի եկեղեցի մտնող երիտասարդին, եթէ հնարաւոր է, կոչել ինձ մօտ հերթապահ. քահանային: Մեծ եղաւ պարոնի զարմանքը, երբ (ճանապարհորդական հարեն հետ խօսողը ներս մտաւ եկեղեցի մի կարճահասակ, հասակն առած, բայց աշխոյժ քահանայի: Մի քանի հարց ու պատասխաններից յետոյ խնդրեցի առաջնորդել դէպի ժառանգաւորաց դպրոց, որը գտնուում

է նոյն եկեղեցու բակում, դէպի աջ, նախ քան եկեղեցի մտնելը: Եկեղեցու մասին քահանան շատ բացատրութիւններ չ'տուաւ. միայն յայտնեց, որ այս եկեղեցին մօտ 15 տարի է, ինչ այսպէս միացրել են, առաջ ջոկ-ջոկ եկեղեցիներ էին, և ինչ որ ենթադրութեամբ կապեց Ղըմիր գաղթականների հետ:

Եկեղեցու բակում մեր խմբին միացաւ մի երրորդ քահանայ ևս: Մտանք ժառանգաւորաց դպրոց (չորսդասեան): Նեղ, կեղտու ու հնացած աստիճաններով ելանք վերին յարկը, որտեղ և վարժարանի վերատեսչի հիւրասիրութիւնը վայելելուց յետոյ, դիտեցի բոլոր դասարանները, մատենադարանը, ֆիզիկանոցը և ուսումնարանի կտուրը, որ ծառայում է աշակերտների համար իրեն զբոսարան և մարզարան: Չէր կարող իկարկէ իւր ունեցածով պարծենալ այդ ուսումնարանը—իւր ալքատիկ մատենադարանով, ֆիզիկանոցով և այլ յարմարութիւններով, բայց եթէ մինչև այսօր էլ այդքան կարողացել են պահել, այդ էլ մեծ պարծանք է:

Ո՞վ է տուել հային մի խաղաղ անկիւն, որ կարողանայ գիտութեամբ պտղաբերել իւր խղճուկ կեանքը: Միշտ հալածանք, ճնշումներ, ամէն քայլափոխում նիւթական և բարոյական հարուած, սահմանափակումներ և այլն: Այս գեռաւական չէ—պատմութեամբ, սրբագործուած ներքին երկապաւակութիւն, անմիաբանութիւն, չկամութիւն, մեծամտութիւն, սնափառութիւն, անհեռատեսութիւն... Այսօր իսկ մեզ բախտաւոր

կը համարենք, եթէ թողնեն մեր ձեռքին այն, ինչ որ մեր նախնիքներից ստացել ենք իբրև աւանդ...

Երկար ժամանակ մտքեր փոխանակելուց յետոյ, որոնց մասին այստեղ խօսելը դուրս է մեր նպատակից, հրաժեշտի ողջոյն տուի և վերոշիշեալ երիտասարդի ուղեկցութեամբ եկայ իմ օթևանը, որովհետեւ ժամը 8-ից յետոյ բոլոր դոները փակ պիտի լինէին.

Պերա:

Արեգակը մայր էր մտել, բայց խաւարը դեռ չէր ծածկել երկիրը: Ընկերներով բարձրացանք Պերա: Ղալաթիայից վեր տանող նեղ և քարքարոս փողոցները միանում են Պերայի գլխաւոր փողոցի հետ, որը իւր շրջապատի զարդարանքներով շատ գեղեցիկ և ճաշակով է: Փողոցը մի վերստ երկարութիւն ունի և երկու կողմից էլ զարդարուած է գեղեցիկ շինութիւններով, խանութներով և սրճարաններով: 4-5-6 յարկանի բնակարաններն էլ դէպի փողոց նայող լուսաւոր ու մեծ պատուհաններով և պատշգամբներով մի առանձին գեղեցկութիւն են ներկայացնում: Ղալաթիայի խառն ու անկանոն պատկերը միանգամից փոխւում է այստեղ:

Պերան իւր առևտրով, սրճարաններով, վաճառատներով, ճաշարաններով և թատրոններով ներկայացնում է մեր ժամանակի ճաշակի և պահանջների համապատասխան մի եւրոպական քա-

ղաք, իսկ Ղալաթիան իւր մանր չարչիներով, ծուռ, նեղ ու կեղասոտ փողոցներով՝ ասիական: Սակայն երկու քաղաքամասերն էլ իրենց ներքին կեանքով, նիստ ու կացով շատ շեն տարբերուում իրարից: Տաճիկների համար կեանքը միօրինակ է ամէն տեղ: Գուցէ այս կապ ունի այն հանգամանքի հետ, որ Պերան Ղալաթիայի շարունակութիւնն է կազմում և բազմաթիւ փողոցներով միացած է Ղալաթիայի հետ,—մի հանգամանք, որ կարող է մեծապէս նպաստել կեանքի միօրինակութեան:

Այլ է Պերայի գլխաւոր փողոցի շուրջն ապրողների կեանքը: Այստեղ եւրոպականութեան թունդ տեսակը խառնուած է անիականութեան հետ: Փողոցով անց ու դարձ անող հոծ բազմութեան մէջ դուք յաճախակի կը տեսնէք եւրոպական տարազներ, կարմիր ֆէսերի փոխարէնց ցիվնդը և այլ ձևերի գլխարկներ: Այստեղ աւելի շուտ և հեշտ կարելի է բան հասկանալ և հասկացնել, քան Ղալաթիայում. այստեղ տաճիկն անգամ ֆրանսերէն է կոտրատում: Շնորհիւ այն հանգամանքի, որ այստեղ բնակչութեան աչքի ընկնող մասը եւրոպացիներ են, շաբաթուայ ընթացքում մի քանի անգամ արտասովոր կենդանութիւն է տիրում:

Պերայի մեծ փողոցը սկսւում է ոռւսաց գեսպանատնից և շարունակւում է մինչև վերջերս բացուած գերմանական զինուրական ուսումնարանը, որաեղից և փողոցը ճիւղաւորուում է երկուսի. մէկն անցնում է ոռւսաց հիւանդանոցի

մօսով, իսկ միւսը տանում է դէպի սուլթանական պայտաները: Վերադարձին ամբողջ փողոցը լուսաւորուած էր և այդ լուսաւորութեան ներքոյ տեսարանը գեղեցկանալուց զատ, կեանքը, կարծէք թէ, աւելի կենդանութիւն էր ստացել առվորականից:

Պերայի վաճառականութիւնը կենտրոնացած է ըստ մեծի մասին ֆրանսիացիների, անգլիացիների, աւստրիացիների, իտալացիների և վերջերս էլ գերմանացիների: Ճեռքը: Միւս ազգաբնակութիւնները զբաղւում են մանր առևտութիւն: Յոյն չարչիներն ինչպէս այստեղ, այնպէս և ամբողջ Պօլսում, սոսկալի են: Արանց մօտ հրէան կորցնում է իրեն, զգում է իրեն խարեբայութեան անընդունակ: Որ յոյներն ընդունակ են խարեբայութեան, ես համոզուեցի Յունաստանում:

Հայ վաճառականների մասին աակայն ընդհանրապէս լաւ կարծիք ունի հասարակութիւնը: Պօլսի հայութիւնն աչքի ընկնող դեր է խաղում, քան յոյնը կամ հրէան: ապրում է իւր աշխատանքով, գերադասում է կրթութիւնը, յառաջդիմութիւնն ու հայրենասիրութիւնը: Կրակոտ, վառվուն, աշխատասէր, հայրենասէր են ոչ միայն Պօլսոյ, այլ և ընդհանրապէս տաճկահայերը, ինչպէս տեսայ Զմիւռնիայում և նոյն իսկ Աթէնքում: Այս առաքինութիւնների շարքում սակայն հաշւում են անվստահելի բարեխղճութիւն և փոփոխամտութիւն:

Հայի ընտանեկան կեանքի վերաբերեալ կարելի է դարձեալ պարծենալով ասել, որ իմ խօսակիցների կարծիքը կարող է պատիւ բերել

հային: Առանձնապէս առիթ եմ ունեցել լսելու մի քանի տեղացիների կարծիքը, որոնց մէջ բացի ուռաններից կային և տաճիկներ: ամէնքն էլ վկայեցին և խոստվանեցին հայի ընտանեկան սրբութիւնը, աւելացնելով, թէ բացառութիւնների մասին չենք խօսում: Իսկ յոյների մասին մասնաւորապէս իրենք յոյներն անդամ վատ են խօսում և իրենց ընտանեկան բարոյական կեանքը թունաւորուած ու աւերուած համարում:

Ընդհանուր ուշադրութեան արժանի է և այն երեսոյթը, որ այստեղ եւրոպացիք առանձին ոգեսորութեամբ և ջանքերով աշխատում են բազմապատկել իրենց կրթական հաստատութիւնների թիւը և մատաղ սերնդի կրթութեան ու դաստիարակութեան գործին ղեկավար հանդիսանալ:

Այս տեսանկի դպրոցները, բացի զուտ կրթական նշանակութիւն ունենալուց, նպաստում են և եւրոպական տարրի զօրեղացման: Բացի այս հաստատութիւններից կան և անգլիական, ամերիկական, ուռանական և այլ կրօնական հաստատութիւններ, որոնց նպատակն է բնիկների, հրէաների և ուրիշների մէջ իբրև թէ տարածել քրիստոնէական գաղափարներ: Պերայում ևս կան սոյն նպատակով գոյութիւն ունեցող բազմաթիւ սրճարաններ, որտեղ քրիստոնէական գաղափարները տարածելու պատրուակով մարդիկ են որսում:

Սովտաների մզկիթը:

Ցաջորդ օրը, որոշման համաձայն, պէտք է սուլթանական պալատներն այցելէինք, բայց չը

յաջողուեց: Սուլթանի տկարութեան պատճառով պալատ մուտք գործելն արգելուած էր, ուստի, թէև անձրև էր շաղում, Պերայում մի պտոյտ անելուց յետոյ, գնացինք սովորաների կամ դերվիշների մզկիթը, որը գտնւում է ոռոսաց դեպանատան դիմաց:

Դերվիշներին դուք պատահում էք Պերայում և Ղալաթիալում յաճախ: Նրանք իրենց առանձնայատուկ թաղիքից շինուած գլխարկով, շագանակագոյն, կանաչ և մոխրագոյն զգեստներով աչքի են ընկնում: Նոյն իսկ նրանց կարող էք պատահել փողոցի անկիւններում արևածաղիկ վաճառողների մօտ, ծալապատիկ նստած, ըստ մեծի մասին մաստակ ծամելիս:

Սովորաների աղանդի հիմքը ծածկուած է սրբազն աւանդութիւնների մթութեան մէջ կամ դիցաբանական երգերի մէջ: Սրանց կրօնական հանդէսները ներկայացնում են ժամանակը և տարուայ ամիսները և կամ մոլորակների պտոյտն արևի շուրջը: Կայ և մի այլ աւանդութիւն այդ աղանդի ծագման մասին. իբրև թէ Ալին, լսելով Մահմէդի յաղթութիւնները գետութերի դէմ, ուրախութիւնից խփեց ձիուն, որը և մի քանի անգամ պտոյտ եկաւ գարշապարի վրայ: Ահա մահմեդականների այս սրբի մի ակամայ շարժողութիւնը հիմք է ծառայում սոյն աղանդի, իհարկէ իսլամական կրօնին չ'ակասելով:

Աղօթարանի միջին մասը գլորածե վանդա-

կապատ է և ուղիղ մէջ տեղը կախուած բիւրեղնեայ ջահը, իսկ վանդակապատի չորս բոլորը միւս աղօթաւորների համար: Մզկիթի երկրորդ յարկը, սեղանի տեղի ուղիղ դիմացի մասը, որն առանձնացած է բարակ պատերով, յատկացրուած է երգիչներին, իսկ երգիչների օթեակի աջ և ձախ կողմերը՝ աեղացիներին և օտարականներին,—այդտեղ էինք և մենք: Մզկիթը լիքն էր երկսեռ բազմութեամբ: Երգիչների խումբը, ըստ երկութիւն, մեզ հետ սպասողական դրութեան մէջ էր: Վերջապէս երեաց պահապանը և ճանապարհ բաց արաւ: Շուտով նոր սկսուած շշուկը դադարեց և ամբոխը դրան կողմից ճանապարհ տուաւ շէյխին և մի քանի բոկորն սովորաների:

Շէյխը համարեա թէ ոչնչով չէր տարբերում միւս սովորաներից, բացի գլխարկի վրայի և կապից (զամբար): Երբ շէյխը հասաւ իւր տեղը, միւս սովորաները շէյխի աջ և ձախ կողմերում կանգնեցին կարգով, մի քանիսն էլ բարձրացան վերև և միացան երգիչների խմբին: Շէյխի մի նշանից յետոյ միւսներն անմիջապէս միաժամանակ գլուխները խոնարհեցին ի պատասխան շէյխի:

Մի քանի ըոպէ տիրեց խորին լոռութիւն և ապա լսելի եղան շատ մեղմ կերպով հնչուող խօսքեր, որ յետոյ, կարծէք թէ, միացաւ երգիչների ոնդային ձայնի հետ, ուժեղացաւ և ինչ որ դողդոջիւն և ախորժելի եղանակի փոխուեց: Այս միջոցին շէյխը և միւս սովորաները

ծնկաչոք նստեցին: Մի քանի ըռպէից յետոյ հնչւող ձայնին միացաւ սրնգի մելամաղձոտ ձայնը, որն խկապէս ցնցող տպաւորութիւն գործեց ամէնքի վրայ:

Սրինգը իւր ոլորապտոյտ ելմէջներով, քաղցը ձայնով, կարծէք թէ, պատմում էր ինչ որ ողբալի, տխրալի բան: Հայրենիքի կարօս սրտերը սկսեցին անսովոր բարախել, նամանաւանդ երբ սրնգի ձայնը մեղմանում, օդի ալիքների մէջ մարում ու համարեա թէ անլսելի էր դառնում... Բայց մի ըռպէից յետոյ դարձեալ դղրդում, կարծես թէ, բողոքում, ձչում... Մօտ քսան ըռպէից յետոյ սրնգի ձայնին միացաւ սրինգը միշտ գանգաւուում, վրդովում, յուզնակից լինում:

Թմբկահարի ձայնը հնչուելուն պէս շէյխն ու բոլոր սովաները զլուխները խոնարհեցին դէպի տակին և կանգնեցին: Շէյխը հազիւ նկատելի քերպով զլուխը դէպի առաջ շարժեց և դանդաղ քայլերն ուղղեց դէպի աջ: Միւս սովաները, խորը զլուխ տալուց յետոյ, մի այլ սովայի խոաջնորդութեամբ յետեցին շէյխին: Երբ շէյդարձեալ առաջուայ պէս, զիսի շարժում անեւ Այս ծիսակատարութիւնը տեղեց մօտ 10 ըռպէ, ապա ամէնքը բռնեցին իրենց նախկին տեղերը,

և վերստին լսելի եղաւ միայն սրնգի և թմբկի ձայնը:

Սովորաները, վայրկեանապէս իրենց վրայի սև գգեստները թողնելով և կանացի սպիտակ զգեստով ոտքի կանգնելով, աւագութեան կարգով մօտեցան շէյխին (շէյխը կանգնած էր անշարժ), խորը զլուխ տալով, շէյխի ձեռքը կամ շորը համբուրելով, անցան աջ կողմը և մի քայլ հեռանալով, սկսեցին պտոյտ գալ իրենց չորս կողմը, ինչպէս իլիկը: Հինգ ըռպէից յետոյ ամբողջ վանդակապատը լցուեց, եթէ կարելի է ասել, իրենց շուրջը պտտւող մարդկանցով,—մի այնպիսի անսովոր և սարսափելի տեսարան, որ նայել անգամ դժուար է. մարդու աչքերը շիռթւում և զլուխը սկսում է պտտաւել: Բայց զարմանալին այն է, որ այդ սովաները ոչ միայն չեն թուլանում, ընկնում, այլ քանի զնում, չնայնքան ոգեհորւում են: Մարդ երեմն մոռանում է, որ սուրբ տեղ է գտնուում և մի խումբ աղօթողների է հանդիսատես:

Այս պտոյտը շարունակւում է մինչև նուագածութեան դադարումը, ապա ամէնքը կանգնուում են իրենց նախկին տեղերը, վերստին իրենց վրայ առնելով սև գգեստը: Վայրկեանաւ լուսութիւնն ընդհատում է շէյխը «սալամկան» լուսութիւնն ընդհատում է շէյխը «ասլամկիւմ»: Միւսները, խորը զլուխ տալով, պապիք»-ով: Միւսները, խորը զլուխ տալով, պապիք»-ով: Ալիքիւմ-սալամ»: Երեք անտասիանում են. «ալիքիւմ-սալամ»: Կրեք անգամ կրկնելուց յետոյ, շէյխը կամացուկ քայլերով դուրս է գալիս:

Պոլոսում այս տեսակի մզկիթներ շատ կան,

բայց ամէնից սարսափելին Սկիւտարինն է,
որտեղ կրօնական ջերմեռանդութիւնը հասնում
է ծայրայեղութեան։ Օտարների մուտքն այս-
տեղ արգելուած է։ Ըստ երևութիւն, եւրոպական
մասում տաճիկների բարքը մեղմացել է։ սով-
տանները, որ աւելի խիստ պէտք է լինէին, մեզ
սիրալիք ընդունելութիւն ցոյց տալուց զատ,
աշխատում էին, որքան կարելի է, մեր առաջ
լաւ կատարել իրենց կրօնական ծիսակատարու-
թիւնները՝ ի փառ Ալյահի։

Թէ որ չափով սովտաների այս կրօնական արարողութիւնները նմանութիւն ունին մեր նախատօնակներին և թափօրներին և կամ նոյն ծագումն ունին, ժամանակի լնթացքում, տարբեր հանգամանքներում և պայմաններում ձևափոխութեան ենթարկուելով և այն,—որոշակի ասել դժուար է։ Դրա ուսումնասիրութիւնը թողնում ենք արևելեան պատմութեամբ զբաղուող մանադէտներին։ Բայց հաստատապէս կարող եմ ասել, որ եղանակները ոչ թէ մօտաւորապէս նման են, այլ շատ տեղեր ուղղակի յիշեցնում են առանց յաւելումների մեր շարականների վերջաւորութիւնները. «Լոյս զուարթի» շատ կարոներ, նամանաւանդ «Եկեալըս» և ապաշխարութեան օրերին, յատկապէս մեծ պասին երգուելիք ստեղները, տաղերը...
Վաստ չեր ինի, եթէ ուզ...

Վատ չեր լինի, եթէ միջոց և հնարաւորութիւն արուէր յատկապէս հայի հոգուն յատուկ և հայ մտքի եղանակաւող ստեղծագործութեան արուեստի ուզն ու ծուծը հասկացող մեր առ-

զանդաւոր երաժշտապետ Կոմիտաս վարդապետին ըրջակայելու ու հիմնական ծանօթութիւն ձեռք բերելու արևելեան եղանակների մասին, որովհետեւ մեր եղանակները խորը կերպով ազգուել են նրանցից այն բնական պատճառով, որ Հայաստանը դրացի է նրանց և պատմական անցեալում միշտ նրանց հետ է գործ ունեցել։ Որպէսզի մեր բուն ժողովրդի մտքի եղանակաւոր ստեղծագործութիւնն անջատենք միւսներից, պիտի անպատճառ մերից զատենք այն, ինչ որ զլամաւրապէս պարսկական, արաբական, ասորական, բաբելական, յունական, տաճկական, քրդական են։ Հայր Կոմիտասը ամէնայարմարն է, որովհետեւ ծանօթ է եւրոպական երաժշտութեան և միակն է հայկական ժողովրդական երաժշտութիւնը ճանաչելու և ընդօրինակելու նուրբ ընդունակութեամբ։

Մարմարա ծովը եւ Հելլեսպոնիսու:

Արել մայր մտնելու վրայ էր: Մենք
Պօլսին հրաժեշտ պիտի տայինք: Մեր չորս
կողմի գոյնզգոյն տները, Բուփորի հրաշալի
ափերը, մինարէթների գմբէթներն ու ամբողջ
Պօլիսը մի հրաշալի և չքնաղ պատկեր էին ներ-
կայացնում: Շոգենաւն աննկատելի կերպով
մտաւ Մարմարա ծովը: Պերան և Ղալաթիան
այլ ևս չէին երևում: Մեր ձախ կողմն են Սկիւ-
տարը և Արքայական կանաչազարդ կղզիները,
որոնք Մարմարա ծովի մէջ բռւսած փնջի էին

Նման: Մեր ետևից Բուգուրլու կոչուած լեառը
վրանաձև փոռւել էր Բոսֆորի վրայ: Եւրոպա-
կան ափում եօթըգմբէթով ամրոցը դեռ եր-
կար ժամանակ ցոյց էր տալիս մեզ իւր պատերը,
սակայն միայն անցեալի գոռոզ յիշողութիւններով:
Մեր դիմացը հեռու տարածւում էր կապուտակ
անծայր ծովը: Ծովը ու երկինքը գրկախառնուել
էին: Ասիական լեռների բարձունքում խաղում
էին արեգակի ճառագայթները: Քիչ ժամանակից
յետոյ Պօլիս արդէն չէր երկում: Աշ ու ձախ
կողմից հորիզոնը ընդգրկուած էր լեռների շղթայի
հետ և ձախակողմեան սարերի ետևից գիշերուայ
թագուհի լուսնեակը կամաց-կամաց բարձրանում
էր...

Պօլից մեր շոգենաւով եղիպտոս էր վերա-
դառնում մի բարձրահասակ նեղը եւրոպական
տարագով, բայց կարմիր ֆէսով: Դէմքն այնքան
ու էր, որ դժուար էր կուպրից տարբերել: Սև
աչքերը դէմքի սևութեան միջից այնքան հետա-
քրքիր ու արտայայտիչ չէին: Տարօրինակ էին
զլխի ու գանգուր մաղերը և սպիտակ մեծ-
մեծ ատամները: Երկար ժամանակ մեր հարց ու
փորձերն անպատճան էին մնում: Յետոյ պար-
զուեց, որ այդ նեղը Եգիպտոսի խեղիւի (Եգիպ-
տոսի կառավարիչ) ներքինիներից է, որը իւր
մեծի աղջիկները ամարանոցից բերել է Պօլիս
(իրեն պատմելով): Սա էլ իւր տեսակի սարուկ
էր. թէև ընդամէնը 24 տարեկան, բայց այս տե-
սակի արհեստ սովորել է մանկութիւնից: Նա
ուրախ էր, զուարթ և բարի:

Կային նաև մի քանի տաճիկներ, իրենց ընտա-
նիքներով, որոնք մինչև վերջն էլ շոգենաւի այս
կամ այն անկիւնում կուչ եկած մնացին: Իսկ
կանայք մինչև վերջն էլ ծածկած պահեցին իրենց
դէմքերը, նոյն իսկ խօսելու և ուտելու ժամա-
նակ:

Մեր շոգենաւն արագ կտրեց Մարմարա
ծովը և երբ անցաւ Մարմարա կոչուած կղզու
մօտով, դիմաւորեց մեզ Հելլեսպոնտոսի թարմ,
հով և զովարար քամին: Մի քանի ժամ ևս—ահա
մեր դիմացը, եւրոպական ցամաքում, մի քանի
բլուրների վրայ փռուած է տաճկական քաղաքը,
որի մինարէթների գմբէթները այդիների միջից
դէպի վեր են նայում: Քաղաքի ամբողջ պատ-
կերը լուսնեակի տակ երևում է բլրակների շրջա-
նակի մէջ որպէս մի հրաշալի պատկեր: Եւրոպա-
կան և ասիական ցամաքներն այստեղ սեղմում
են ջուրը, այնպէս որ երկու կողմից ցամաքներն
էլ պարզ տեսանելի են գառնում:

Գիշերային խորհրդաւոր լուռթեան մէջ օն-
մանեան այս քաղաքը լուսնի աղօտ լուսաւորու-
թեան տակ հանգստանում էր: Ծառերի ստուերով
ծածկուած շէնքերից աւելի բարձր, դէպի երկինք
նայող մինարէթների գմբէթից, այդ խորհրդա-
ւոր լուռթեան միջից հնչուեց մոլլայի ձայնը:

Գիշերային մթութեան միջից հնչուող այս
ձայնը ձշմարիտ որ խորապէս տպաւորում է
մարդու վրայ: Բայրօնն իսկ իւր ճանապարհոր-
դութեան ժամանակ, երբ նրա բանաստեղծական
խորհրդածութիւնները հանդիպեցին այստեղ

մոլլայի գիշերային երգեցողութեան, ենթարկուեց
այդ խորհրդաւոր ոյժին։ Այդ ոյժը, որի հիմքը
կըօնն է, որ գործ ունի ըստ մեծի մասին մար-
դու հոգեկան աշխարհի հետ և պէտք է ներգործէ
մարդու երևակայութեան վրայ ու մեղմացնէ
կրքերը, աւելի յարմար և խորհրդաւոր ժամ չէր
կարող ընտրել։ Այդ մելամաղձոս ձայնը, մթու-
թեան միջից, ահազին բարձրութիւնից հնչուելով,
իրօք որ ներգործում է ինչպէս տաճկի, այնպէս
և ամէն մի լողի երևակայութեան վրայ։

Երգիչը գմբէթի վրայ առաջին անգամ
կանգնում է նեապէ կամ քարքէ կոչուած քարի
վրայ, որը շինուած է Մեկկայի այն սև քարի
ձեռվ, որի վրայ Աբրահամը զոհ բերաւ, սրանց
կարծիքով, ոչ թէ իսահակին, այլ իսմայէլին։
Երգի կոչը հետևեալն է. «Մեծ է Աստուած,
բացի Աստծուց ուրիշ Աստուած չ'կայ, իսկ Նրա
միակ մարգարէն Մահամմէդն է»։ Այս երգե-
լուց յետոյ մի պտոյտ է անում մինարէթի շուր-
ջը և վերստին կոչում հաւատացեալներին։
«Եկէք տաճար, եկէք աղօթելու»։ Մարգարէի
օրէնքով, հաւատացեալներն օրական հինգ անգամ
պէտք է աղօթք կարդան (նամազ)։

Եեսօնը հաղորդում է (Tableau général de l'Empire Ottoman), թէ Մահամմէդի նախագահու-
թեամբ կազմուած ժողովում շատ երկար ժամա-
նակ խորհրդակցել են աղօթքի կոչելու ձեի մա-
սին։ Դրօշակները, զանգակները, կրակը, փող
փշելը և այլն, որպէս աղօթողներին կոչելու մի-
ջոց, մերժուել են այն պատճառաբանութեամբ,

թէ այդ ամէնն էլ սրբութեան անարժան միջո-
ցներ են, այլ և յատուկ են քրիստոնեաներին,
կըակապաշտներին, իսրայէլացիներին և այն։
Վերջապէս մի գիշեր Մարգարէի աշակերտներից
մէկը տեմում է մի հրեշտակ կանաչ հագուստի
մէջ, նստած կտրան վրայ, սրբազն կոչով աղօթքի
հրաւիրելիս։ Ահա այս տեսիլքը Մահամմէդի աշա-
կերտն աւելի ճոխացրած պատմեց իւր ուսուցչն։
Մահամմէդը հաւանեց այդ ձեւ և սահմանեց,
ազանը, որպէսզի աղօթքի ժամերին մինարէթ-
ների գմբէթից երգիչը կրկնէ հրեշտակի խօսքը։

Դարդանելի նեղուց։

Երկու ժամից յետոյ մենք արդէն Դարդա-
նելի նեղուցումն էինք։ Ծովը շատ խաղաղ էր,
լուսինն էլ գեռ մեղմ փայլում էր կաթնանման
լուր լուսով։ Հելեսպոնտոսի մի մասը և Դարդա-
նելի նեղուցը ներկայացնում են Բոսֆորի այն
պատկերը, երբ գեռ բնութեան զարդ կազմող
ծառերը կենդանութիւն չէին տալիս Բոսֆորի
ափերին։ միայն տեղաւոր նոմի անտառները,
տարածուելով եւրոպական և ասիական ափերով,
աւելի շքեղացնում էին բնութիւնը։

Ինչպէս Բոսֆորում, այնպէս և այստեղ ջրի
հոսանքն ունի իւր առանձին քմահաճոյքը։ Մեղմ
ալիքները, երբեմն բարձրանալով ջրի մակերեսոյ-
թից, տաշեղի նման օրորում էին շոգենաւը և
երբեմն էլ զարմանալի և զարհութելի տեսարան
ներկայացնում, մանաւանդ երբ շոգենաւը ընկնում

էր հիւսիսից և հարաւից իրար դէմ ելնող ալիք-ների մէջ:

Շուտով մենք հասանք Դարդանելի նեղուցի այն նեղ մասը, որտեղից լեանդը ձմեռ ժամանակ, յաջողութեամբ լողալով, կտրեց, անցաւ ամբողջ նեղուցը Հերային տեսնելու: Բայրօնը, կամենալով գէթ երեակայութեամբ միանալ նրանց ընկերութեան, ինքն էլ փորձեց, լողալով անցաւ միւս ափը և սաստիկ մրսեց: Այնուհետև նա մինչև վերջն էլ իւր ոտանաւորների մէջ գանդատում էր, թէ «այսպէս թէ այնպէս, լեանդը էի այս ամէնի փոխարէն ջերմացաւ Հերայի գրկում, իսկ ես մրսելուց սաստիկ շերմ ստացայ և մինչև գերեզման տանջուեցի»:

Տրոյեա:

Այս վայրը յիշեցրեց ինձ այն նշանաւոր ձանապարհորդներին, որոնք հեռու Յունաստանից խուռներամ բազմութեամբ դիմել են այս կողմերը և ամբողջ 10 տարի պատերազմել մի կնոջ յափշտակման պատճառով: Ըստ Հոմերոսի, այս վայրը Տրոյեան է, որը ակամայից բորբոքում է մարդու երեակայութիւն, երբ նա տեսնում է իւր աչքի առաջ այդ բաց դաշտը իւր խաղերով, իւր այցելու հերոսներով: Սա այն երկիրն է, ինչպէս անմահ Գէօթէն է ասում, որ բնութիւնը ստեղծել է փառքի համար: Ո՞վ մեզանից դեռ աշակերտական սեղանի վրայից չի խորհել այս ափերի մասին, ո՞վ չի միացել Աքիլլէսի խմբին, ո՞վ չի ծերունի Պրիա-

մոսի հետ ողբացել Հեկտորի դիակի վրայ...

Այս մեր առաջ, փոքրիկ հրուանդանի վրայ, սպիտակին են տալիս մարմարեայ տաճարի հետքեր, որտեղ է և Այեաքսի շերիմը: Այս տաճարը քանդել է ոմն Դարդանել-փաշա, հիմնուելով Կալխաս քուրմի գուշակութեան վրայ, որը Այեաքսին յանցաւոր ճանաչելուց զատ նրա անձնասպանութիւնը համարել է ճակատագրի գործ: Փաշան, նրա յիշատակը ոչնչացնելու համար, կործանեց այդ տաճարը և նրա մարմարեայ սիւներից կամուրջ կանգնեցրեց: Աեգեան կոչուած հրուանդանի մօտ, Հոմերոսի պատմածի համաձայն, առաւտեան արշալոյսի հետ խաղողի այգիների մեջից ողջունում են հերոսութեան և բարեկամութեան—Աքիլլէսի և Պատրոկլէսի արձանները:

Մի ժամից յետոյ այս ամէնը չքացաւ մեր տեսողութիւնից և իդա ու Գարգարա լեռները ծածկեցին Տրոյեան դաշտը: Այս վայրկեանին էր, որ ծովի մակերեսոյթից ամպի մի կտոր, որ մինչև այդ ժամանակ քնած էր ծովի վրայ, կարծէք թէ, արշալոյսին դիմաւորելու ելաւ և, կարծէք դիմաւորելու առաջ այդ բաց դաշտը ածածկելով յիշեալ լեռները, որտեղից չաստուածածները դիմաւում էին յունաց և տրոյեացւոց կոփերը, խլեց մեր տեսողութիւնից այդ ստեղծագործութեան վայրը:

Ո. ՌԵՒԻՔԵԼԱԿ:

Մարմարեայ հանքերով և խաղողի այգիներով հարուստ Տեսներոս կղզին մեր ձախ կողմը

թողնելով, մտանք Արշիբելակ։ Ոչ մի տեղ ծովի մակերևոյթն այսքան բազմատեսակութիւն չի ներկայացնում, որքան Արշիբելակը իւրաքանչիւր կէս ժամից կղզիներ, թերակղզիներ ողջունում էին մեզ։ Իզուր չեն Արշիբելակի կղզիների բազմութիւնը համեմատել երկնքի վրայ փռուած աստղերի հետ։

Մեր շոգենաւը սլանում էր հրաբխային լիմնոս կղզու մօտով, իսկ հեռուում, լիմնոս կղզու ուղղութեամբ, երևում էին արեգակի ճառագայթներով ոսկեզօծուած Աֆօնի բարձրաբերձ լեռները։ Սա այն տեղն է, որ նկարիչների վառ երեակայութիւնը կամեցել է Մակեդոնեան մեծ հերոսի համար ամբողջ լեռոն արձան դարձնել։ Անկասկած այդ ահոելի լեռուարձանը համապատասխան կը լինէր իւր հերոսի անուան, ոտքի տակ ունենալով երկիրը, իսկ գլխից վերև, որպէս պսակ, միայն ամպերը։ Այս լեռոն ունի և մի այլ պատմական նշանակութիւն։ Քրիստոնէութեան առաջին դարերում եղել է հաւատացեալների ապահովանարան։ Այժմ էլ նին և նոր վանքեր և կրօնական միարանութիւններ կան։

Մեր շոգենաւն, առաջ սլանալով, լիսբոս կղզին (այժմեան Մետիլինէ) թողեց իւր ձախ կողմը և մօտեցաւ բուսականութիւնից զուրկ և լերկ ժայռերով հարուստ Խիօս կղզուն։ Այս կղզին հոչակաւոր կանարիսի հայրենիքն է, որի 1824 թ. տաճիկների դէմ վարած կռուում ցոյց տուած քաջագործութիւնների մասին ոչ միայն տեղացիներն, այլ և օտարները հիացմունքով

են խօսում։ Պատմում են, թէ իպսարիոտները պարծենում են ոչ միայն այդ հերոսով, այլ և իրենց կանանց օրինակելի քաջութեամբ։ Ասում են, թէ այդ կռուի ժամանակ մի կին թշնամու նաւերի մօտից լողալով անցել է իւրայինների մօտ։ Կան մարդիկ, որոնք հաւատում և ցոյց են տալիս այն ժայռը, որի բարձունքից երեք հարիւր կանայք, թշնամու ձեռքը գերի չընկնելու համար, զաւակներին կրծքին սեղմած, նետուել են ծովի փրփրադէզ աղիքների մէջ։

Զմիւռնիա։

Մեր շոգենաւը, Խիօս կղզին աջ կողմը թողնելով, սլացաւ դէպի Զմիւռնիա, դէպի անմահ Հոմերոսի հայրենիքը։ Թէև դրականապէս յայտնի չէ, թէ որն է Հոմերոսի հայրենիքը, բայց Զմիւռնիան էլ այն եօթը վիճողներից է, որոնք Հոմերոսի հայրենիք լինելու պատուին են ուղում արժանանալ (Զմիւռնիա, Բոդոս, Կոլոֆոն, Սալամինա, Խիօս, Արգոս և Աթէնք)։

Մենք դեռ Արշիբելակուն ենք։ Հեռուում երեացող բարձր լեռներից վիճում էր թարմ և զովարար հովը։ Ծովը՝ երկնքի և ամպերի այս մշտական հայելին՝ շարունակում էր հանդարտ օրօրել մեր նաւը։ Հեռուից եկող քամին երբեմն, մեծ-մեծ ալիքներ խլելով ծովի մակերեմն, զարկում էր շոգենաւին և խոռովում ընոյթից, զարկում էր շոգենաւին և խոռովում ընդհանուր խաղաղութիւնը։ Երբեմն էլ երկու ընդհանուր խաղաղութիւնը հրբեմն էլ երկու միմեանց հակառակ հողմեր հարաւից և հիւսիմիմեանց հակառակ հողմեր մօտենում և զարսից լեռնացած ալիքներով մօտենում և զար-

նուռմ էին իրար և յաղթող հերոսը մեր նաւին
իւր յաղթութեան աւետիսն էր բերում:

Երկիւղի զգացումն այլևս անհանգիստ չէր
անում ինձ: Նաւը, ծովը իւր հողմերով, ալիք-
ներով ու երևոյթներով մի այլ խորհրդածու-
թեան մէջ էին ձգել ինձ: Մտածում էի, նման
չէ արդեօք մեր կեանքն այս նաւին: Մարդկային
կեանքն էլ մի անսահման ծով չէ, որի վրայ
հողմերի, փոթորիկների միջով լողում, պահում
է մեր կեանքի նաւը դէպ յառաջ, ծովի անհու-
նութիւնը, շիմանալով սակայն, որտեղից է գա-
լիս և ուր է գնում...

Շոգենաւն առաջ էր ընթանում: Մեր
շրջապատի լեռները, կարծէք թէ, ծովից բարձ-
րանալով, միանում էին երկնքին, փակելով
շրջապատի հորիզոնը: Արևի ճառագայթներն էլ,
թափանցելով ջրի մէջ, մի առանձին փայլ էին
տալիս ծովին:

Ահա և ծխի ամպով ծածկուած Զմիւռնիայի
նաւահանգիստը, նրա շարունակութեան վրայ,
լերան ստորոտում և լանջում, փոռուած տները,
լերան բարձունքում երևացող բիւզանգական
շրջանից մնացած բերդի բեկորները, Զմիւռնիայի
գեղեցիկ տեսարանը, ծովը, շրջակայ հեռաւոր
լեռները, շրջապատի ծառաշատ ու կանաչազարդ
դաշտերը, ձորերն ու բլուրները, քիչ թէ շատ
եւրոպական ճաշակով շինուած տները, խաչաւոր
գանգակատները, գմբէթաւոր մեջիդները և այլն
հարաւային արեգակի լուսաւորութեան տակ

բաւական դիւթիչ տպաւորութիւն են անում:

Շոգենաւը կամացուկ մօտեցաւ նաւահան-
գըստին: Խուռն բազմութիւնն անց ու դարձ էր
անում ամէն կողմ: Սրանց կարմիր ֆէսերը,
արևից այրուած դէմքերը, տարազը թէկ յիշե-
ցնում էին պօլսեցիներին, բայց ընդհանրապէս
եւրոպական ճաշակն էր թագաւորում այստեղ:

14-դ դարում խաչակիրները վերցրին
Զմիւռնիան: Այդ ժամանակից էլ մինչև այսօր
այդ քաղաքը ինչպէս եւրոպացիների, այնպէս
էլ հայերի, հրէաների, յոյների համար մատչելի
դարձաւ և դրանց շնորհիւ էլ իւր արտաքինով
և տնտեսական ներքին կեանքով նա կարող է
մըցել մեծ քաղաքների հետ: Քաղաքի ազգա-
բնակութիւններն ապրում են զատ-զատ: Ֆրան-
սիական, գերմանական, հայոց, յունաց, հրէից
թաղերը քաղաքի կենտրոնական մասումն են,
իսկ տաճիկներն ապրում են քաղաքի ծայրե-
րում, շատ խղճուկ բնակարաններում:

Նախ քան Զմիւռնիա հասնելը, ուսուցչապետ
Լեպակերը շոգենաւում մի դասախոսութիւն էր
կարգացել Զմիւռնիայի բնակիչների մասին:
Յարգելի ուսուցչապետը, ընդարձակելով իւր
ասելիքը, երբ խօսքը հայերի մասին էր, յիշեց,
թէ Զմիւռնիայում այժմ ամէնսաւչքի ընկնող
տարրը իւր աշխատութեամբ, վաճառականու-
թեամբ, ուսումնական և բարեգործական հաստա-
թեամբ, այս է: Քաղաքի այն մասը, որ
տութիւններով հայն է: Քաղաքի այն մասը, որ
հայոց թաղ է կոչում, աչքի է ընկնում իւր ճա-
հայոց թաղ է կոչում, հարուստ խանութներով,
շակաւոր շէնքերով,

մաքուր փողոցներով։

Որովհետև մեր զոգենաւը միայն վեց ժամ պիտի կանգնէր այստեղ, շտապեցինք հնարաւոր եղածի չափ պտտել քաղաքը։ Առաջ գնալով նեղու ծուռ փողոցներով, տաճկական և հրէական շուկաների մօտով, որտեղ տօթի և օդի նեխուած լինելու պատճառով կանգնելն անհնարին էր, բարձրացանք դէպի վեր, դէպի բիւզանդական Գաղիբէ-դալասի կոչուած բերդը, որտեղ մեղմ զեղիւռ մի քիչ հովութիւն բերաւ...

Բերդը ներկայ դրութեամբ միայն աւերակների մի կոյտ է ներկայացնում։ հաւանականութէն զօրանոց պէտք է եղած լինի։ Աւերակների բարձրութիւնից մեր շրջապատի տեսարանը, ներքնում ծովը և քաղաքը իւր եռացող կեանքով, հեռաւում երևացող լեռներով և այլն, աւելի հետաքրքիր էր և բանաստեղծական։ Անհաւանական չէ, որ հնում մուսաները բանաստեղծներին այցելած լինին և այստեղ...

Դարձին փոքրիկ ձորակով իջանք դէպի Մելէսա կոչուած գետակի երկու եզերքը միացնող կամուրջը։ Այս գետակն այն՝ պատմական գետակն է, որը ծնել է իւր ափերում մեծ հագներգուին (Մելէս աստուածը համարւում էր Հոմերոսի հայր, Melisi genetes—ծնունդ Մելէսի)։ Եթէ այս ճիշտ էլ ՚լինի, բայց Հոմերոսը եղած պէտք է լինի Զմիւնիայում։ Մինչև այսօր էլ ցոյց են տալիս այն քարայրը, որտեղ ըստ աւանդութեան այցելում էր Հոմերոսին իւր մուսան։ Հին բնական քարայրին այժմ փոխարինում է

արհեստականը։ Քարայրի չորս բողոքը տիրուամ է խորին լուռթիւն, միայն անտրտոնջ բղխում է։ Դիանայի աղբիւրը (այս աստուածունու մասին Հոմերոսն ունի մի օդա—փառաքանական երգ)։ Կարելի է ասել, որ Զմիւնիացիք մոռացել են արդէն մեծ բանաստեղծ, ոգեշունչ կոյրի յիշատակը, որ չտեսնուած ոգնորութեամբ հնում տօնում էին։

Քարայրից մի քիչ հեռու ցոյց առվին այն լողարանների առեղք, ուր զովանալու էր գալիս Դիանան։ Եւ ահա այն տեղը, դէպի ուր մի ժամանակ ոչ մի մարդկային հայեացք չէր կարող դառնալ, այժմ դարձել է կեղտոտութեան և ճանահանների վայր։ Այս տեղը յիշեցրեց ինձ մեր Աստղիկ աստուածունու լողարանները Ռշոյ դաշտում, որ նա յաճախ մշուշով էր ծածկում իւր մերկութիւնն անհամեստ աչքերից սքողելու համար։

Թողնելով բանաստեղծութեան և դիցաբանութեան վայրը, շարունակեցինք ճանապարհ։ Ուղտերի կարաւանների երկար շարքերը յաճախ ահագին ժամանակ էին խլում մեզնից փողոցի մայթից միւն անցնելու ժամանակ։ Ուղտերի մայթից կախուած հնչւող զանգակները, ուղղաբանոցից կախուած հնչւող զանգակները, ու դէմքերը, տապանների մորթի գլխարկները, ու դէմքերը, կեղտոտ հագուստները մի այլ տեսակի ներդաշկեցուտ էին ներկայացնում։ Մենք արդէն նակութիւն էին ներկայացնում։ Մենք արդէն այդիս էինք այն ուղղութեամբ, որ մտնենք հագալիս էինք այն ուղղութեամբ, որ մտնենք հագալիս էինք այն յանկարծ լսելի եղաւ շոգեցոյց թաղը, սակայն յանկարծ լսելի եղաւ

խնամւում են երկու սեռից էլ: Հիւանդանոցն ունի մի քանի բաժանմունքներ՝ խելագարների, ծերերի, կոյրերի, կաղերի համար: Ունի նոյնպէս բարձրագոյն կրթութեամբ սեպհական բժիշկ իւր օգնականով և գեղատնով: Հիւանդանոցին կից կայ նաև Ս. Լուսաւորչի անունով մի մատուռ:

Զմիւռնիայում յայտնի է նոյնպէս Հսիփսիմեան կոչուած վարժարանը, որտեղ սովորում են 240 օրիորդներ: Այս զպրոցի հիմնադիրն է Զմիւռնիայի տիկին Հսիփսիմէ Կոստանեանց: Ապա երկու որբանոց—տղայոց և օրիորդաց (հիմնադիր Ներսէսեանց) և մի մանկապարտէզ (հիմնադիր Եսայեան), նաև քաղաքի շրջակայքում՝ մի քանի հայկական գիւղեր:

Զմիւռնիայում կայ հայկական տպարան և լրագիր («Արևելեան Մամուլ»):

Զմիւռնիան այնքան հարուստ է պտուղներով, որ մեծ քանակութեամբ թուզ, խաղող, դեղձ և այլն արտահանում է Պոլիս, Ռուսաստան և այլև աեղեր: Շուկան զարմանալի տեսարան էր Ներկայացնում: Խառնիճաղանձ ամբոխը դէպի ամէն կողմ անց ու դարձէր անում: ամէն կողմից աղաղակ, շշուկ, վաճառողների և գնողների ձայնը անցորդներին, խլացնելու չափ: Հրաշալի է այս տեղ թուզը առաւօտեան ցողով սրսկուած:

Զմիւռնիայի շուկան թէկ այնքան բազմամարդ չէ, որքան Պոլսինը, բայց հետաքրքիր է իւր բազմացեղ մարդկանցով: Աշխարհի ամէն

ծայրից մարդ կարող էք գտնել այստեղ: դէպի արևելք գնացողները այստեղով են անցնում:

Տեղացի բնակիչներից ամէնաաննախանձելին տաճիկներն են: Արանց կեանքը, ինչպէս ամէն տեղ, մի առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում, թէկ պայմանները շատ նպաստաւոր են յառաջալիմելու նկատմամբ: Աշխատասիրութիւնը ստորին աստիճանի վրայ է. նրանց անտարբեր սառնութիւնը, որ Վոյլտերը կոյր փիլիսոփայութիւն է կոչել, միմիայն ծուլութիւն է, իսկ անվերջ ու իբրև թէ խորհրդաւոր լուռթիւնը—յիշմարութիւն:

Տաճիկը մինչև այսօր ապրել և ապրում է շատ անտարբեր կեանքով, և այս գրութիւնը, եթէ շաբունակուի, դժուար թէ նրան մի լաւ բան տայ: Իւր ամբողջ կեանքը ծխախոտի ծխով ծածկելով, ոչ մի պայծառ մշաք, ոչ մի ազնիւ զգացմունք չի կարող զարթեցնել նրա մէջ, որովհետեւ նա անտարբեր է դէպի ամէն ինչ, դէպի անցեալն ու Ներկան, նոյն իսկ ապագան:

Խմիչքներ գործածելը թէկ իբրև օրէնքով արգելուած է, բայց, ինչպէս ինձ ասացին, շատերի համար գործածական է դարձել: Այս է Զմիւռնիայի տաճիկի յառաջաղիմութիւնը:

Ապրելով քաղաքի վերին մասերում, նրանք ամէննեին չեն մասնակցում քաղաքի եռացող կեանքին: Աւելի աննախանձելի պիտի լինի անշուշտ նրանց դրութիւնը, որոնք, ոսից շուշտ կանանց դրութիւնը, որոնք, ոսից մինչև գլուխ սեով ծածկուած, երեքն երկում են փողոցներում և գերեզմանաներում:

Տեղական զօրքն աւելի տարօրինակ է, քան
եթէ կարելի էր երևակայել. փողոցների ան-
կիւններում թափուած, ըստ մեծի մասին տար-
բեր տարագներով. հագուստները կեղտոտ, ամէնքը
կարմիր ֆէսով, երբեմն էլ բոկոտն:

Բացի տաճիկներից, Զմիւռնիայի միւս բնա-
կիչների մասին ընդհանրապէս չի կարելի վատ
ասել. ուսման և կրթութեան մէջ յառաջադի-
մում են. ունին դպրոցներ, հիւանդանոցներ,
բարեգործական հաստատութիւններ, մամուլ և
այն:

Ինչպէս հայ, այնպէս և օտարազգի կանայք
յետ չեն մնում լուսաւորութեան և յառաջադի-
մութեան գործում և աշքի են ընկնում իրենց
արտաքոյ կարգի գեղեցկութեամբ: Բաւական է
գէթ մի անգամ ներկայ գտնուել նրանց երե-
կոյեան խմբական զբոսանքներին և համոզուել,
որ իրօք այս գեղեցիք սեռը մարմնացրած ունի
իւր մէջ կազմուածքի այն հրաշալի ներդաշնա-
կութիւնը, որ գեղեցկութիւն է կոչւում:

Կանանց խմբական զբոսանքները տեղի են
ունենում քաղաքի ամէնագեղեցիկ և ծառաշատ
ժամանակ, այսպէս կոչւած Ծաղկի փողոցում.
թէև այժմ այնքան էլ բնական և յարմար չէ
այդ անունը, որբինեաւ այդ փողոցի եղերքնե-
րում ոչ թէ ծաղիկ, որից և փողոցը իւր անունն
է ստացել, այլ և կանոնաւոր ծառեր չ'կան: Ծա-
ղիկներին և ծառերին փոխարինում են ծառերով
շրջապատուած ճահիճները:

Երեկոյեան զբոսաքնի ժամանակ գեղեցիկ

սեալ երեսում է ամբողջ պաճուճանքներով, ըստ
մեծի մասին դէպի փողոց նայող պատուհաննե-
րի առաջ և սլատշգամբներում, ոմանք էլ փողո-
ցում: Սրանք, կարծէք թէ, ուզում են հաստա-
տել, որ այդ փողոցը իւր անունը ստացել է
ոչ թէ մի ժամանակ իւր շուրջը փուռած ծա-
ղիկներից, այլ իրենցից, որովհետև այդ փողոցի
ամէնագեղեցիկ զարդարանքը իրենք են, ծաղիկ-
ների պէս փուռած ճանապարհի երկու եզեր-
քում:

Այս ամէնին թարմութիւն և կենդանութիւն
է տալիս մի քիչ հեռու երեսող աւագանը, որի
ջուրը, ինչպէս ասում են, մի առանձին ոյժ և
թարմութիւն է տալիս:

Պէտք է յիշել, որ փարիզեան մօդաները
շատ շուտ են համում այստեղ, բայց Զմիւռ-
նիացիք չեն մոռանում իրենց սեպհական կամ
տեղական բաւական գեղեցիկ հագուստը: Հագ-
նում են կարճ, ամբողջ կուրծքը ծածկուած
կիսաթափանցիկ հիւսուածքով, բայց բաւակա-
նին լայն: Այս ճաշակաւոր հագուստի հետ նրանց
քնքոյշ, թարմ, ներդաշնակ գէմքը, կախարդիչ,
սև ու մեծ աշքերով, ուսերի վրայ փուռած սև
մազերով, ներկայացնում է գոյնզգոյն ծաղիկ-
ների մի փունջ:

Սրգէն մութը վիայ էր հասել, երբ մենք
Զմիւռնիային «մնաս բարեաւ» ասացինք: Մի
քանի ժամից արդէն պայծառ լուսինը և փայլուն
ասողերն էին թագաւորում ծովի և ցամաքի
վրայ:

Սուրբ Էջմիածնի իրաւասութիւնը.

Զմիւռնիան, որպէս վաճառաշահ քաղաք, ինչպէս օտարներին, այնպէս և հայերին շատ հին ժամանակներից յայտնի էր: Հայ աշխարհը շատ վաղ ժամանակներից, քաղաքական վորթորիկների ենթարկուելով, որոշեց գաղթականի տարազով հեռանալ զանազան կողմեր գէթ նիւթական ապահովութիւն ձեռք բերելու: Զմիւռնիան էլ, վաճառաշահ և յայտնի քաղաք լինելով, չէր կարող անծանօթ մնալ հային և չ'մնաց: Թէ որտեղից գաղթեցին հայերն այսուեղ և յայտնի եղան վաճառականութեան մէջ, դրականապէս յայտնի չէ և վաւերական աղքիւրներ չ'կան. բայց սրանց սովորութիւններից և բարբառից ենթադրում են, որ գաղթած պէտք է լինեն Զմիւռնիա Պարսկաստանի և մեծ մասամբ Հնդկաստանի կողմերից հաւանականօրէն 13-դ և 14-դ դարերում:

Այս գաղթականները, Պարսկաստանում կամ Հնդկաստանում եղած ժամանակ Ս. Էջմիածնի իրաւասութեան տակ լինելով, Զմիւռնիայում էլ շարունակեցին պահպանել Ս. Էջմիածնի հետ ունեցած կապը, կառուցանելով այդ հոգևոր կապը պահպանող և մխիթարութիւն պատճառող եկեղեցի: Տաճկաց թաղում մինչև այսօր էլ ցոյց են տալիս հայոց եկեղեցու և գերեզմանատան տեղը: Ըստ աւանդութեան, այս եկեղեցին շնուռած է եղել Յովակիմ-Աննայի անուամբ:

17-դ դարու ս'լզբին (1605), երբ նոր

գաղթականներ եկան այստեղ, ըստ երևութին, հոգևոր զգացմանց նոր արծարծումն առաջ բերին հների մէջ և ամէնայն հաւանականութեամբ հիմնեցին նոր մեծ եկեղեցի: 1656 թ. արդէն յիշատակութիւն կայ, թէ հայերն այդ թուին երկու եկեղեցի ունէին. եթէ մէկը Ս. Ստեփանոսի եկեղեցին է, միւսն էլ տաճկական թաղինը պէտք է եղած լինի:

Երկու եկեղեցի ունենալու անհրաժեշտութիւնն ապացոյց է, որ Զմիւռնիայում քանի գնում, այնքան բազմանում էր հայերի թիւը, որ և 17-դ դարում մի քանի հազարների հասաւ: Անշուշտ այսքան բազմութիւնը հոգևոր իշխանութեան ուշադրութիւնից վրիպել չէր կարող, եթէ սակայն անողոք ժամանակը Ս. Էջմիածնի գլխին չ'կուտակէր իւր չարիքներն ու արհաւիրքները:

Ս. Էջմիածնի փոխարէն Պօլսի պատրիարքները ևս հնարաւորութիւն չեն ունեցել երկար ժամանակ այս գողթականներին իրենց հովանաւորութեան տակ առնել, —երեկի այն պատճառով, որ Զմիւռնիայի գաղթականները աւելի մօտիկ են եղել Պարսկաստանի և Հնդկաստանի հայերին և ունեցել են սերտ կապեր և կամ գուցէ Ս. Էջմիածնի իրաւասութիւնը չեն կամեցել փոխել ուրիշի հետ և ոչ մի գէպքում: Նոյն իսկ վերջերում Ս. Էջմիածնի հետ ունեցած իրենց հոգևոր կապն աշխատել են աւելի ուժեղացնել, մինչև որ վերջնականապէս Ս. Էջմիածնի Հայրապետները, թէ իրենց և թէ սուրբ Էջմիածնի վի-

ճակը մի քիչ բարեկարգելուց յետոյ, կանոնաւուրել են իրենց յարաբերութիւնը Զմիւռնիայի հայերի հետ, բաւական երկար ժամանակ անինամթողնելուց յետոյ:

17-րդ դարու կիսից սկսած արգէն Ս. Էջմիածնի Հայրապետները, որպէս իրենց իրաւասութեան ենթակայ վիճակ, ուղարկում են նուիրակներ, որոնք և կատարում էին առաջնորդական պաշտօն, անկախ միանգամայն Կ.-Պօլսի պատրիարքի իշխանութիւնից, ճանաչելով միայն Ս. Էջմիածնի իրաւասութիւնը: Թէս Զմիւռնիայի այդ պատուիրակ առաջնորդների մանրամասն պատմութիւնը չկայ, սակայն անծանօթ չեն նրանց գէթ զլսաւորների անունները: Մենք միայն կը թուենք ամէնայալնինները:

Առաջին անգամ առաջնորդական պաշտօնով յիշում է Յովսէփի վարդապետը (1661—1689) Ս. Էջմիածնի Եղիազար կաթողիկոսի օրով. 1688 երկրաշարժից յետոյ Ս. Ստեփանոսի եկեղեցին նորոգով պիտի լինի:

Դագար Զանկեցի, որ Զմիւռնիայի նուիրակութեան պաշտօնից 1738 թուին ընտրուեց ամէնայն հայոց կաթողիկոս, որը յայտնի է իւր մի քանի զբաւոր վաստակներով (Դրախտ ցանկալի), Երգարան Դագարու Զանկեցոյ, Ասուածաղերս և այլն):

Աղեքսանելու արքեպիսկոպոս Կ.-Պօլսէցի, Դարադաւ: Սրա օրով 1743 թուին Ս. Ստեփանոսի եկեղեցին վերստին նորոգուեց: Սա յիշում է կարապետ Ռունեցի կաթողիկոսի օրով

(1726—1729) Ս. Էջմիածնի աթոռակալ անուամբ և ապա Զմիւռնիայի առաջնորդ (տես Յակոբ Նալեան պատրիարքի 1745 թ. տպած «Մելնութիւննարեկի» յիշատակարանը): Յայտնի չէ, թէ երբ է թողել Զմիւռնիայի առաջնորդութիւնը, բայց յայտնի է, որ 1753 թ. ընտրուեց ամէնայն հայոց կաթողիկոս:

Սահակ Եպիսկոպոս Քղեցի (Ահագին): Ինչպէս Կ.-Պօլսէցի Աղեքսանովը Ղարաղաշ կաթողիկոսի սոյն Սահակ Եպիսկոպոսին ուղղած մի կոնդակից երեսում է, 1755 թ. Ս. Էջմիածնի կողմից նուիրակ էր Զմիւռնիայում (այս կոնդակի մասին տես Աղեքսան Այվազեանցի «Յոնիական հայ գաղութիւննահապետներէն») և նոյն թուին հայ գաղութիւննահապետներէնը կաթողիկոսէ յաջորդ, ընտրում է Աղեքսանովը կաթողիկոսէ յաջորդ, բայց անյայտ պատճառով չի գալիս Ս. Էջմիածնին և չի օծւում: Կ.-Պօլսի և Ս. Էջմիածնի միաբն են չի գիշում է որպէս գրասէր կաթողիկոսի: Սա ևս յիշում է որպէս գրասէր կաթողիկոսի: Մեծ ժամանականութեամբ 1759 բաններն էլ ընդհանուր համաձայնութեամբ 1759 սրա վուխարէն ընտրում են կաթողիկոս Յակոբ Շամախեցուն:

Արքահամ Եպիսկոպոս Աստապատցի (1756—1764)—վարում էր Զմիւռնիայի առաջնորդութիւնը և ընկերակից էր Ս. Էջմիածնի Սիմէօն թիւնը և ընկերակից էր Ս. Էջմիածնի Սիմէօն թիւնը և յիշում է որպէս գրասէր կաթողիկոսի: Սա ևս յիշում է որպէս գրասէր կաթողիկոսի: Մեծ ժամանականութիւն ունենալով անձն: Մեծ ժամանականութիւն ունենալով անձն: Սա ևս յիշում է որպէս գրասէր կաթողիկոսի: Սա ևս յիշում է որպէս գրասէր կաթողիկոսի:

Ղուկաս Եպիսկոպոս Կարնեցի (1764—1780): Սրա պաշտօնավարութիւնը ամէնափայլունն է համարւում: Դեռ Կ.-Պօլսում ոչ մի վարժարան չը կար, երբ սրա օրով Զմիւռնիայում բացուեց Ս. Մեսրոբեան վարժարանը, որը և մեծապէս հոչակեց սրա անունը... և վերջն էլ, 1780 թ., Սիմէօն կաթողիկոսի կամքի համաձայն, Ս. Էջմիածնի միաբանութիւնը ամէնայն հայոց կաթողիկոս ընտրեց: Կ.-Պօլսի Զաքարիա պատրիարքի հակառակութեան պատճառով Ղուկասը խոհեմութիւն համարեց չ'գործադրել իւր կաթողիկոսական իրաւունքը, սպասելով, որ Կ.-Պօլսի հայերը ևս վաւերացնեն իւր ընտրութիւնը և Օսմանեան կառավարութիւնից հաստատութեան հրովարտակ հանեն: Երբ 1781 թուին Յովինաննէս Համադանցի պատրիարքն ուղարկեց այդ հրովարտակը, Ղուկասն արդէն սկսեց վարել իւր բարձր պաշտօնը մինչեւ իւր մահը (1799):

Դանիէլ Եպիսկոպոս (1797—1798): Սա իւր կամքի հակառակ Զմիւռնիայի առաջնորդութիւնից Ղուկաս կաթողիկոսի կարգադրութեամբ նուիրակ գնաց Ռումելի: 1799—1800 թ. Կ. Պօլսոյ պատրիարք եղաւ, իսկ 1801 թ. ամէնայն հայոց կաթողիկոս ընտրուեց: Սրա դէմ էր, որ Դաւիթ Եպիսկոպոսը հակառակեց և ահազին վէճերի դուռ բաց արաւ: Վերջը այս վէճերի խնդիրը լուծուելով յօգուտ Դանիէլի, 1802 թ. մայիսի 25-ին Իւշ-Քիլմէի վանքում վերջինիս յաջողուեց ամէնայն հայոց կաթողիկոսութեան ս. օծումն ընդունելու:

Մարտիրոս Եպիսկոպոս Կեսարացի (1798—1810): Սա Ս. Էջմիածնի միաբան էր և Դանիէլ Եպիսկոպոսի տեղ առաջնորդ նշանակուեց Զմիւռնիայի վրայ: Սրա ժամանակ ս. Մեսրովեան վարժարանը զգալի յառաջադիմութիւն ցոյց տուաւ:

Բացի այս առաջնորդներից, Զմիւռնիա եկել են 18-դ դարու կիսից նաև Երուսաղէմի կողմից նուիրակներ, որոնց նպաստակը սակայն միայն դրամական օժանդակութիւն ձեռք բերելն է եղել Երուսաղէմի վանքի դրութիւնը բարոքելու համար: Պատուիրակների թւումն է Պօլսու վարդապետ Աղրիանապօլսեցին, որը յետոյ Կ.-Պօլսի պատրիարք դարձաւ:

Ահա այս դրութիւնը շարունակում է մինչև Պօլօժենիայի հաստատութիւնը, որով Զմիւռնիան վերջնականապէս ընկնում է Կ.-Պօլսոյ պատրիարքի իրաւասութեան ներքոյ (տես. 1904 թ. Բիւզանդիոնի Արշակ Ալպօյաճիեանի «Առաջնորդութիւն Հայոց Իզմիրի» յօդուածը):

Գէպի Պիրէյ:

Արևը բաւական բարձրացել էր, երբ մեր Աթէնքի Պիրէյ նաւահանգիստը: Իսչպէս պի Աթէնքի Պիրէյ նաւահանգիստը:

հայրենասիրութեան մասին. Հնայելով որ տարագնաց են դարձել, հայրենիքից հեռացել և խառնուել ուրիշների հետ, սակայն հաւատարիմ են մնացել իրենց ազգային սովորութիւններին, ծէսերին, նիստ ու կացին:

Պատմում են, որ այսուղ է տեղափոխուել Խիօս կղզու հերոս Կանարիսայի այրին, որը ոչ պակաս հերոսուհի է եղել այդ պատերազմների ժամանակ: Իսկայստեղ տեղափոխուելուց յետոյ, որպէս ճշմարիտ հայրենասէր, օրինակելի է եղել միւսների համար, խնդրելով և համոզելով իւր տարագնաց քոյրերին այդ կրակով վառուել և վառել իրենց զաւակներին:

Հայրենասիրութեան կրակը միշտ էլ գեղեցիկ է և ցանկալի, բայց նրա փայլը աւելի պարզ և մաքուր է երեսում, երբ վառում է յատկապէս կնոջ սրտի մէջ:

Մեր շողենաւը մօտենում էր Յունաստանին,—այն երկրին, որտեղ ամէն մի անկիւն պահել է հսութեան մի որևիցէ հետք, մնացորդ, որտեղ ամէն մի քարի կտոր խօսում է իւր հայրենիքի անցեալ փառքից: Սալամինա կղզին թողնելով մեր ձախ կողմը, շողենաւը ուղացաւ զէպի Պիրէյ նաւահանգիստը: Քանի առաջ էր զնում նաւը, մեզ շրջապատող լեռները զիմացի հորիզոնը նեղացնում էին: Արել պայծառ փայլում էր և լուսաւորում մեր զիմացի Պիրէյ նաւահանգիստը, արդէն երեսում էր Աթէնքի Ակրոպոլիսը: Աթէնքը թէկ ամբողջապէս չէր երեսում, բայց երեացող մասն էլ հեռուից աւերակների

էր նմանում: Կէս ժամից մենք արդէն Պիրէյումն էինք:

Նախ քան Պիրէյ համական թերթերում կարգացել էինք, որ կառավարութիւնը և ժողովուրդը սիրալիր ընդունելութիւն են ցոյց տալու մեր խմբին, սակայն մեզ անյայտ պատճառով ոչ միայն սիրալիր ընդունելութիւն չ'անապէս, այլ և վերին աստիճանի սառը և կառկածելի վերաբերմունք ցոյց տուին: Նոյն իսկ թերթերում սկսեցին մեր զէմ ծաղրական յօդուածներ տալիք: Մինչ այն աստիճան թշնամական էին այդ յօդուածները, որ ոմանք պահանջում էին փակել Աթէնքի բոլոր խանութները, երբ Էքսկուրսանուները Աթէնք մանեն: Թերթերում ծաղրում էին մեր ամէն մի շարժումը, մանգալու ձեր, ընսազատում մեր զիմարկները և այն: Ծաղրի էին արժանանում ոչ միայն ուսանողների, այլ և ուսուցչապեաների զիմարկները: (Մեր նախազան ուսուցչապեան Տրուբէցյօյի զիմարկը գնահատել էին 4000 ֆրանկ—մեր փողով 1350 ռ.)

Բարեբախտաբար այս վերաբերմունքը երկար չ'անեց: Կառավարութիւնը երկու օրից յետոյ նոյն իսկ «Կանարիս» կոչուած շողենաւը տոյ մեր տրամադրութեան տակ, որով և զիւդրատ մեր լուսաւորութիւն ստեղծուեց իրազործելու մեր ծրագիրութիւն ստեղծուեց իրազործելու մեր ծրագիրը և շրջելու Դէլֆիս, Ոլիմպիա, Կորնթոս և ները և շրջելու Դէլֆիս, Ոլիմպիա, Կորնթոս և նշանակած գիտութիւնների և թանգարանների վենի բոլոր հսութիւնների և թանգարանների վենի բոլոր կառավարութիւնը Յունաստացին: Կառավարիսին նշանաբատեսուչ գիտնական պէ, կառավարիսին նշանաբատեսուչ գիտնական պէ,

— 92 —

կեց առաջնորդելու հնութեան վայրերը։ Աթէնքի հնագիտական ընկերութիւնն էլ իր կողմից նշանակեց պ. Նիկոլաիդիսին։

Մի խօսքով, բացի Պիրէյի և Աթէնքի սառն ընդունելութիւնից, ոչ մի դժգոհութիւն չի կարելի յայտնել եղած միւս ընդունելութիւնների նկատմամբ։ Ամէն տեղ կառավարութեան ներկայացուցիչները և ժողովուրդը ընդունել են քաղցրութեամբ և ճանապարհ դրել «զիտօ»-ներով (կեցցէ)։ Որ գիւղով անցել ենք, մեզ ընդունել են գիւղական տանուտէրը, ուսուցիչը և սիրալիր կերպով ճանապարհ դրել։

Արէնի։

Պիրէյից մինչև Աթէնք մօտ կէս ժամուայ ճանապարհ է երկաթուղով, որ անցնում է խաղողի այգիների միջով։ Դեռ կիսով չափ կանգուն է Պերկլեսի շինած այն պարիսպը, որը բաժանում է նաւահանգիստը քաղաքից։ Յաձախ կրկնուղ պատերազմները, կարծէք թէ, գերեզմանատուն են դարձրել այս տարածութիւնը, որտեղ պահուելիս են եղել իմաստութեան զանձերը։ Շրջակայ լեռների լանջերը ամբողջապէս ծածկուած են ձիթենու անտառներով։ Աթէնքը դեռ թաքնուած էր Ակրոպօլիսի եռեռում, երեւում էին իմաստութեան տաճար հակայ Պարթենոնն և Թեղէսոսի տաճարը։ Առաջինը կանգնած է Ակրոպօլիսի ամէնաբարձր մասում, իսկ երկրորդը՝ միջին մասում։

Ամէնայն հաւանականութեամբ ժամանակից մանգաղը ոչ մի տեղ այնքան հարուստ հունձ և տիսուր յիշատակներ չի թողել, որքան այս երկրում։ Դէպի որ կողմն ուզում էք նայեցէք-ձեր շրջապատը միայն աւերակների հետքեր են երկում։

Ահա մեր առաջ յունաց ամբողջ պատմութեան հանդիսաբան Ակրոպօլիսը, շրջապատուած տաճարներով։ ամէնքն էլ կիսակործան ողբում են իրենց կորուստը։

Ահա և Աթէնքը։ Քաղաքը տեղաւորուած է Ակրոպօլիսի հիւսիս-արևմտեան կողմը, փոքր տարածութեան վրայ։ Մի քիչ հեռուից Աթէնքը շատ տիսուր տպաւորութիւն է թողնում։ բուսականութիւնից զուրկ, քաղաքի շրջապատի շինութիւնները քանի հեռանում են կենարոնից, այնքան էլ աննշան են դառնում, ոմանք էլ նոյն խակ խրճիթների տպաւորութիւն թողնում։

Պիրէյից քաղաք բերող չերմէս կոչուած փողոցն Աթէնքը բաժանում է երկու մասի՝ հին և նոր։ Մեր աջ կողմն են Ակրոպօլիսը, Թեղէսոսի տաճարն իրենց հնութիւններով և աւերակներով, նեղ-նեղ փողոցներով և հին շինութիւններով։ Իսկ ձախ կողմը փուռած է նոր Աթէնքը իւր համալսարանով, եւրոպական ճաշակով շինուած շէնքերով, լայն փողոցներով, որմարաններով, հիւրսանոցներով, որտեղ և մենք խմբերով տեղաւորուեցինք։

Հնդիանուր որոշման համաձայն, երկու ամբողջ օր էքսկուրսանները իրենց ազատ կամ-

քին թողնւեցան երկար ճանապարհորդութիւնից
մի քիչ հանգիստ առնելու համար։ Օգտուելով
այս կարծ ժամանակամիջոցից, մենք կարողա-
ցանք քիչ թէ շատ ծանօթանալ նոր քաղաքի և
նրա մէջ թագաւորող արտաքին կեանքի հետ։

Աթէնքը, որպէս ժողովրդական տնտեսական
զարգացման նպաստող քաղաք, այնքան էլ յար-
մարաւոր չէ։ Վաճառականութիւնը չի կարող
առաջ գնալ այստեղ, որովհետև քաղաքի տեղը
խուլ է և երկրորդ բաւական հեռու նաևա-
հանգատից։

Թագաւորական պալատը, որ գտնվում է Հեր-
մէս կոչուած փողոցի ծայրում, թէև զարդա-
րուած է մարմարեայ քարերով, բայց այնքան էլ
ճաշակաւոր շենք չէ իւր տեսակի մէջ։ Կա աւելի
զօրանոցի է նման, քան պալատի։ Սակայն այս
պալատի դիմացի պարտէզը հրաշալի է և ճաշա-
կով զարդարուած։ այստեղ ծառերը, ծաղիները,
մարմարեայ արձաններն այնքս են դասաւոր-
ուած, որ հրաշալի գեղարուեստական ապաւորու-
թիւն են թողնում։ Արեի կիզիչ ճառագայթնե-
ներից այստեղ կարելի է ծառերի ստուերի տակ
պաշտպանուել։ Մեր շրջապատի գեղեցկութեան
պակասը լրացնում էին ծառերից մշտապէս
կախուած գոյնզգոյն լատաերները, որոնք վառ-
ուում են միայն տօնական օրերը։ Մի քիչ հեռ-
ուում երկում է արմաւենի ծառերի մի խմբակ,
շրջապատուած ծաղիներով, իսկ սրանից մի քիչ
հեռու, գեղեցիկ սիւների վրայ-խաղողի բար-

ձրացած թփերը, ուր մահկանացուների մուտքն
արգելուած է։

Նոր քաղաքում աչքի ընկնող շինութիւննե-
րից է համալնարանը, վերստին մարմարից շինած,
բայց դարձեալ ոչ այնքան ճարտարապետական։

Ընդհանրապէս Աթէնքը իւր շէնքերով պար-
ծենալ կարող չէ։ Միայն նոր քաղաքի ուղիղ ու
լայն փողոցները, գլխաւոր փողոցների շուր-
ջը քիչ թէ շատ ճաշակով շինուած աները,
սրճարաններն ու խանութներն են, որ Աթէնքին
եւրոպական քաղաքի նմանութիւն են տալիս։

Արևմտեան «քաղաքակրթութիւնը», ըստ
երեսութիւն, վաղուց է մուտք գործել այսուղ։
Քաղաքի կենտրոնական մասում, նամանաւանդ
երեկոները, անհնարին է դառնում մանգալը,
երկու սեռի երթեւեկութեան պատճառով։ Այդ
բազմութեան միջից մէկ էլ տեսնում էք ցիկն-
դրաւոր և մաքուր հագնուած կառապաններ վե-
րի ու ներքի սլանալիս։

Տեղացիք հագնուում են եւրոպական ճաշա-
կով, շատ պարզ և հասարակ, առանց պաճու-
ճանքների։ Միայն հասարակ գասակարին է, որ,
ինչպէս ամէն տեղ, այնպէս և այստեղ հաւա-
տարիմ է մնացել հայրենիքի տարագին։

Փողոցներում դուք յաճախ կը տեսնէք խա-
ղողով և թզով լիքը քաղակները էշերին բար-
ձած և զբանց կողքին արկից այրուած, սեա-
չեայ, խորամանկ և կրակոտ հայեացքով, գանգուր
մազերով, կարճահասակ յայնը։

Խանութների ճակատը, փողոցները զարդա-

ըող ցուցանակների վրայ երբեմնակի աչքի են ընկնում պատմական անուններ, օրինակ, Թէմիստոկլէս... Նայում էս ներսը, տեսնում ես—կօշկակար է: Անագսագորսո, Դիոդինէս և այն: Նայում ես—գրչահատ կամ ծխախոտ վաճառողներ են:

Փողոցների անկիւններում դարսուած են ձմերուկ, սեխ, քաղակների մէջ թուզը, նուռ, չամիչ, մօտ երեք նարնջի մեծութիւն ունեցող ընկոյզներ. մի քիչ այն կողմը թաքաղների վրայ դարսուած—եփած կամ տապակած մանրիկ ձկները և այն: Այս բոլոր վաճառողներն էլ իրենց աղմուկով, աղաղակով լցնում են փողոցները:

Երբեմն էլ փողոցի անկիւններում հանդիպում էք կուչ եկած կոյր աղքատների ողորմութիւն խնդրելիս: Մի քիչ հեռու, հրապարակի մէջ տեղը, հոետորը, աթոռի վրայ բարձրանալով, ինքը զինքը կոտրատելով, ոտքի, գլխի, դէմքի, ձեռների և ամբողջ մարմնի շարժումներով և բարձր աղաղակով ունկնդիրներ է ժողովում իւր շուրջը և բացողեայ դասախոսութիւն կարգում: Մըարանների առաջ ընդարձակ մայթերի վրայ տեղաւորուած ամբոխից լուսող լեպտա և դրախմա (լեպտան $\frac{1}{4}$ կոպ., դրախման—25 կոպ., վերջինս թղթադրամ) խօսքերը մարդու ականջ են խլացնում:

Մինչև զիշերուայ ժամը երկուսն Աթէնքում կեանքը եռում է սահմանադրութիւն կոչուած հրապարակում, որտեղ նուազում է երաժշտա-

տական խումբը: Զբոսնում են այստեղ առանց սեռի և դասակարգի խարութեան: Սուրճ են խմում մի բաժակ սառը ջրի հետ և ապա սկսում թղթախաղը ինչպէս այս հրապարակում, այնպէս և զլիսաւոր փողոցներում սրճարանների առաջ:

Աթէնացիք մեր այնտեղ եղած միջոցին պատրաստում էին զեռ մի ամիս յետոյ ընտրուելիք քաղաքագլխի համար. երեկոները համարեայ թէ ամբողջ քաղաքը ոտքի էր կանգնում: Փողոցների շուրջը գտնուած աների պատշամբներից, պատուհաններից, խանութներից գոներից կախուած էին թեկնածուների պատկերները:

Եմէն երեկոյ ժամը 8-ից յետոյ մարդիկ, երկու հակառակ խմբի բաժանուած, ժողովւում էին ըստ մեծի մասին իրենց թեկնածուների տան առաջ, ճառեր արտասանում, ապա շրջում փողոցներն ահագին խմբերով, գուռում-կոչումով: Այս ամէնի պակասը լրացնում էին զուռնան և թմբուկը: Կառքերի մէջ նստած, բենգալեան լուսաւորութեան տակ, պտտում են քաղաքի մեծ փողոցները, յաճախակի ատրճանակներ արձակում օդի մէջ: Այդ խլացնող աղաղակների միջից լսում էր ամբողջ ժամանակ Անգելոպոլոս, Մերկուրիանոս (թեկնածուների անունները): Երբեմն էլ հակառակ կուսակցութիւնները, միմեանց հանդիպելով, կոռւի էին բռնւում և նոյն խոկ սպանութեան տեղիք տալիս:

Պետական հեծեալ ոստիկանութիւնը միայն առաջնորդում էր խմբերին այնպիսի ճանապարհ-

ներով, որ չ'հանդիպեն հակառակ կուսակցութիւնները միմեանց:

Պէտք է ասել, որ այս սահմանադրական երկրում մտքի ազատութիւնն ամէնասրբագործուած օրէնքն է համարում ու ճանաչում:

Սրանց մի զարմանալի ու չտեսնուած սովորութիւնն էլ ճանապարհին յաճախակի համբուրուելն է:

Այս սովորութեան հաւատարիմ են մնացել հասարակ գասակարգը և ազգային տարագ կրողները: Օրուայ մէջ քանի անգամ միմեանց հանդեպեն, պիտի համբուրուեն. այսպէս որ անցորդն ամէն մի քայլափոխում ներկայ է այդ օրինակ տեսարանի:

Նրանց ազգային տարագը հետեւեան է: Վարդագոյն ֆէս իւր կապոյտ փնջով: Բաճկոնակ—վրան ոսկեգոյն քողով կարած: Բաճկոնակի շարունակութեան վրայ մինչև ծնկները կախուած է սպիտակ փուստանելլան (արխալուղ) անթիւ ու անհամար ծալուածքներով: Ոտներին հագած ունին չարուխներ (տրեխ), ծայրին—մատերի կողմը—մանուշակագոյն փնջով:

Ակրոպօլիս:

Աթէնք մտնելու երկրորդ օրը մեր ուսուցչապետներն իրենց պաշտօններին անցան: Սկսուեցին մեր պաշտօնական պտոյտները: Առաջին անգամ էօլա կոչուած փողոցով ուղեորուեցինք Ակրոպօլիս: Դէպի Ակրոպօլիս բարձրացող լանջի

վրայ հին ու աւերակ շէնքերի ու պարիսպների մօտով բարձրացանք դէպի Ակրոպօլիս տանող դուռը:

Յոյներն ամէն բան աւարի մատնելուց յետոյ, կարծէք թէ, նոր են խելքի եկել ու պահապան նշանակել կամ մուտքը արգելել և թոյլ չ'տալ այս ու այն կողմը թափթփուած մարմարեայ քարերի մանր կտորներն անգամ վերցնելը: Մեզ համար մուտքը ազատ էր. մտանք ներս:

Չնայելով մեր շուրջն աւերակների կոյտեր էին միայն երեսում, բայց և այնպէս առաջին հայեացքից հրաշալի տպաւորութիւն թողեց մեզ վրայ: Դէպի վեր տանող մարմարեայ աստիճանները աննկարագրելի գեղեցկութիւն ունին: Չնայած ահագին բարձրութեան, առանց դժուարութեան էինք բարձրանում: Թւում էր, թէ մի ինչ որ զօրութիւն վերևից քաշում, տանում էր...

Աստիճանների վերևի մասում կանգնած են Պրօպիլէի հսկայական կիսագործան մարմարեայ սիւները, թւով վեց հատ (Պրօպիլէյը շինել է Պերիկլէսը), որոնք, ըստ երեսութիւն, դէպի հրապարակ տանող սրահի գարզարանքն են կազմում: Ալարակ տանող սրահի գարզարանքն էլ դարձեալ Մարմարեայ սպայատակով սրահն էլ դարձեալ մարմարեայ աստիճաններով վեր է տանում Պարթենոն տանող հրապարակը:

Պրօպիլէի աւերակ սիւների մօտով անցանք և մտանք հիւսիսային մասի դահլիճը, որը կոչւում է Պինակոտիկա, որտեղ իրը թէ պահուել աստուածներին տրուած նուիրաբաննութիւնները: Սա եղել է հին պատկերների կամ արձանները:

ըի սրահ ևս: Այստեղ միայն երեք սիւներ են կանգուն մնացել, որոնք և հազիւ հազ հնարաւորութիւն են տալիս ամբողջութեան մասին գաղափար կազմելու:

Ապա մօտեցանք հարաւային մասի կիսակործան տաճարին: Մեր չորս կողմը թափթփուած մարմարեայ սիւներն ու քարերը, կարծէք թէ, մի ինչ որ խորհրդաւոր բան ունէին թաքցրած իրենց մէջ, որոնց գեղեցկութիւնը միայն մարդկային ձեռքը կարող է ոչնչացնել: Քանդակներն այնքանչեն աւերուած, որ հազիւ են նշմարւում:

Ամէնայն հաւանականութեամբ այս շէնքերը, որոնք հարաւից և հիւսիսից միացած են եղել Պրօպիլէի հետ, առանձին-առանձին ճարտարապետական շէնքեր չեն եղել, այլ Պրօպիլէի գեղեցիկ ճարտարապետութեան մասեր:

Պրօպիլէյը թէկ մօտ 200 քայլ հեռու է Պարթենոնից, բայց ամէնայն հաւանականութեամբ նրա սրահը պէտք է եղած լինի (մեզանում սրահը բնակարանին կամ գաւիթը եկեղեցուն է կպած): Պրօպիլէյից ուղղակի մանում էք հրապարակ:

Այս հրապարակի միջին մասում Պերիկլէսի ժամանակ կանգնած է եղել այսպէս կոչուած Աթենքի պահապանի հսկայական արձանը (Athene Promachos)—Մեծն Փիդիասի ստեղծագործութիւնը, որի կիմքն է միայն մնացել: Այս արձանի պատճէնը գտնուում է Աթէնքի կենտրոնական թամբարանում, որն այնքան էլ տպաւո-

րիչ չէ և դժուար թէ նա իւր այսօրուայ դրութեամբ գեղարուեստի հրաշալի արտայայտութիւն համարուի:

Պրօպիլէյի և Պինակօսիկայի ընդհանուր տպաւորութիւնը թէն աւերակ, բայց ամբողջութիւնը և ներդաշնակութիւնը չի անյայտացել... կանգնած եմ Պրօպիլէյի հարաւային սեան շուաքում: Հեռուում երկում են էլեզիսի ծովախորշը, Սալամինա կղզին, Պելոպոնէսի լեռնային բարձրութիւնները: Աջ կողմս փուուած է Ատտիկայի տարածութիւնը իւր հրաշալի նոճի անկայի տարածութիւնը էր: Հեռուում արետափառներով... Արևը այրում էր: Հեռուում արեգակի ճառագայթներով լուսաւորուած է ծովը: Շըրջապատի բնութիւնը իւր զարմանալի գեղեցկութեամբ և հսկայական աւերակներով կախարդիչ տպաւորութիւն էր անում:

Երբ հայեացքդ յոգնում է և աչքդ դարձնում ես շուրջդ, դէպի գետին փուուած հսկայական սիւներն ու արձանները, Պարթենոնը,— առանց զարմանալու հաշտուում ես այն մտքի հետ, որ բնութեան այս ծայրում մեծացած մարդը որ բնութեան այս ծայրում մեծացած մարդը մշմարիտ որ կարող է ստեղծագործել Պարթենոնի պէս անման ու ներդաշնակ գեղեցիութիւնը:

Իմ աջ կողմը կանգնած է հսկայի նման Պարթենոնը, իսկ ձախ կողմը՝ էրեխտիօն կոչուած գեղեցիկ տաճարը (էրեխտիօն թագաւորի տաճար), որն իսկապէս երեք փոքրիկ մատուռները, որն իսկապէս միացումն է գեղարուեստի ների ներդաշնակ միացումն է գեղարուեստի հիմակատար արտայայտութեամբ, այնպէս, ինչ-

պէս Պարթենոնը իւր մեծութեամբ և պարզութեամբ: Այս տաճարի հարաւային սրահը զարդարում են գեղարուեատական բարձրաքանդակ կանացի վեց նկարներ: Նոյն ձևի մի սրահ էլ, ըստ երևութիւն, եղած պէտք է լինի տաճարի հիւսիսային մասում, բայց այժմ կործանուած և աւերուած:

Էրեխտիօն թագաւորի այս տաճարն ընծայաբերուած է եղել Ակրոպօլիսի պահապան Աստուծուն և անընդհատ վասուել են այստեղ ոսկեայ կանթեղներ: Սա եղել է Ակրոպօլիսի ամէնահին, թանկագին և սրբազն տեղերից մէկը... իսկ այսօր իւր անպաշտպան և աւերակ դրութիւնն է ողբում...

Այս տաճարը մի ժամանակ նորոգուել և Բիւզանդական եկեղեցի է դարձել, ապա տաճկական աւերումներից յետոյ հարեմի է փոխուել:

Տաճարի շուրջն անխնամ կերպով թափ-թփուած են արձանների և մարմարեայ քարերի կտորներ, նոյն իսկ կոյտեր, հնութեան մնացորդներ: Այս աւերակների կոյտերի շարունակութեան վրայ, դէպի հիւսիս, պահպանուել է Թեմիստոկլէսի պատերի մի մասը, որից ներքե, ձեր ոտքերի տակ փռուած է Աթէնքը:

Մենք մօտեցանք Պարթենոնին Արբազան կոչուած ճանապարհով: Պարթենոնի գեղեցկութիւնը իւր բազմաթիւ մարմարեայ սիւների ներդաշնակցութեամբ ոչ միայն գրչով, այլ և վրձինով գծագրել կարելի չէ: Երբ մարմարեայ աստիճաններով վեր ես բարձրանում և մտնում

ներս, կարծում ես, թէ ամբողջ շինութիւնը ծռուած է: Բայց քիչ դիտելուց յետոյ համոզւում ես, որ հիմքն է այդպէս դրուած, որպէսզի սիւների շարքերը, որ ուղղութիւնից էլ դետես, մի գծի վրայ երևան: Ոչ այնքան ժամանակը, որքան մարդն անբարեխիղն է գտնուել այս տաճարի նկատմամբ. նա քանդել, աւերել և կողոպտել է Պարթենոնը, առանց նրա փոխարէն մի բան ստեղծագործելու: Պատերի վրայ մնացել են միայն աւերաման թուականներ և ընդհանրապէս մարդկային տգիտութան հետքեր:

Պարթենոնի հիւսիս-արևմտեան պատի վրայ նշմարելի են քրիստոնէական կենդանազրութեան հետքեր: 5-րդ դարում քրիստոնեաններն այս հեթանոսական տաճարը դարձրին Աստուծամօր տաճար, իսկ յետոյ, 13-րդ դարում, Պարթենոնը այսօր, միտրոպոլիտների աթոռանիստ: Ապա դարձաւ միտրոպոլիտների տաճիկներ-15-րդ դարում Պարթենոնն ընկնելով տաճիկների ձեռքը, մեշիդի վերածուեց, պատերը ծեփերի ձեռքը, մեշիդի վերածուեց, պատերը ծեփերի ձեռքը, և մեշիդի յարմարութիւններ ստեղծելով: լով և մեշիդի յարմարութիւններ ստեղծելով: Մինչև այսօր էլ նկատելի են Պարթենոնի հարաւայինչեւ այսօր էլ նկատելի են Պարթենոնի հարաւայինչեւ այսօր էլ ներսի կողմից, արևմտեան անկիւնում, պատի ներսի կողմից, որտեղով բարձրանում որորապտոյտ աստիճանները, որտեղով բարձրանում են մինարէթը...

Պարթենոնը վերջին անդամ աւարի մատնուեց անգլիացիներից, որի համար Բայրոնն այստեղ եղած ժամանակ նկատել է, թէ նրա հայտնի այստեղ անգամ գալու համար անհնարինակ էին բիւնակիցներն արին այն, ինչ որ պակաս էին բիւնակիցներն արին այն, ինչ որ պակաս էին բիւնակիցները... Անգլիացի լորդ Էլգինը թողել բարբարոսները...

յափշտակել և հայրենիք էր տեղափոխել Ակրոպոլիսի արձանները:

Փամը երկուսը լրացել էր, երբ վերադարձանք քաղաք: Ժամը հնգին վերստին Ակրոպօլիսումն էինք, թեզէոսի և իւպիտերի տաճարների մօտ:

Թեզէոսը Աթէնքի թագաւորն էր, ապրում էր 13-րդ դարում Ք. ա.: Սա թէկ ժողովրդին բարերար էր համարում և մանր իշխանութիւնները միացնելով, Աթէնքը կենտրոն դարձրեց, վերջը զանազան դաւադրութիւններից ստիպուած փախաւ մօտակայ կղզիները, որտեղ և սպանուեց: 5-րդ դարում աթէնացիք փոխադրեցին նրա մարմինը Աթէնք և նրա անունով հիմնեցին հաւանականորէն ինչպէս այս, այնպէս և ուրիշ տաճարներ, աղօթատներ և այլն:

Աթէնքի հին յլշատակներից ոչ մէկը այնքան լաւ և ամբողջ չի մնացել, որքան թեզէոսի տաճարը: Իսկ, ընդհակառակը, ոչ մէկը այնքան չի աւերուել ու կործանուել, որքան իւպիտերի տաճարը (իւպիտերը կամ Զևսը երկինք և երկիր կառավարողն է—աստուածների հայրը):

Մօտ 25 ձիգ դարերի ընթացքում այս տաճարը զերծ է մնացել բարբարոս ձեռքերից. միժամանակ դարձել է վառողի պահեստի տեղ, երբեմն էլ եգիպտական զինւորների զօրանոց և ապա ալբանական ջորիների ախոռատուն և այլն: Բոլոր հնութիւններիցնա աւելի կանգուն է մնացել իւր վերին աստիճանի ամրութեան պատճառով:

Այս տաճարը չունի Պարթենոնի գեղարուես-

տականութիւնը, ոչ էլ էրեխտիօնի հրաշալի ճարտարապետութիւնը: Մարմարեայ սիւներն ու ճակատներն հիւսիսային կողմից սևացել են հնութիւնից, իսկ հարաւից ոսկեգոյն փայլ ստացել արեգակից: Վերջերս տաճարը թանգարանի վերածուեց: Այստեղի հնութիւնները այժմ փոխադրուած են Աթէնքի կենտրոնական թանգարանը:

Անցնելով Դիմօսթենէսեան կոչուած լապտերի մօտով, կանգ առանք դէպի Ակրոպօլիս բարձրացող քարաժայոի մօտ:

Մեր ձախ կողմում երկում էր Ստադիօն կոչուած տեղը, որտեղ հնում կատարւում էին Աթէնական խաղերը: Նրա մօտ էլ, լեռան մթութեան մէջ, կանգնած են Ազրիանոս կայսեր անուամբ մնացած սպիտակ մարմարեայ կամարները: Սրա շարունակութեան վրայ էլ՝ Օլիմպիական իւպիտերի աւերակ տաճարից մնացած մի խումբ սիւներ:

Անկարելի է նկարագրել այն տպաւորութիւնը, որ մարդ ստանում է այդ հսկայական աւերակների մօտ: Ոչ Կովկասեան լեռներն ու Մասիսը և ոչ էլ Շէքսպիրի դրամաները կարող են մարդու ներքին աշխարհն այնքան յուզել, որքան այս աւերակ տաճարների հսկայ մնացորդները: Տաճարն այնպէս է աւերուած, որ մարդու երեակայութիւնն անգամ դժուարանում է պատկերացնել հինը:

Այս տաճարը կանգնեցրել են աթէնացիք մօտ 700 տարուայ ընթացքում: Հիմքը դրել է դիցարան կամ առասպելաբան Դևկալիօնը և վեր-

Հացել է Աղբիանոս կայսեր ժամանակ։ Այստեղ մտել է Աղբիանոս կայսրը, հանելով դրան շէմքում իւր հողաթափերը։ Այս տաճարի առաջ հիացմաւնքով կանգնել է Աղբասանդը Մակեդոնացին։ Մարդկային բարբարոս ձեռքերը սակայն հսկայական տաճարից թողել են միայն այս հսկայական աւերակները։

Շուրջա թափթփուած մարմարեայ սիւներից մի քիչ հեռանալով, հանգիստ առայ մարմարեայ քարերի վրայ։ Արեգակը մայր մանելու վրայ էր. խաւարը կամաց-կամաց սկսել էր թագաւորել։ Բարձրում միայն դեռ սպիտակին էր տալիս հսկայ Պարթենոնը։ Քիչ յետոյ մութը տիրեց աշխարհին։

Հեռում երևացող լեռները սեացան և երկնքում սկսեցին փայլել աստղերը։ Մեր շրջապատի երկիւղ ազդող խորին լուսթեան մէջ միայն փչում էր երեկոյեան հով քամին։

Երբ բարձրացանք վերե, հեռու հորիզոնում, լեռան ետեից տամաչկոտ հարսի պէս լուսինը իւր դէմքի կէսը ցոյց տուաւ մեզ։ Մեր հայեացը Ակրոպոլիսից չէր հեռանում։ Յերեկը Ակրոպոլիսը գեղեցիկ է, բայց Պարթենոնի և Պրօպիլէյի հետ միասին աւելի խորհրդաւոր է լուսնեակ գիշերը։ Հեռուից նայողը կարծում է, թէ Պարթենոնը կանգուն է ամբողջովին, իսկ Պրօպիլէյը հսկայական միւներով գեղեցիկ դեկորացիայի է փոխարինում։ Գիշերային խաղաղութեան միջից փչող սառը գեփիւսի ներքոյ, կար-

ծէք թէ, մարդ զգում է իրեն մի այլ աշխարհում։

Մարդ երբ հնութիւնը իրեն տեղն է տեսնում, մի այլ տպաւորութիւն է ստանում։ Աթէնքում ոչ մի թանգարան չի կաբող փոխարինել բացօղեայ Ակրոպոլիսին, որտեղ ամեն մի քայլափոխում, բաց երկնքի տակ, գուք հանգիպում էք աւերակ յիշատակների մնացորդների, — յիշատակներ, որոնք Յունաստանից շատ հեռու են այսօր։ Սուլթաններն ու փաշաները վաճառել կամ նուել են ուղարկել եւրոպացւոց, մտքներովն անգամ չանցկացնելով։ Թէ այդ արձանները կարող են երբեցէ Յունաստանի ազատութեան միջնորդ հանգիստանալ եւրոպայի առաջ։

Եւ իրօք Յունաստանն այսօր իւր ազատութեամբ պարտական է միայն իւր արուեստին։ Իւպիտիներն ու Վեներաներն (Ափրօդիտէ — սիրոյ աստուած) իրենց չտեսնուած գեղարուեստով զարմացրին եւրոպային և կարեկցութիւն առաջ բերին... Այդ մարմարեայ արձաններն ու յիշատակարանները քարոզեցին եւրոպացիներին և իրենց արուեստի հայրենիքի համար ազատութիւն խնդրեցին։ Ահա այդ հայրենիքի այցելու Բայրոններն ու Սանտարօգանները եւրոպա տարած հանճարով գնեցին Յունաստանի ազատութիւնը...

Յաջորդ օրը, որոշման համաձայն, պէտք է դիտէինք Ակրոպոլիսի շրջակայքը։ Ժամը 11-ն էր, որ արդէն Պարթենոնի շուաբում սպասում էինք ուսուցչապետներին։ Կէս ժամից յետոյ, անցնելով Ակրոպոլիսի թանգարանի մօտով (այս շէնքն

այնքան ցածր է շինուած, որ Ակրոպօլիսի ընդհանուր մակերևոյթի վրա իբրև առանձին աչքի ընկնելու բան չի նկատում, մէջն էլ աննշան հնութիւններ են պահուում), ոլորապառյա ճանապարհով իջանք դէպի Ակրոպօլիսի հարաւային զառիվայրը — Դիանայի թատրոնը (Դիանան կամ Արտեմիդը Ապօլօնի — արեգակի — քոյրն է. կոչւում է գիշերուայ աչք, երիտասարդների և օրիորդների պաշտպան, լուսնի աստուած):

Ակրոպօլիսի այս հակայական ժայռերի շարունակութեան վրայ ձգւում են մի քանի բլուրներ, շրջապատուած լեռկ դաշտերով։ Այս քարաժայռերը ևս իրենց պատմական հնութեամբ քիչ չեն գրաւում այցելուների ուշադրութիւնը. այդտեղ է Պնիկսը, Արիոպագոսը, (աթէնացւոց դատաւորների ատեան), Սոկրատէսի բանտը, դէպի ուր և ուղերուուցինք:

Ճանապարհը անցնում էր խոպան դաշտով, ծածկուած ամբողջապէս մանր և սուր քարերով, որոնց մօտ երբեմակի երկում էին չորացած փոքրիկ թփեր և երկի տաքութիւնից կամ փոշուց գոյնը թոցը օշինդրը (բոյս): Արեգակը վերեից այրում էր անխնայ կերպով։

Երբ անցանք այդ տիսուր տարածութիւնը, մեր առաջ բացուեց մի հարթ ու հաւասար հրապարակ, որը, մի կողմից բարձրանալով, միանում էր մի ժայռի հետ։ Այս ժայռի վերեի մասը արհեստական կերպով հրապարակ է դարձրած. սա Պնիկս կոչուած տեղն է, որի բարձր մասից կամ բեմից շարունակ հնչուել է Թեմիստոկլէսի, Ալ-

կիպիատէսի, Դեմոսթենէսի, Պիրեկլէսի ձայնը։ Այս հրապարակը եղել է այն լսարանը, որտեղ համախմբուել են աթէնացի ազատակամներն ու աւանդապահները, յուզել և յուզուել են հայրենիքի համար իրենց անձը զո՞ն բերողները։ Աթէնեան այս Պնիկսը կապյա երկնքի տակ, շրջակայ աւերակներով, անցեալի յիշատակներով, լերկ պատերին փոխարինող մերկ ժայռերն իրենց տեսարաններով իհարկէ աւելի պիտի ոգևորէին հոետորներին, քան մարդկային մի որևիցէ հրաշալի պալատ։

Պնիկսի տեղը բաւական յաջող է։ Մի կողմից երկում է Պարթենոնը, միւս կողմից՝ Թեզէսուի տաճարը, իսկ ետեւեկի կողմից՝ Արիոպագուը։

Պնիկսից դէպի ձախ աւերուած աստիճաններով բարձրացանք դէպի ժայռի վրայի տափարակը, որի չորս բոլորը, ինչպէս թատրոնում, բազկաթոռների ձևով ժայռի բնական քարից շինուած են նստելու տեղեր։ Ահա այստեղ են խմբուել և վճիռներ տուել Աթէնքի դատաւորները։ Այստեղ է ի միջի այլոց դատուել Սոկրատէսը, որի բանտը հէնց ուղիղ նայում էր մեզ։

Մենք վերստին իջանք դաշտը։ Արեւ դարձեալ շարունակում էր այրել։ Շուտով հասանք մօտ 5 – 6 սաժէն բարձրութիւն ունեցող ժայռի, որը շարունակում էր մինչև ծովի ափը։

Այս ժայռը Արիոպագոս նայող կողմից ունի երեք դուռ կամ անցք։ Մօտենալով այդ դուներին, մտայ դիմացի քարանձաւը։ Սա մի փոքրիկ քա-

սանկիւնի սենեակ է, փորուած ժայռի մէջ: Ասում
են, թէ այստեղ պահապանն է եզել: Երկու կող-
մի պատերից էլ մի-մի պատուհանի պէս բացուածք
կայ, որտեղից իբր թէ հսկել են կալանաւորնե-
րին: Մեր աջ կողմի պատուհանը նայում էր ուղ-
ղակի ճշմարիտ հայրենասէր Միլտիադէսի բան-
տին, իսկ ձախը՝ Սոկրատէսի, որտեղ բանտարկու-
ել և մեռել է ճշմարիտ պատասէրը:

Անցնելով աջ անցքից, մտայ Մարաթոնի
ճակատամարտի հերոսի բանտը, որը բաղկացած
է երկու քարայրից: Առաջինը քառանկիւնի փոք-
րիկ սենեակ է, որը պատուհանով միանում է
միւս սենեակի հետ: Այդ լերկ քարեայ պատերի
վրայ ոչ ժամանակը և ոչ էլ մարդիկ ոչ մի հետք
չեն թողել: Սենեակի շարունակութիւնը քանի
գնում, այնքան նեղանում, մթնում ու վերջն էլ
անտեսանելի է դառնում:

Արտաքին դրան ձախ կողմն է Սոկրատէսի
բանտը, որը նոյն ձեն ունի. պատերը նոյնպէս
լերկ: Միայն նկատելի են մի քանի ստորագրու-
թիւններ, ըստ մեծի մասին եւրոպական լեզու-
ներով:

Արէնքի ուշադրութեան ար- ժանի հաստատոթիւնները:

Բացի Աթէնքի շրջակայ հնութիւններից,
միւմ էր նայել քաղաքի մէջ գտնուած ուշա-
դրութեան արժանի տեղերը:

Իոկապէս ասած, նոր Յունաստանը ոչ մի
բանում այնքան յառաջադիմութիւն չի ցոյց
տուել, որքան ժողովրդական կրթութեան գոր-
ծում:

Տաճկական բռնակալութիւնից աղտառելով,
յոյնի ամէնառաջին պահանջը եղաւ կրթութիւնը,
ուսումը: Թէս պատերազմը վերջացել էր և Յու-
նաստանի արիւնով ներկուած դաշտերը չէին
ցամաքել, ստկայն յունաց կառավարութիւնը
դպրոցներ բաց անելու օրէնքներ հրատարակեց:
Ուսումնածարաւ ժողովուրդը շատ կարճ ժամա-
նակից յետոյ, չ'բաւականանալով այդ դպրոցնե-
ներով, համալսարան և ուսման այլ բարձրագոյն
հաստատութիւններ խնդրեց, որի շնորհիւ Յու-
նաստանը մի քանի տասնեակ տարուայ ընթաց-
քում շատ զգալի չափով յառաջադիմեց ուսման
և լուսաւորութեան մէջ:

Համալսարանի շէնքը Աթէնքի միւս շէնքե-
րից ամէնալաւը, ամէնադեղեցիկն է և հրաշալի
բայ ամէնապատը, ամէնադեղեցիկն է թողնում: Ամբողջ շէնքը շին-
տպաւորութիւն է թողնում: Ամբողջ շէնքը շին-
ուած է սպիտակ կոչուած քարից, որը միշտ
մաքուր և փայլուն է երկում, մանաւանդ արե-
մաքուր և փայլուն է երկում, մանաւանդ արե-
մաքուր և փայլուն է երկում: Շէնքը կառուցուած է հին յու-
գակի լոյսի տակ: Շէնքը կառուցուած է հին յու-
գակին ճարտարապետական արուեստով: Շէնքի
առաջին մասը սրահի նման է և զարդարուած է
սպիտակ մարմարեայ սիւներով:

Երբ մտնում ես ընդարձակ միջանցքը, մն-
միջապէս սկսում են դէպի վեր տանող մարմար-
եայ աստիճանները, որոնք երկու կողքերից
մտնում են ներքին յարկը, որտեղ են համա-

լսարանի գիւանատունը, խորհրդարանը և լսարանը,—բոլորն էլ մարմարեայ սալայատակով և պատերով:

Մարմարեայ աստիճաններով բարձրանալով, մտանք մի բաց սրահ, որտեղ ճաշակաւոր կերպով շարուած էին ծաղկեայ գեղեցիկ փնջեր: Այստեղից դեպի ընթերցարան տանող դրան դիմաց կանգնած է Պղատոնի մարմարեայ կիսարձանը (բիւստ), որի աջ և ձախ կողմերում էլ զանազան նշանաւոր անկախութեան հերոսների պատկերներ (Կօլօկօտրօն, Բօցարիս, Մաւրօկօրդատօ և այլն):

Սրահի շարունակութիւն կազմող սենեակում էլ պահարանների մէջ տեղաւորուած են զրքերը, որոնց թիւը հարիւր հազարից աւելի են հաշւում, ըստ մեծի մասին յունարէն, իտակերէն, ֆրանսերէն, գերմաններէն, անգլիերէն և այլն: Համալսարանի միւս բաժանմունքները սակայն,—օրինակ, ֆիզիքանոցը, բնական գիտութիւնների վերաբերեալ բաժանմունքը, — շատ աղքատ են:

Համալսարանը բաց է ամէնքի համար և ուսումը ձրի է:

Մեր առաջնորդ—հսագիտական ընկերութեան ճեմարանի քարտուղարը—այստեղի ուսանողների պարագմունքների և առհասարակնարան կեանքի մասին մեղ տեղեկութիւններ տալու ժամանակ, իբրև թէ հանաքով, վերջացը իւր ասելիքը Աթէնքի համալսարանի ուսանողների մասին հետեւեալ խօսքերով. «Այստեղի ուսանողները, մի խօսքով, ուսանողական հագուստ

չեն հագնում թատրոններում և այլ տեղերում փայլելու համար, ինչպէս սովորաբար մեծ քաղաքներում, ով գիտէ, գուցէ և Մոսկվայում...»:

Մեր խմբի անդամների դէմքերի վրայ թէկ դժգոհութեան նշաններ երևացին, բայց դառն ճշմարտութիւնը լուելեայն կուլ տուին:

Համալսարանին կից շինուում է մի նոր շէնք, ուր պիտի փոխադրուի մատենադարանը, համալսարանի շէնքը ընդարձակելու համար, որովհետեւ օրէցօր ուսանողների թիւը աւելանում է: Նրանց ընդհանուր թիւը համարում էր երեք հազարի: Ուսուցչապետների բացարձակ մեծամասնութիւնը յոյներ են և իրենց բարձրագոյն կրթութիւնը ստացել են Ֆրանսիայում և Գերմանիայում:

Համալսարանի մօտ է գտնուում գիտութեանց ճեմարանը, որի ամբողջ շէնքը դարձեալ մարմարից է և իւր գեղեցկութեամբ և հսկայական սիւնազարդ սրահով աւելի է գրաւում անցորդի ուշադրութիւնը: Դէպի սրահ բարձրացող աստիճանների երկու կողմը և ընդհանրապէս ամբողջ շէնքը զարդարուած է արձաններով և պատմական գեղարուեստական զանազան նկարներով:

Անցներով համալսարանի պարտէզը, մտանք Պարիսսիա կոչուած փողոցը, որտեղ են և բազմարուեստեան ճեմարանը և կենարոնական թանգարանը: Առաջինի մէջ գետեղուած են Միկելէյի, Տիրինֆի, Նաւպիիայի և Յունաստանի այլ տեղերից հսագիտական ընկերութեան ջան-

քերով քերուած հնութեան մնացորդները, հին վագեր, արձաններ և այլն: Այս ճեմաբանում, ի միջի այլ հնութիւնների, առանձնապէս ուշադրութեան արժանի էին գերեզմաններից հանած հնութիւններ, որ հին ժամանակներում ննջեցեալների հետ հողին էին յանձնում. օրինակ, ոսկեայ մատանիներ, շղթաներ, սրեր, շքանշաններ և այլ հարստութիւններ: Այստեղ կան այնպիսի հնութիւններ, որոնց թուականը հասնում է մինչև 12-դ դարը (Ք. ա.):

Մեր առաջնորդ ուսուցչապեանները, հակառակ քաղաքից դուրս ցոյց տուած եռանդին, պէտք է ասել, որ քաղաքում շատ էին պարտազանց լինում, որի շնորհիւ մենք ստիպուած առանց առաջնորդների էինք պատում և զրկուում պատմական նշանակութիւն ունեցող հնութիւնների լուսաբանութիւններից:

Կենտրոնական թանգարանը զիտելու մտանք առանց առաջնորդի: Անթիւ ու անհամար հնութեան փշրանքների միջից մենք ստիպուած անցնում էինք, բաւականանալով միայն հայեացք ձգելով: Իսկ եթէ արձաններն առանձին ուշադրութիւն էին գրաւում և աչքի ընկնում իրենց արտաքոյ կարգի գեղարուեստականութեամբ, դիմում էինք ցուցակների օգնութեան, անուններն իմանալու համար:

Պէտք է յիշել որ այս բոլոր հնութիւններն էլ պահպանուում են շատ խնամքով և կանոնաւոր: Նրանց մեծ մասը յարմարեցրած է պատերի վրայ, միւս մասը պահպաններում խնամքով

դարսուած, բոլորն էլ համարներով, այնպէս որ ամէն մի այցելու ցուցակների օգնութեամբ կարող է մեծապէս օգտուել:

Թանգարանի շէնքը մի յարկանի է և լիքն է մարդկային ստեղծագործութեան հրաշալիքներով: Զնայելով, որ Յունատանը կողոպտուած է և նրա թանկագին հնութիւնները այժմ ըստ մեծի մասին գտնուում են Հառվմում, Փարիզում, Բերլինում, Լոնդոնում, Փօլսում, բայց և այնպէս այստեղ գեռ ևս մնացել են ուշադրութեան արժանի շատ հնութիւններ:

Ամէնից շատ զիտեցինք հին արձանները, որոնցից մի քանիսը վերագրում են Վլ-դ գարու գործ (Ք. ա.): Այս մասը խակապէս հետաքրքիր է նրանով, որ գեղարուեստը գտնուում է զեռ նախնական անզարդացած դրութեան մէջ: Արձանները ըստ մեծի մասին կոշտ ու կոպիտ և տձեւ են: Գեղարուեստի այս սկզբնական նմուշներից չի կարելի ինարկէ գեղարուեստական բաւականութիւն ստանալ:

Մտանք մի այլ բաժանմունք, որտեղ զիտեղուած էին յատակի և պատերի վրայ մի այլ շրջանի յիշատակներ: Այսպէս շտրունակաբար զիտելով զանազան շրջանների պատկանող մասերի և ապա մարդկային գանգերով լցուած բաժանմունքը, թողեցինք թանգարանը և Արսակէոս կոչուած կանանց բարձրագոյն ճեմարանի մօտով ցրուեցինք մեր բնակարանները:

Կանանց այս ճեմարանը շինուած է Արսակէոս յոյնի անունով, որը այս շէնքի կառուցման հայոց անունով:

մար նուիրել է իւր կարողութեան մեծ մասը։ Այստեղ բարձրագոյն կրթութիւն է ստանում գեղեցիկ սեռը շատ չնշին վճարով։

Ինչպէս այս, այնպէս և նման տեսակի շէնքերը համարեայ թէ բոլորն էլ կառուցուած են մասնաւոր անձանց միջոցներով։ Յոյնը մի զարմանալի և օրինակելի յատկութիւն ունի. որտեղ էլ որ ապրի, որտեղ էլ որ գործ սկսի և հարստութիւն ձեռք բերի, վերջը իւր միջոցները կը տայ կամ կը կտակի հայրենիքի լուսաւորութեան և բարօրութեան։

Ուսումը ոչ միայն բարձր դասակարգի, այլ և աղքատների մէջ այնքան է պահանջ դարձել, որ գիւղերում օրուայ հացին անգամ կարու ուսուցիչները չեն յուսահատւում ու հեռանում իրենց գիւղերից այլ, ամէնայն սիրով և եռանդով հաւաքում են մանուկներին ու բաց երկնքի տակ կամ ծառի շուաքում և կամ եկեղեցու բակում սովորեցնում և վարժեցնում են ուսման մէջ։

Ահա հայրենիքի լուսաւորութեան ճշմարիտ հարուստ պաշտպաններ. օրինակելի ուսուցիչներ և ժողովրդի ու մատաղ սերնդի անկեղծ բարեկամներ, որոնց նմանները, մասնաւորապէս մեր հայկական կեանքում, ճրադրով պէտք է փնտոել։

Էլեւզիս:

Աթէնքից էլեւզիս մօս քսան վերստ է։ Առաւտեան ժամը 10-ին էքսկուրսանաների մի մասը երկաթուղով, միւս մասը կառքով ճանա-

պարհ ընկանք դէպի էլեւզիս։ Ամբողջ ճանապարհը շրջապատուած է խաղողի այգիներով։ Քանի գնում, այնքան աւելի մօտենում էինք ձիթենի ծառերով զարդարուած բլուրներն, լեռներին։ Քանի գնում, այնքան էլ բնութիւնը վայրի կերպարանք էլ ստանում. աւելի ճիշտ ասած՝ մօտենում և մտնում էինք իսկական բնութեան մէջ։ Ճանապարհին յաճախակի պատահող հովիւներն իրենց ազգային տարագներով և յաղթանդամ առողջ կազմուածքով քիչ չէին գրաւում մեր ուշագրութիւնը։

Շուտով մեր առաջ բացուեց էլեւզիսի ծովածոցը Սալամինա կղզով և ապա տեսանելի դարձաւ հին էլեւզիսը—այժմ Լեզին աղքատիկ գիւղը, որտեղը ստ մեծի մասին ապրում են ալբանացիներ։ Էլեւզիսը Աստիկայի այն ամէնահին և յայտնի քաղաքներիցն է, որոնց հիմնադրութիւնը նոյն իսկ աւանդութեան կամ առասպելաբանութեան մէջ ծածկուած է հնութեան մշուշով։ Երկաթուղու կայարանի մօտ, ծովից ոչ հեռու, այնտեղ, որտեղ հին ժամանակներում կատարուել են էլեւզիսան խաղերը, պատրաստուած էր մեզ համար սեղան ծառերի ստուերի տակ։

Մենք առաջ շտապեցինք հին տաճարների և աւերակների հետքերը գտնելու, որոնք այնքան են աւերուած, որ մարդու երեակայութիւնն անգամ ստեղծել չէ կարողանում։ Մեր դիմացը սալայատակի վրայ մնացել են միայն հսկայական քարերի կոյտեր և մարմարեայ սիւների և արձանների կտորներ։ Այս աւերակների կոյ-

տերի շարունակութեան վրայ ծովի եղերքին բարձրանում է էլեկիսի Ակրոպօլիսը, որի ստորառում նշմարելի են հին տաճարների հետքեր։ Այդ բարձրութիւնը հաւանականօրէն աւերակների մի կոյտ է, որի վրայ միայն մի փոքրիկ մատուռ է մնացել (նոր շէնք)։

Կանգնելով այդ բարձրութեան վրայ, մարդ հիանում է իւր շրջապատի տեսարաններով։ Ծովը, շրջակայ ծառաշատ լեռներն ու այգեծածկ դաշտերը մի առանձին ներդաշնակութիւն ու գեղեցկութիւն էին ներկայացնում և տրամադրում։ Մտքի մէջ վերարտադրելու այս վայրերին վերաբերեալ մշուշապատ առասպելաբանութեան և կրօնական հանդէսներին, որոնք ընծայաբերուած են եղել Զեսի քոյր Դեմետրի և իւր դուստր Պերսէֆոնէ դիցուհիներին, որոնց արձանը էլեկիսի թագաւորի որդի Տրիպոլիմի արձանի հետ պահուում է Ամֆէնքի կենտրոնական թանգարանում։ Տրիպոլիմը կանգնած է երկու դիցուհիների մէջ տեղը, Դեմետրին՝ յենուած Գայլսոնի վրայ, իսկ Պերսէֆոնէն պսակում է թագով։ Ամբողջ պատկերը շատ խորհրդաւոր է և կրօնական տպաւորութիւն է թողնում։ Այս խորաքանդակ արձանները վերաբրուում են Ֆեղէսի ժամանակներին։

Էլեկիսեան կրօնական հանդէսները տօնուելիս են եղել տարեկան երկու անգամ։ Առաջինն՝ աշնան, — երբ սառչում էր երկիրը կամ ընութիւնը, Պերսէֆոնէն իջնում էր իւր ամուսնու մօտ (ծովի աստուած)։ Երկրորդը՝ գարնան,

երբ կենդանանում էր բնութիւնը, Պերսէֆոնէն վերադառնում էր ցամաք, իւր մօր մօտ (պտղաբերութեան աստուած)։ Տօներն ընդհանրապէս կատարուել են շատ փառաւոր։ Առանձնապէս շքեղութիւն և խորհրդաւորութիւն են ստացել այդ ծիսակատարութիւնները, երբ աթէնացիք Աթէնքից սկսելով մասնակցել են հանդիսաւոր թափօրներին։ Այս կրօնական հանդէսներին մասնակցողները յատուկ ընտրութեամբ էին ուղեկցում, որովհետև կրօնական այն համոզումն էր թագաւորում, թէ հանդէսներին ընտրեալ մասնակցողները ազատուում են մահից և դժոխքի չարչարանքներից։ Մինչև չորրորդ դարու վերջերը (Ք. յ.) այս տեսակի փառաւոր տօնակատարութիւնները շարունակուել են, իսկ այդ թուականներում, էլեկիսի վերջնական կործանումից յետոյ, վերջնականապէս դադարել։

Երկար ժամանակ բլրակի բարձրութիւնից շրջապատս դիտելուց յետոյ, գեղեցիկ բնութեան մնաս բարեաւ ասացի և նոյն աւերակների վրայով դարձայ գիւղը։ Ժամը 5-ին մենք թողեցինք էլեկիսը։ Կէս ժամից արդէն էլեկիսն անյայտացաւ մեր տեսողութիւնից և երկու ծառաշատ լեռնաշղթաներ մեզ փակեցին իրենց մէջ։

Արեգակը թեքուել էր գէպի արևմուտք։ Էլեկիսի յիշողութիւններն էին պտտում մեր գլխում, երբ յանկարծ մեր դիմաց բացուցին Ակրոպօլիսը, Պարթենոնը, Պրօպիլէյը իրենց շրջակայ աւերակներով, որ արևի վերջին ճառա-

գայթների ներքոյ, կարծէք թէ, աւելի խորհրդաւորութիւն էին ստացել: Ահա և Աթէնքը իւր պահտակ տներով, ուղիղ և լայն փողոցներով, իւր պլիսի վերեռում շաքարի պլիսի պէս բարձրացած ունենալով լիկաբետոտ լեառը: Արեգակն արդէն անցել էր սարի ետևը, երբ մենք մտանք փոշու ամպերի մէջ ծածկուած Աթէնքը:

Դէպի Պարնաս եւ Դելֆիս,

Պիրէյ նաւահանգստում սպասում էր մեզ յունաց կառավարութեան կողմից մեր տրամադրութեան տակ դրուած «Կանարիս» կոչուած փոքրիկ շոգենաւը Դելֆիս տանելու: Երբ հասանք Պիրէյ, արեն արդէն մայր էր մտել. երկնքի անհուն կապուտակութեան մէջ փայլում էին սատղերը: Այս լուսաւորութեան պակասը լրացնում էր Պիրէյի էլեքտրական լուսաւորութիւնը: Երբ «Կանարիս» շոգենաւը շարժուեց, լուսինը երեաց սարի ետևից: Ծովը խաղաղ էր: Շոգենաւը հանդարաւ առաջ էր սահում:

Գիշերը հասանք կորնթոսի պարանոցը, որտեղ մեր շոգենաւը կանգ առաւ մինչեւ լուսաբաց, որովհետեւ նաւապետը վտանգաւոր համարեց գիշերով անցնելլ, ասելով, թէ նախ պարանոցը շատ նեղ է, երկրորդ՝ այնտեղ մի այլ նաւ՝ կայ խորասուզուած և մեր մի անզգոյշ շարժումը կարող է վտանգի ենթարկել մեզ: Արեւ ծագելիս մենք անցանք կորնթոսի պարանոցը:

Եղիական և կորնթոսի ծոցերը միացնող այս պարանոցը մօտ մի վերստ երկարութիւն ունի: Երկու կողմից ցամաքները պատերի ձև ունին և հեռու են միմեանցից մօտ 50 քայլ: Երբ մտնում էք պարանոցը, ցամաքները, երկու կողմից էլ բարձրանալով, փակում են շրջապատի հորիզոնը: Երկու ցամաքները վերեռում միանում են կամուրջով, որի վրայից անցնում է երկաթուղի:

Մեր շոգենաւը, դանդաղ և զգուշութեամբ առաջ անցնելով, մտաւ կորնթոսի ծոցը: Առաւոտեան մեղմ քամուց առաջացած կապտագոյն ալիքները սկսեցին օրօրել մեր շոգենաւը: Մեր շրջապատի ծառազարդ փոքրիկ բլուրները, ծովածոցերը, պարզ և մաքուր օդը, փայլուն երկինքը մի հրաշալիք էին ներկայացնում: Բոլորովին աննկատելի կերպով հասանք էիտէ և փոքրիկ նաւակներով իջանք ցամաքը Դելֆիս գնալու (մօտ 15 վերստ):

Ճանապարհը մի քանի վերստ անցնում է հարթ տարածութիւնով, ձիթենու և խաղողի այգիների միջով: Ապա սկսում է դէպի Պարնաս սարը բարձրացող քարքարոս, ծուռ ու նեղ ուղին (կայ և շօսսէ), որի բարձրութեան վրայ, մօտ երկու վերստ երկարութեամբ, միմեանց ետևից, շարան-շարան մեր կարաւանն էր բարձրանում: Քանի բարձրանում, այնքան էլ լեռան մեղմ և զով քամին հովութիւն էր բերում մեզ, իսկ տեսարանը աւելի հետաքրքիր դառնում: Մեզանից ցած, երկու լեռները միացնող

ձիթենի ծառերով ծածկուած դաշտը, քանի հեռանում ու բարձրանում էինք, այնքան միթնանում, լճի կերպարանք էր ստանում և, կարծէք թէ, բարակ հոսանքով միանում ծովի հետ:

Մենք մօտենում էինք սարի լանջին փուռած յունական գիւղերին, որոնք ըստ մեծի մասին իրենց երկարկանի տներով, խաղողի թիւրով, զարդարուած պատշգամբներով, ծառերի տակ շարուած երկար նստարաններով (ուր երեկոները սուրճ խմելու են հաւաքւում կանաչ նոճիների. ստուերում), իրենց կապոյտ երկնքով ու լեռներով նման էին դեկորացիայի, իսկ բնակիչներն իրենց տարազով՝ դերասանների։ Երբ մտանք գիւղ, նեղ ու ծուռ փողոցները լցուեցին ժողովրդով, որն անսովոր հետաքրքրութեամբ դիտում էր մեզ։ Օդը սկսել էր զգալի կերպով պաղել։

Անցնելով այս մերկ ու աղքատիկ գիւղերով, մարդ ակամայից հարցնում է իրեն, ինչնի են ապրում սրանք։ Ինչպէս այս, այնպէս և Յունաստանի այլ գիւղեր, բացի ծիթապտղից, խաղողից և մի քանի այլ պտուղներից, այրող արեգակից ու կապոյտ երկնքից, ուրիշ չոչինչ չունին, բայց և այնպէս ապրում են։ Բնակիչներն այնքան էլ լեռնական ժողովրդին յատուկ առողջութիւն չունին և ոչ էլ այնքան գեղեցիկ են, նոյն իսկ գեղեցիկ սեռը։ Մի խօսքով, բնակչութիւնը հակասում է իւր շրջապատի հրաշալի ու հսկայած լեռների բնութեան։ Այս ժողովուրդը լեռ-

նային ժողովուրդների յատուկ քաջութիւնը չունի, թէև զուրկ չէ ճարպիկութիւնից։

Անցնելով այս երկու գիւղերից, մենք կանգ առանք մի նոր կառուցուած շէնքի մօտ։ Այս Դելֆեան թանգարանն է, որի մօտից էլ սկսում են արդէն Դէլֆեան աւերակները։ Այստեղ արդէն քնութիւնը անասելի հսկայական կերպարանք է ստանում։ Մեր դիմացը Պարնասի երկու փեշերը հսկաների նման կախ են լնկել դէպի ձորը և այդ երկու փեշերը միմեանցից բաժանող ձորակից հոսում է կաստալի կոչուած աղբիւրակը իւր պարզ ու անուշ ջրով։ Սակայն այսօր այդ ջրից չեն խմում ոչ թագաւորներն ու հերոսները կամ յոզնած ճանապարհորդները, այլ՝ կենդանիները։

Առուակից մի քիչ ներքե, նոճի ծառի շուաքում, նախաճաշ էր պատրաստուած մեզ համար։ Նախաճաշը չէր վերջացել, երբ զիւղից եկած նուագածուների խումբը, բաղկացած մի փող փչողից, մի ձայն պահողից, թմբկից և պարողների խմբից, գրաւեց մեր ուշագրութիւնը։ Մընդի ձայնը սկսեց դղրդացնել օդը, թմբուկն էլ յետ չէր մնում նրանից։ Սկսուեց կլոր պարը։ Խմբի առաջնորդը յանկարծ զատուեց և մի քանի քայլ առաջ ցատկելով, թոչկոտալով, իւր չորս բոլորը ոլոր-մոլոր պտոյտներ անելով, թիւերով, գլխով ու ամբողջ մարմնով զանազան շարժումներ գործելով, գլխարկը վերև նետեց ու ինքն էլ թուաւ, օդի մէջ որսաց։ Իսկ այս բոլոր ժամանակ խումբը իւրն էր շարունակում։ Մի քիչ յետոյ

դուրս եկաւ մի նոր առաջնորդ, որ վերստին նոյն տեսակի շարժումներով այնքան էր արագացնում թռչկոտալը, որ երբեմն կորցնում էի տեսութիւնից նրա մարմնի ամբողջութիւնը։ Մենք էլ մեր լեպտաներով ու դրախմաներով երգիչների ճակատը զարդարելով, աւելի և աւելի էինք ոգեսորում առաջնորդներին։

Դելֆեան աւերակները փոռուած են Պարնասի լանջին։ Թափթփուած քարերից, արձանների մնացորդներից, մարմարեայ սալայատակներից ոչինչ դրական բան չէր կարելի իմանալ. միայն եզրակացնել կարելի էր, որ դրանք Դելֆեան գլխաւոր տաճարի շուրջը գտնուած շէնքերի մնացորդներն են։ Այս աւերակների միջից դէպի վեր տանող օձապտոյտ մարմարեայ սալայատակով ճանապարհը վերջանում է, ըստ երևութիւն, գլխաւոր տաճարով, ուր հաւանօրէն հաւաքուել են Յունաստանի ամէն կողմից թագաւորներ, հերոսներ—Դելֆեան հանդէսներին մասնակցելու։ Այս տօները նուիրաբերուել են լուսոյ կամ արեգակի—բանաստեղծութեան և երաժշտութեան—հովանաւորող Ապօլօնին և տօնուելիս են եղել հինգ տարին մի անգամ։ Տաճարից ոչ միայն ոչինչ չի մնացել կանգուն, այլ և հեաքն անգամ անյայտանալու վրայ է. միայն մնացել է մարմարեայ սալայատակը։

Արել թէս թեքուել էր դէպի արևմուտք, և մեր խումբը սկսել էր յետ դառնալ դէպի թանգարանի շէնքը, բայց ես մի քանի ընկերներով բարձրացայ Պարնասի շղթայի վրայ և կանգ-

նեցի մի ահոելի ձորի եզերքին, որն իսկապէս մի մութ խոռոչի ձև ունէր և, կարծէք թէ, յափտենական մթութեան մատնուած։ Քամին սկսել էր աւելի խիստ սուլել և շըջապատող ժայռերից խուլ ձայներ բերել, թէկ դեռ աշխարհի վրայ լոյսն էր թագաւորում, բայց շըջապատող վայրի լեռները սարսուռ էին ազդում։ Եւ այդ երկիւղն աւելի սաստկանում էր, երբ երբեմնակի հայեացք էի նետում այդ մեռելային, մթութեամբ ծածկուած ու անյատակ անդունդներին։ Դիմացս, Պարնասի լանջին, շարուած են փոքրիկ ժայռերի կոյտեր՝ է որ մամռապատ, է որ բոլորովին մերկ, է որ մանրիկ թփերով զարդարուած։ Փորձեցի մի քանի քայլ ևս առաջ անցնել, սակայն դիմացի տեսարանը փակուեց տեսողութիւնից և նոյն մամռապատ ժայռի շարունակութիւն կազմող լերան շղթան ծածկեց դիմացի հորիզոնը։

Մենք շտապեցինք յետ դառնալ դէպի թանգարան։ Այս թանգարանը նոր շէնք է և պահուում են այստեղ Դելֆեան տաճարի յիշատակների. և արձանների անարժէք մնացորդները։ (Դելֆեան տաճարը նուիրաբերուած է եղել Ափրոդիտէ կամ Վեներա—սիրոյ և գեղեցկութեան աստուծուն)։

Արեգակն արդէն թաք էր կացել, երբ իջանք սարահարթից և մտանք ձիթենու անտառը։ Խաւարը թանձրացել էր. միայն ճանապարհն էր սպիտակին տալիս։ Թիչ յետոյ լուսինը սկսեց մեղմ կերպով լուսաւորել մեր շըջապատը։ Ճա-

Նապարհի եղերքներին կանգնած խաղողի այդիների պահապաններն արդէն կարողանում էին բաւական հեռաւորութիւնից նկատել մեր անըարիշտ վերաբերմունքը խաղողի թփերի նկատմամբ, թէև ճանապարհի եղերքներին այդ այգիներին կից երբեմնակի ճանդիպող ձիթենու ստուբները քիչ ծառայութիւն չէին անում:

Օլիմպիա:

Գիշերուայ ժամը տասն էր, որ «Կանարիս» շոգենաւը մեզ սլացըք դէպի ծովի խորքը՝ դէպի Օլիմպիա: Անցնելով Պատրասի ծոցով, մտանք Յոնիական ծովը: Երբ մօտեցանք Պելեպոնէսի հարաւարևմտեան ափին, արեգակն արդէն լուսաւորել էր կապոյտ երկնքի եթերը իւր առաջին խաղաղ ճառագայթներով: Մասնաւը, որ ծածկել էր մեր դիմացի տեսարանը, արեգակի ճառագայթների ներքոյ սկսեց ցրուել, բաց անելով մեր առաջ Օլիմպիան շրջապատող ծառածածկի, ոչ այնքան բարձր լեռները: Նաւահանգստից մինչև Օլիմպիա երկաթուղին սլացաւ խաղողի այգիների միջով: (Օլիմպը սարի անուն է, որը եղել է ասոսուածների ընակարան կամ ժողովասեղի: Օլիմպ երգիչ և եղել է. կարող է Օլիմպիա անուան ծագումը սրանցից լինել):

Պարնասի հակայական ու մերկ սարերին փոխարինում են այստեղ ծառաշատ բլուրներն իրենց ճոխ բուսականութեամբ. այստեղ արդէն

կարելի է ծառերի ստուերի տակ պաշտպանուել այրող արեգակից: Այստեղ աւելի բանաստեղծների կամ բանաստեղծութեան վայր է, քան թէ սպառնացող պատգամախօսութեան (Դելֆեան պատգամախօսութիւն):

Մենք մօտեցանք Ալֆէյ կոչուած գետակին, որից ոչ հեռու գտնւում են Օլիմպիական աւերակները: Դարձեալ քարերի կոյսեր, մարմարեայ սալայատակներ, սիւների և արձանների մնացորդներ: Այս այն վայրն է, որտեղ կատարուել են Օլիմպիական կոչուած հանդէսները կամ խաղերը, նուրիաբերուած Օլիմպիական Զեսի պատուին: (Զեսը կամ Իւլիտերը աստուածների հայրն է—երկինք և երկիր կառավարող): Յոյները չորս տարին մի անգամ պարտաւոր էին վերջ տալ իրենց ներքին խոռվութիւններին և թշնամութիւններին և ամէնքն էլ հաշտ ու ուրախ պիտի դային այս խաղերին մասնակցելու:

Աւերակների մէջն են Զեսի կամ Իւլիտերի տաճարի հետքերը: Բացի այս, Կրօնիօն ծառազարդ սարի լանջում մնացել են նաև Հերայի կամ Իւնոնայի տաճարի հետքերը: (Հերան Զեսի քոյրը և ապա կինն էր. աստուածուհիներից ամէնայարգուածն էր իբրև հաւատարմութեան և բարոյական կատարելութեան տիպ): Միւս աւերակներն այնքան են կորցրել իրենց ձկր, որ չարժէ աւելորդ ենթադրութիւնների մէջ ընկնել:

Այս աւերակներից դէպի Օլիմպիայ գիւղ տանող ճանապարհի ձախ կողմը գանւում է

Թանգարանի մեծ և ճաշակաւոր շէնքը, որտեղ
և պահուում են Օլիմպիական աւերակների մնա-
ցորդները։ Այստեղ մեր ուսուցչապետների
խմբին միացաւ պ. Կաւաղիասը, որն, ըստ
երկութին, աւելի ծանօթ էր և հմուտ հնագիտու-
թեան մասնագիտութեան մէջ, որ և ցոյց տուաւ
թանգարանի հնութիւնները բացատրելիս։

Թանգարանի մէջ ի միջի միւս հնութիւն-
ների ուշադրութեան աւելի արժանի էր Հեր-
մէսի մարմարեայ արձանը։ (Հերմէսը Զեսի որ-
դին է՝ արդիւնաբերութեան կամ վաճառակա-
նութեան աստուածը)։ Դժուար է երկայել
մի այլ արձան, որն ունենար գէմքի և մարմնի
այդքան քնքոյշ արտայայութիւն և գեղեցիկ
կազմութեան ներդաշնակութիւն, որքան Հեր-
մէսի արձանը, որի անհամեմատ հրաշալի և հի-
անալի ճարտարապետութիւնը վեր է նկարա-
գրութիւնից և հասկանալ կարող է միայն նա, ով
իւր սեպհական աշխով կը տեսնէ Օլիմպիական
աւերակների սրբավայրը։ Թանգարանում կան նաև
ուրիշ առաջնակարգ արձաններ, սակայն մի-
այն ոչ իսկականներն, այլ պատճէնները, որոնք
չեն կարող գեղարուեստի կատարելութիւն հա-
մարուել։

Թանգարանը դիտելուց յետոյ բարձրացանք
մի այլ շէնք, որտեղ յունաց հնագիտական ըն-
կերութիւնը ճաշ էր պատրաստել մեզ համար։
Ճաշի ժամանակ երկու կողմից էլ ճառեր փո-
խանակուեցին հնագիտական ընկերութեան գար-
գացման և բարգաւաճման և ընդհանրապէս աղ-

գերի համերաշխ գործունէութեան համար։ Ու-
սանողներն ամէն մի կենացից յետոյ օդը թնդաց-
նում էին երգերով—«Gaudemus», «Wivat
clara Graecia» և այլն։ Իսկ ճաշից յետոյ բաց-
օդեայ երկար ժամանակ երգուեցին ուսուական
երգեր։ Մեր դիմացի Ալֆէյ գետի հովիաը եր-
կար ժամանակ գործում էր «Վիզի ու մա-
տուշեն ու Յօլցն» երգի արձագանքներով։ Այս
երգը ինձ մի բոպէ փոխազրեց Մայր Արաքսի
ափերը…

Ուսանողները, փոքրիկ խմբերի բաժանուե-
լով, ցըսւեցին շըջակայ անտառները, իսկ ես
մենակ քայլերս ուղղեցի գէպի մի բլրակ, որի
գագաթը զուրկ էր ծառերից։ Իմ դիմացի բնու-
թիւնը մի այլ տեսարան էր ներկայացնում։
ծառաշատ լանջը, բնութեան խնամքին մնացած
լինելով, քաօսական պատկեր էր ներկայացնում։
Իսկ երբ անցայ այս ծառերի ստուերով և յայ-
եացք դարձրի գէպի վեր, գէպի լերան գագաթը,
այստեղ բարձրում մի փոքրիկ ժայռն կտած
առանձնութեան մատնուած թուփն աքսորականի
նմանութիւն էր տալիս և թեթե քամուց իւր
շարժող ձիւղերով ու տերենների խշխշոցով,
կարծէք թէ, աղերսում էր տեղափոխել այդ
առանձնութիւնից…

Իմ շըջապատը տիրում էր խորին լուս-
թիւն... Տաքութիւնից նեղուելով և մի քիչ
յոգնածութիւն զգալով, սարի լանջին, մի ծառի
շուաբում կանգ առայ հանգստանալու։ Իմ զիսի
վրայ փուռած լայնատերև ձիւղերը ծածկել էին

Երկինքը: Միայն դէպի ձորն իջնող կտրուածքից երևում էր հեռու հորիզոնը. ես երկար նայում էի հեռուն ու հեռուն: Մի քիչ յետոյ այդ տարածութեան մէջ մարեց հայեացքս. շուրջս տիրող խաղաղութիւնը, որպէս մայրական քնքոյշ մեղեղի և գեփիւոը իւր քաղցր ժախտով օրօր ասելով նինջ բերին իմ աչքերին...

Երբ երկաթուղու սուլիչ ճայնս ինձ արթնացրեց, արևն արդէն չ'կար: Ռոպէապէս դուրս թռչելով այդ ծառերի միջից, մօտեցայ թանգարանին: Քանի զնում, այնքան մի անախորժ զգացմունք անհանգիստ էր անում ինձ. կարծում էի, թէ մէնակ եմ մնացել օլիմպիական այս լեռներում: Շրջապատս խաւար էր և ոչ ոք չէր երևում. հեռուում միայն երկաթուղու ծուխն ամպի պէս քուլա-քուլա բարձրանում էր, դէպի ուր և վազելու չափ արագացրել էի քայլերս: Դեռ չէի հասել կայարան, որ երկաթուղին երկրորդ անգամ սուլեց և բաւական երկար ժամանակ: Մի քանի րոպէից յետոյ ես արդէն գտայ իմ լնկերներին տեղաւորուած երկաթուղու մէջ:

Դէպի Կորնքոս:

Յաջորդ օրը շոգենաւը, Լուտրակի կոչուած գիւղի մօտից անցնելով, կանգնեց կորնթոսի ծոցում, նոր կորնթոս յունական քաղաքի մօտ: Քաղաքի լայն փողոցները, խաղողի թփերով զարդարուած պատշտամբները, դէպի ծովը նայող երկյարկանի տները. բաւական գեղեցկութիւն

էին տալիս քաղաքին: Արեւ թեքուել էր դէպի արևմուտք: Մեր խումբը, մի քանի փողոցներ անցնելուց յետոյ, մտաւ երկու կողմից սիւնազարդ սրահներ ունեցող մի սենեակ: Ինչպէս սրահներում, այնպէսէլ սենեակում դրուած էին սեղաններ՝ դժուար էր որոշել, վաճառատուն թէ ճաշարան էր այս:

Մօտ մի քանի ժամ հանգիստ առնելուց յետոյ, կառքով ճանապարհ ընկանք դէպի հին կորնթոս, որը մօտ եօթը վերստ հեռաւորութեան վրայ էր նորից: Ճանապարհի կէս մասն անցանք ծովի եզերքով, որն այդ ժամանակ հանգիստ էր և խաղաղ: Ծովի միւս կողմի բարձր լեռներն ամբողջ ժամանակ փակել էին դիմացի հորիզոնը: Մել կառքը, թեքուելով դէպի ճախ և անցնելով մի քանի խաղողի այգիների մօտով, երբեմն էլ չոր, անապատ ու արապար տեղերով, կանգնեց գիւղի վերեկ մասում գտնուող մի նոր շէնքի առաջ: Սա ամերիկական հնագիտական լնկերութեան թանգարանն է, որտեղ պահուում են կորնթոսի աւերակների մնացորդները:

Թանգարանի շարունակութիւն են կազմում կորնթոսի աւերակները, որոնք մի քանի նաժէն ցած են ընկած ցամաքի մակերեսոյթից և, շնորհիւ ամերիկացիների, բացուել են, թէև ոչ ամբողջովին: (Կորնթոսի խաղերը կամ հանգէմները նուիրաբերուած են եղել Ձեսի եղբայր՝ ծովի աստուած Պօսիդոնին կամ Նեպտունին և տօնւում էին երեք տարին մի անգամ): Առ այժմ ուշադրութիւն են զրաւուած դէպի վար տանող

աստիճանները և մի քանի ջրամբարներ, որոնք կիսով չափ պահպանուել են և մինչև այսօր էլ այն ջրամբարներից օգտառում են գիւղացիք։

Այս աւերակների արևմտեան կողմը, երակի մակերեսոյթի վրայ կանգուն են մնացել եօթը հաստ սիւներ—աւերակ և փլուած վերնածածկով։ Աւերակներից ոչ հեռու հսկայի պէս կանգնած է մի բլուր ատամնաւոր պարիսպներով։ Սա կորնթոսի ամրոցը կամ բերդն է, որը շնուած պէտք է լինի 17-րդ դարում, դէպի ուր և ուղեկորուեցինք։

Փորձը ցոյց տուաւ, որ այնքան էլ հեշտ չէր բարձրանալը. ոլոր-մոլոր ճանապարհն ամրոցի պարիսպների մօտ արդէն անտանելի դարձաւ։ Մի կողմից ճանապարհի յոդնածութիւնը, միւս կողմից էլ արեի այրող ճառագայթները յուսահատեցնելու չափ թուլացրել էին ամէնքին։ Մի կերպով մօտենալով բարձրութեան, կանգնեցի պարսպի առաջ։

Բարձր ու հաստ և ատամնաւոր պարիսպը իւր աշտարակներով շրջապատում էր ամբողջ բերդը։ Մենք անցանք այդ աշտարակների տակով դէպի ամրոցի ներսը տանող երկաթածածկ մեծ դռնով։ Առաջին իսկ հայեացքից երևաց, որ այսուղ յունական գեղարուեստը բաժին չունի, այլ ապրել են այստեղ զինուորականները, որ սա ոյժի և սրի վայր է եղել։ Մեր չորս կողմն աւերակ աների հետքերից և անինայ թափթիւած սիւների և քարերի կտորներից ու գերեզմանաքարերից զատ ոչինչ չկար։

Երբ դուրս եկանք ասպեսների այս աւերակներից, արեգակը կախուել էր լեռների վրայ. ներքեւում երեսում էին Եղիական և Կորնթոսի ծոցերն իրար միացնող պարանոցով, իսկ վերևում երկինքը միացել էր շրջակայ բարձր լեռների հետ։ Մի քիչ յետոյ բարձրաբերձ լեռները ծածկեցին արեգակը տեսողութիւնից և խաւարը սկսեց թանձրանալ։ Երբ վերադարձանք, նոր կորնթոս քաղաքն արդէն նկրիում էր խոր քնի մէջ, իսկ մեր շրջապատի խաւարը լուսնեակի աղօտ լուսի ներքոյ սկսել էր կամաց-կամաց նոսրանալ։

Դէպի Միկինէ, Նաւպիհա, Տիրիմֆ եւ Արգոս.

Առաւոտեան երկաթուղով ուղեկորուեցինք դէպի Պելեպոնէսեան դաշտի Միկինէ, Նաւպիհա, Տիրիմֆ և Արգոս զլիսաւոր քաղաքները։ Շուտով երկաթուղու գնացքը սլացաւ կորնթոսի լեռնային ոլոր-մոլոր ճանապարհներսվ. և մեր առաջ բացուեց այն դաշտավայրը, որտեղ աճել և զարգացել է յունաց հին հեթանոսական հոգին։ Այն կայարանը, որտեղ կանգնեց մեր գնացքը, մօտ երեք վերստ հեռու էր Միկինէից. ստիպուած էինք այդ դէպի վեր տանող ու քարքարոտ ճանապարհն անցնել ոտով։

Մօտ կէս ժամից յետոյ մենք կանգնած էինք Ազամեմնոնեան կոչուած դամբարանի մօտ, որը իւր ահսելիութեամբ իւր տեսակի մէջ մի տարօրինակութիւն է ներկայացնում։ Դրսից

ոչինչ չի երևում. շատ անգամ նոյն իսկ կարելի է մօտովն անցնել առանց նկատելու։ Բայց երբ մտնում ես դէպի ներս, դրան ճակատի մի քանի սաժէն երկարութիւն ունեցող քարերը մարդու զարմանք են բերում։

Ներսը գմբէթաձև է, փորուած սարի մէջ, որի բարձրութիւնը մթութեան պատճառով անկարելի էր չափել։ Այս գմբէթը դրսից շրջապատուած է մանր թփերով, իսկ ներսից հագցրած մեծ-մեծ քարեր, որոնց վրայ ներքեմ մասերում երևում են պղնձեայ բևեռներ, որոնց վրայ երկի կախուած են եղել զարդարանքներ։

Գմբէթաձև գերեզմանի աջ կողմից մի մութդուռ տաքաւ մեզ դէպի աւելի փոքրիկ գերեզման, որտեղ ամէն ինչ խաւարով էր ծածկուած, մոմերի լոյսով անգամ չ'կարողացանք դիտել։ Այս յիշատակարանը, որպէս ճարտարապետական մի տարօրինակութիւն, ակամայ կերպով յիշեցրեց ինձ եգիտական բուրգերը, որոնց վրայ մինչև անգամ մի քանի սերունդներ են աշխատել, անշուշտ այն պատճառով, որ կարողանան իրենց ապագայ սերունդներին կենդանի և անկործանելի յիշատակներ թողնել, իրենց յաւիտենական հանգիստը ժամանակի աւերածութիւններից ազատ պահելու նպատակով։

Այս դամբարանի ժամանակը պէտք է որ չ'հասնի ցիկլոպեան ըլջանին։ (Ցիկլոպների մասին մի քիչ յետոյ)։ Դամբարանը շինուած է, ինչպէս յիշեցի, մեծ-մեծ և հատ-հատ քարերից, որոշ արուեստով շարուած։

Հսում այս շիրիմը ծածկուած է եղել կըօնական սալսափով, այնպէս որ այսուեղ մանելը կարելի չէր։ Բայց վերջը փոխուեց այդ հայեաց-կարելի չէր։ Ասում են, իբր թէ այս գերեզմանը ծաքը։ Ասում են, իսկ թէ այս գերեզմանը ծաքը։ Ասում են, իսկ թէ այս գանձարան, որը և պատճառ է ուայել է որպէս գանձարան, որը և պատճառ է դարձել, մանաւանդ անգլիացի ճանապարհողներին, բեղումներ կատարել։ Անգլիացիների ցուցմամբ էլ մի փաշա քանդել է շրջակայքի գերեզմաններից մէկը և իոկապէս գտել է անազին հարստութիւն, որը և առիթ է տուել ուրիշ փաշաների բեղումնը անել հարստանալու նպատաշաների մինչեւ այսօր էլ այդ բեղումների հետքեկով։ Մինչեւ այսօր էլ այդ բեղումների դամբարանի շուրջը։ ըստում են Ագամեմնոնի դամբարանի շուրջը։

Ենելով դամբարանից, շարունակեցինք ճանապարհը դէպի մեր դիմացի լեռնաշղթաները միանող ժայռի վրայ գտնուած Միկինէի աւերակները։ Այս աւերակների կոյտերը շրջապատուած են ցիկլոպեան շրջանի պարիսպներով։ Աւերակները բնական ժայռի վրայ լինելու պատճառով, երբեմն մարդ դժուարանում է որոշել, թէ որտեղ է վերջանում ցիկլոպեան պարիսպը, որն իսկապէս, կարծէք թէ, լրացնում է բնական ժայռերի պակասը։

Ամէնից առաջ ուշադրութեան արժանի է դէպի աւերակները տանող գլխաւոր դուռը, դէպի վերին մասը աւերուած է բոլորովին։ Իսկ որի վերին մասը աւերուած է բոլորովին։ Իսկ երկու եզերքները, շարունակութիւն լինելով ցիկլոպեան պարիսպն, նմանութիւն են տալիս դուռը։ Ագամեմնոնեան շիրիմի պատերին, իւր մեծ-մեծ, մի քանի սաժէնանոց քարերով։

Դրան վերևում մնացել է մի մեծ եռանկիւնի քար, որի վրայ քանդակուած են երկու առիւծ կտրուած գլխով։ Առիւծները յենուած են մի պատուանդանի վրայ, որն անշուշտ մի առանձին խորհրդաւորութիւն է ներկայացնում։ Ոմանք աշխատում են դրա խորհրդաւորութիւնը գտնել հնգկաց և պարսից կրօնի մէջ, այլք՝ արեգակի երկրպագութեան մէջ, ուրիշներն էլ եղբայրական սիրոյ արտայայտիչ մի նշան են համարում։ Միկինէի դրան վրայի այս առիւծների ճարտարապետական արժէքը դժուար է որոշել, որովհետեւ պակաս է ամէնագլխաւոր և արտայայտիչ մասը—գլուխը։

Գլխաւոր դռնից ներս մտնելով, թափութիւնած քարերի վրայից անցնելով, հասայ աւերակների ամէնավերեկի մասը—պալատ կոչուած տեղը։ Այս մտան այնքան է աւերուած, որ դժուար է որոշ բան ասել այն վայրի մասին, որտեղ իւր ժամանակին փայլել է արուեստը, որից սակայն ինչպէս այստեղ, այնպէս և Յունաստանի միւս պատմական վայրերում աւերակների կոյտեր են մնացել միայն։ Այդ կոյտերը վկայում են արար աշխանդի առաջ, թէ նոյն իսկ ցիկլոպեան պատերն անգամ չեն կարող ներքին անմիաբանութեան, խոռվութեան և գժտութեան դիմանալ։ Երբ քարձրացայ հին պատի վրայ, որպէսզի աւելի լաւ տեսնեմ Միկինէի աւերակների ամբողջական պատկերը, ներքեւում, լեռան ստորոտում, երեաց Պերսէյ կոչուած աղբւարի տեղը։ Ըստ աւանդութեան, հերոսը, սաս-

տիկ ծարաւից նեղուելով, սկսել է այս ու այն կողմը ջուր փնտռել ե այդ ժամանակ այսուեղ մի սունկի տակից յանկարծ բղխել է այդ եղած մի սունկի տակից յագեցնելու համար։ աղբիւը, նրա ծարաւը յագեցնելու համար։ Ահա հէնց այդ սունկից էլ ծագել է Միկինէի անունը (սունկ յունարէն մէշոյ)։

Վերջին բարես տալով աւերակներին, իջայ բարձրութիւնից դէպի իմ դիմացը փոռուած Արբարձրութիւնից դէպի իմ դիմացը փոռուած Արբուսեան դաշտը, որը իւր ծովածոցերով ու դաշտուսեան դաշտը, որը իւր ծովածոցերով ու դաշտը, մի տերով, արեգակի լուսաւորութեան ներքոյ, մի առանձին փայլ էր ստացել։ Մեր շոգեկառքը առանձին փայլ էր ստացել։ Մեր շոգեկառքը Արդուղոսի մօտով սլացաւ դէպի նաւպլիա (Արդուղեան թերակղու վրայ)։

Նաւպլիան տեղաւորուած է ծովի ափին։ Թէև փոքրիկ, բայց Յունաստանում մեր տեսած քաղաքներից Աթէնքից յետոյ առաջինն է իւր գեղեցկութեամբ կայարանի մօտ կանգնեցրած գեղեցկութեամբ կայարանի մօտ կանգնեցրած գաղաքիներից յունաց ազատութեան կոլոկուարոն հերոսի արձանը։ Շնորհիւ պարբերական պատերազմների, քաղաքիս շըջակայ այգիներն ու անտառները, կարծէք թէ, անդառնալի կերպով ոչնչացել են։ Քաղաքը երեք կողմից շըջապատուած է ջրով, Քաղաքը երեք կողմից շըջապատուած է ջրով, իսկ ցամաքի մասը զուրկ բուսականութիւնից։ Միայն ծովի եղերքներից ոչ հեռու և կայարանի Պերսէյ մնացել են մի քանի ծառեր, որոնց շըջակայքում մնացել են մի քանի ծառեր, որոնց շըջակայքում մնացել են մի քանի ծառեր, որոնց կարծուաքի տակ արեկի այրող ճառագայթներից կարծի է պաշտպանուել։

Մեր դիմացը բարձրանում է մօտ մի երբուրդ վերստ բարձրութիւն ունեցող լեառը, որի ըրբդ վերստ բարձրութիւն ունեցող լեառը, որի գագաթին կանգնեցրած գրօշակը, կարծէք թէ,

միանում է Յունաց երկնքի հետ և նրա վրայի սպիտակ խաչը նկարում անհուն կապուտակութեան մէջ։ Այս լեռան բարձրութեան վերայ տեղաւորուած են յանցաւորներն ու մահուան դատապարտուածները։

Կանոնաւոր աստիճաններով, բայց ոլորապոյտ ճանապարհով բարձրացանք դէպի վեր։ Լեռան գագաթի փոս ընկած և պարսպապատ մասում տեղաւորուած էին բանտարկեալները։ Գեղեցիկ եղանակը դուրս էր բերել նրանց գետնափոր, մութ խցերից։ Երբ մենք պարիսպներին կից աստիճաններով վեր էինք բարձրանում, նրանք առանձին խմբերով շրջապատել էին կերակրով լիքը գաւաթները։ Ոմանք էլ նոր էին ամանները ձեռքներին մօտենում կաթսային իրենց բաժինը ստանալու։ Իսկ նրանք, որոնք արդէն վերջացրել էին, մեզ տեսնելով, իսկոյն դուրս հանեցին իրենց խցերից ձեռագործներ և իրենց շրջապատող պարսպի բարձրութեան չափով երկար ձողերի վրայ ամրացրած տեսակ-տեսակ ձեռագործներով լիքը արկղիկները պարզեցին դէպի մեզ։

Այս բաժանմունքից բոլորովին անջատուած, ամրոցի մի անկիւնում, տեղաւորուած էին մահուան դատապարտուածները։

Ներքեսում տեսարանք մի այլ կերպարանք էր ստացել. մի կողմից անծայր ծովը, աջ ու ձախ կողմերից Նաւպլիան կամ Արգոսեան կոչուած ծոցը շրջապատող լեռներն այնքան էլ հետաքրքիր չէին երեսում։ Ներքե, բերդի շարու-

նակութիւն կազմող թերակղզու վրայ, փռուած է ամբողջ քաղաքը, մի հին և աւերակ ամրոցով։ Այս թերակղզուց ոչ հեռու, ծովի մէջ երեսում է մի փոքրիկ կղզի իւր վրայի դղեակով։ Հետէ մի վոքրիկ կղզի իւր վրայի դղեակով։ Հեռուից նայողը կարծում է, թէ այդ դղեակի ուղարկուածներն ուղղակի բարձրանում են ջրից։ Այս առեղին է ապրում դահիճը։

Ամրոցի բարձրութիւնից մահուան դատապարտուածներն ամէն անգամ, երբ նայում են ներքեսում փռուած ծովին, տեսնում են և այդ ծովի կապոյտ ալիքների մէջ դղեակի դէպի այդ ծովի կապոյտ ալիքների մէջ դղեակի դէպի վեր բարձրացող պատերը, որտեղ սպասում է վերջացրած բոլորովին անծանօթ մի մարդ, մի վայրերենց բոլորովին անծանօթ մի մարդ, մի վայրեանում գլուխը մարմնից բաժանող դահիճը։ Կեանում գլուխը մարմնից բաժանող դահիճը։ Իրենց վրայ գուցէ շատ անմեղներ սպասում են թեան վրայ գուցէ շատ անմեղներ սպասում են թեան վրայ օրհասական վախճանին։

Ցած իջնելով այս բարձրութիւնից, մտանք քաղաք, որի լայն փողոցներն իրենց շրջապատող ճաշակաւոր նոր բնակարաններով, ճաշարաններով ու խանութներով գրաւում են անցորդի ուշադրութիւնը։ Քաղաքի գլխաւոր փողոցը վերջանում է մի հրապարակով, որի չորս բոլորը դաշտեալ ճաշարաններ ու սրճարաններ են, որդարձեալ ճաշարաններ ու սովորութեան, երեկոները տեղ, ըստ արեելեան սովորութիւնը, իմբուսում է հասարակութիւն։

Ծովափնեայ քաղաք և յայտնի նաւահանգիստ լինելով, Նաւպլիան, ըստ երեսութիւն, գրագիստ է օտարների ուշադրութիւնը, որոնց թիւն էլ այսօր բուն բնակիչների ^{1/5} մասն է հաշուած, այսօր բուն բնակիչների

բերելով իրենց հետ եւրոպական սովորութիւններ և մօղաներ: Սակայն տեղացիք հաւատաշրիմ են մնացել իրենց հայրենական զգեստներին և սովորութիւններին: Բնակիչները համեմատաբար աւելի բարձրահասակ, զուարթ ու եռանդու են, քան Աթէնքինը:

Երբ թողեցինք նաւպիիան, ծովի վրայից ամպի մի մութ կտոր, քշուելով քամուց, ծածկեց մեր դիմացի ամրոցը: Նաւպիիայից պիտի վերադառնայինք Արգոս: Ճանապարհի կանաչազարդ հարթ տարածութեան վրայ գտնւում են Տիրիմֆի աւերակները: Մեր շոգեկառքը, անցնելով մի քանի խաղողի այգիների մօսով, կանգնեց աւերակների առաջ:

Աւերակները հարթութեան մէջ բուսածքակի ձև ունին և շրջապատուած են հսկայական պատերով, որոնք այսօր իսկ մարդու զարմանք են բերում իրենց չտեսնուած մեծութիւն ունեցող քարերով: Տիրիմֆը կարող է ըստ ամէնայնի աշխարհիս ամէնահին ճարտարապետական շէնքը համարուել:

Աւերակների շրջապատի պարիսպը գեռ վերջնականապէս չի կործանուել. ահագին մեծութիւն ունեցող քարերը դարսուած են միւմեանց վրայ առանց կրի կամ երկաթի կապով: Այս պարիսպը ներկայացնում է արուեստի այն նախնական շրջանը, երբ գեռ մարդ արուեստի մասին շատ գաղափար չունէր կամ բոլորովին չունէր, այլ ամէն բանի մէջ բնութիւնն էր իրեն օրինակ ծառայեցնում: Այս աւերակների

շրջագիծը շատ նման է յունական տաճարի, որը սակայն մի առանձին ճարտարապետական խորհրդաւորութիւն չի ներկայացնում:

Տիրիմֆը կործանուած է շատ հին ժամանակներից. նրա հիմնարկութիւնն ու կործանումը մոռացուած է: Եւրիպիդեսը (480—406 Ք. ա.) իւր երկերի մէջ այդ պատերին անուանում է «երկնային», իսկ Հոմերոսի ժամանակակիցները, հիացած այդ հսկայական պատերով, անուանում են ցիկլոպեան:

Ցիկլոպ ասելով, հսկանում էին այն որմանգիրներին, որոնք կարող էին այս տեսակի շէնքեր կանգնեցնել: Մերանց մասին շատ հեղինակներ յիշում են, թէ այդ տեսակ շէնքերի համար Փիւնիկայից կամ Եգեապոսից բերել էին տալիս յատուկ մարդիկ. կարող է պատահել, որ Եգիպտոսից վերջնականապէս Յունաստան փոխադրուած և հաստատուն մի ցեղ կազմած լինեն այդ ցիկլոպները: Եւ այս հաւանական է համարւում, որովհետեւ ցիկլոպ անունը Եգիպտական է և այս տեսակի շէնքերը նմանութիւն ունին Եգիպտական ճարտարապետութեան:

Այդ հսկայական պարսպի վրայ գեռ ևս կանգուն են մնացել միապաղաղ քարերից շինուած կանաչական կամարներ, որոնց տակ, ըստ աւանդակայական կամարներ, որոնց տակ է Հերկուլէսը իւր սիրութեան, հանդատացել է Հերկուլէսը իւր սիրուհիներով:

Թողնելով Տիրիմֆը, շոգեկառքը սլացաւ դէպի Արգոս: Մինչև Արգոս տարածուած դաշտը ներկայացնում էր կանաչապարդ սփոռց, որի

ծայրին, Լարիսսա բլրտկի ստորոտում, փռուած
է Արգոսը — Ագամեմնոնի աթոռանիստ քաղաքը:

Արգոսը իւր շրջանայ և միջի ծառերով ու
այգիներով աւելի շուտ մի մեծ պարտիզի է
նմանւում հեռուից: Բարձր ծառերի խմբակները
ծածկում են շենքերը դիտողի տեսողութիւնից,
իսկ բարակ ու բարձր նոճիները, կարծէք թէ,
փոխարինում են գմբէթների կամ մինարէթների:

Արգոսն այնպէս է աւերուել և աւերածու-
թեան մատնուել, որ ոչ մի երևակայութիւն չի
կարող վերարտադրել Ագամեմնոնի ժամանակնե-
րի շենքերը: Յոյց են տալիս մի աղիւսաշենք,
կոչելով Ագամեմնոնի պալատ: Բայց այս շենքի
հնութիւնը Բիւզանդանկան շրջանից այն կողմն
անցնել չի կարող:

Անցնելով ծուռ ու նեղ փողոցներով, մօտե-
ցանք Լարիսսայի լանջին, որտեղ իբր թէ պահ-
ուած են հնութեան մասցորդներ: Սակայն այս-
տեղ, տաճկական գերեզմանատանը, գտանք մար-
մարեայ արձանների կտորներ, — քերուած և
իրենց նախնական ձեր կորցրած, — որոնք ծա-
ռայում են իբրև գերեզմանաքարեր: Ինչպէս այս
գերեզմանաքարերի, այնպէս և գերեզմանատան
մօտ զանազան փորուածների մասին դժուար
եղաւ հաստատ տեղեկութիւններ ստանալ, որով-
հետեւ մեր առաջնորդներն էլ սկսել էին իրենց
«կարծեմ»-ները քառապատկել: Մենք էլ չենք
ուզում այս «կարծեմ»-ները ծախել մեր ընթեր-
ցողներին:

Հնութեան միակ յիշատակարանը, որին ժա-

մանակի աւերիչ ձեռքը չի դիպել, այդ Արգոսի
բնական ամֆիտեատրն է Լարիսսայի լանջին.
մարդկային սաեղծադրութիւնը դժուար թէ
այդ չափով կարողանար նմանեցնել բնութեան և
էսքիլէսի (525 — 456 թ. ա.) ստեղծագործու-
թեան յարմար հանդիսարան դարձնել: Այս թատ-
րոնը պահած ունի իւր մէջ յունական դրամայի
պարզութիւնն ու վեհութիւնը:

Մարդկանց տեղ այժմ թփեր են բուսել
թատրոնի րէջ. և երբ մեղմ քամին շոյում է
նրանց, կարծում էք, թէ հազարաւոր դիտողներ
վերստին նստած են իրենց տեղերը: Թատրոնի
բարձրութիւնից դիտողն կարող է ամբողջովին
տեսնել այն հանդիսարանը, որտեղ կատարուել
են ներկայացումներ:

Այս թատրոնը վերջերս նշանաւոր եղաւ
նրանով, որ 1829 թւին Յունաց պատգամաւոր-
նրանով, ոչ հայութեան խմբուելով, բոլորն էլ, ի սէր հայ-
ներն այստեղ խմբուելով, տեղուած էլ սէր համաձայ-
րենիքի պաշտպանութեան, եկան մի համաձայ-
րենիքի պաշտպանութեան, այն է սիրով, յօժարակամ և միաբան
նութեան, այն է սիրով, յօժարակամ և միաբան
ոյժերով պաշտպանել հայրենիքը՝ նոյն իսկ
արեան գնով:

Այս թատրոնից ոչ հեռու, մի քիչ բարձր,
երեսում է մի արհեստական քարանձաւ ստորեր-
երեայ անցքերով, որոնք ենթադրել են տալիս,
որ այստեղ եղել է Մեհեան պահպամխօս դից,
որ այստեղ քըմերը ձայնական խաղերով ազդել ու
պահպամել են ժողովրդի սնուիապաշտութիւնը:
պահպամել են ժողովրդի սնուիապաշտութիւնը:
Որովհեաւ ուշ էր և արեր մօտենում էր իւր
մուտքին, մենք չկարողացանք տեսնել Արգոս-

եան իւպիտերի կամ Զևսի ու Միներվայի կամ Պալլադայի (իմաստութեան աստուած) տաճարների աւերակները:

Երբ հրաժեշտ տուինք Արգոսին և անցանք Միկինէի բարձրութեան վրայով, վերջին անգամ յետ նայեցի դէպի Արգոսին տարածութիւնը, որն այդ ժամանակ մի այլ հրաշալիք էր ներկայացնում: Նրա լեռները, ծովածոցերը արեգակի թեքուելուց յետոյ փոխել էին իրենց մոխագոյն և կապոյտ գոյնը մանիշակագոյնի և մութ ոսկեգոյնի: Նաւալլիան չէր երեսում, երևում էր միայն նրա զունատուած հորիզոնը: Նաւերն իրենց դրօշակներով փայլում էին ծովածոցերում, իսկ հեռու հորիզոնում երկու լուսաւորուած ամպի կոտոր անշարժ կանգնած էին երկնքի վրայ: Արեւի վերջին ճառագայթներով ոսկեզօծուած էին բարձրագագաթ լեռների շարքերը: Մթութեան շղարշող ծածկուած տարածութիւնը իւր քաղաքներով, ամրոցներով, աւերակներով, դիւցագունների յիշատակներով, դիւղերով, ծովը իւր նաւերով, շողեկառքը իւր սուլոցով — կախարդիչ տպաւորութիւն էին անում:

Շուտով մեր շրջապատի լեռները փակեցին հորիզոնը և շողեկառքը սլացաւ խաւարով ծածկուած ձորերի վրայով դէպի Կորնթոս: Լուսնեակը նոր էր լուսաւորել Կորնթոսը, երբ մտանք քաղաք: Մի քիչ հանգիսա առնելուց յետոյ, դուրս եկանք ծովի ափ, փոքրիկ նաւերերով «Կանարիս» շոգենաւը հասնելու, որովհետեւ այնտեղ պետք է դիշերէինք: Դեռ ջրին

չհասած, բաւական հեռաւորութիւնից արդէն լսելի էր ալիքների աղմուկը: Երբ մօտեցանք ափին, գիշերուայ քամին խոռվել էր ամբողջ ծովը և խոռվայոյզ ալիքները համարձակ ու հսկայած գալիս ու խփում էին ցամաքի ափին:

Եկակուրսանստերը փոքրիկ նաւակներով կարողացան յաջողութեամբ շոգենաւ համեմ, իսկ ես մի քանի ընկերներով մնացի Կորնթոսում՝ յաջորդ օրը ցամաքային ճանապարհով Աթէնք դնալու:

Առաւոտեան արեգակը գեռ դուրս չէր եկել, իջայ ծովի ափ: Ծովը հանդարտ էր և համերը ուղարկում ափերին: Ալիքները, սիրոյ բոյը էր ուղարկում ափերին: Կարմիր կոյսյուն յետ էին փախչում, աւահամբոյը առալով, իսկոյն յետ էին փախչում, աւահամբոյը առալով, իսկոյն յետ էին փախչում: Երբ ծագեց զի և մասն քարերի կոյտեր թողնելով: Երբ ծագեց կարմիր արևը, ծովը և ալիքները փայլ ստացան: Կարմիր արևը, ծովը և ալիքները փայլ ստացան: Կարմիր արևը, ծովը և ալիքները փայլ ստացան: Կարմիր արևը, ծովը և ալիքները փայլ ստացան:

Նոյն օրը երկաթուղին Կորնթոսից մօտ չորս ժամում բերաւ Աթէնք, որտեղ երեք օր ևս մնացինք: Այդ ժամանակամիջոցում հիւրասիրուեցինք յունաց թագուհու ազգական կապնիսաւ կոմսուհուց և ոռւսաց ծովային աստիճանանաւորնեցինք Կոչուած ծովածոցում, որը ծարից Թալերօն կոչուած ծովածոցում, որը ծարից աթէնացւոց համար որպէս ամարանոց և յայտնի է իւր ծովային լողարաններով:

Աթէնքում կան բաւական թւով հայեր ևս Սկզբում նրանց թիւը տասն ընտանիքի էր հաս նում, բայց այս վերջին հալածանքներից յետոյ

մի քանի անգամ բազմապատկուել է։ Նրանք ունին սեպհական ժամանակաւոր հոգեսր հովիւ (Խըրէն քահ. Մուրագեան)։ Եկեղեցի չունին, բայց խնդրամատոյց են եղել իւր ժամանակին վեհափառ Հայրապետի հաճութիւնը ստանալու։

Այստեղ գոյութիւն ունի ոմն կարապետ Աղարէգեանցի ատենապետութեամբ այսպէս կոչուած քաղաքական խորհուրդ, որը ղեկավար և տնօրէն է հանդիսանում հայ համայնքի ամէնատեսակ գործերի և գոյութիւն ունի մօտ 18 տարի։ Այստեղ է «Միութիւն» թերթի (այժմ դադարած) խմբագիր Ռէթէոս Մուրագեանցը։

Հայերն ըստ մեծի մասին զբաղւում են մանր առևտրով և կօշկակարութեամբ, մի քանի հոգի էլ վաճառականութեամբ, որոնք կամաց-կամաց յառաջադիմութեան նշաններ են ցոյց տալիս։

Աթէնքը սկսել էր արդէն ձանձրոյթ պատճառել և անտանելի դառնալ։ Մի կողմից շոքը, միւս կողմից—ցերեկւայ ժամը 3-ից սկսած— փոշին անկարելի էին դարձնում մանդալը։ Իսկ դիշերներն էլ, երբ ժամը 9-ին դադարում էր քամին, սկսում էին փողոցի «Անգելեպոլոս, Մերկուրիանոս» ականջ խլացնող ու շարունակ կրկնող աղաղակիները։ Օգոստոսի 25-ին մենք Աթէնքին վերջնականապէս մնամ բարեաւ ասացինք։

Դեռ արեգակն շարունակում էր այրել, երբ ձանապարհ ընկանք դէսի Պիրէյ։ Փոքրիկ նաւակներով շատապեցինք «Նիկոլայ II» շոգենաւը։ Մի

քանի ըոսկէից յետոյ մեր շոգենաւը հազիւ նկատելի կերպով առաջ շարժուեց։

Ամբողջ ժամանակը կանգնած էի տախտակամածի վրայ և նայում էի հեռացող ափերին, կամաց-կամաց փոքրացող նաւահանգատին և կամաց-կամաց գործութիւնից։ Երբ Ակդրա վրայ թագաւորող Ակրոպօլիսին։ Երբ ըռպագոլիսն անյայտացաւ տեսողութիւնից, մեր ըռպագոլիսն առաջարկուած լեռների գագաթախ կողմը տարածուած էին արևի վերջին ճառաները ոսկեզօծուած էին արևի վերջին ճառագայթներով։ Օդը և ծովը խաղաղ էին։ Շուտով գրուեցինք մեր նախկին տեղերը։

Երկրորդ օրը երեկոյեան Զմիւռնիայի վրայով հասանք Պոլիս։ Շոգենաւը խարիսխ ձգեց և մենք փոքրիկ նաւակներով իջանք ցամաք և խմբերով ցըսուեցինք մեր նախկին տեղերը։

Որովհետեւ որոշուած էր յաջորդ օրը թողնել Պոլիսը, ստիպուած առաւտեան շտապեցի ներկայանալ ամէնապատիւ Օրմանեան պատրիկ, արք հօրը։ Կառքը սլանալով, Պերայի փողոցով, շուռ եկաւ գէպի ձախ և մտաւ մի այլ փողոց, շուռ եկաւ գտնուում էր սրբազն հօր ամառնային որտեղ գտնուում էր սրբազն հօր ամառնային բնակարանը։ Ոլորապտոյտ և նեղ աստիճանները տարան ինձ մինչև երկրորդ յարկը։

Կարտպետ-էֆենդին, որ ներքնից արդէն առաջնորդում էր ինձ, նախասենեակից առաջնորդեց բաւական գեղեցիկ զարդարուած ընդունութեց բաւական գեղեցիկ զարդարուած ընդունութեց Պատերը զարդարուած էին Հայրապետնարանը։ Պատերը զարդարուած էին Հայրապետների, եպիսկոպոսների պատների, Պատրիարքների, եպիսկոպոսների պատկերներով։ Զէր անցել մի քանի ըոսկէ—կարա-

պես-էֆենդին խնդրեց սրբազան հօր մօտ: Ել-նելով ընդունարանից, նախասենեակի միջով մտայ ընդունարանի դրան դիմացի դռնով:

Սենեակի մէջ տեղը, գրքերով ու թղթերի կոյսերով ծանրաբեռնուած սեղանի առաջ, գրիչը ձեռքին, մտքերի մէջ խորասուզուած նստած էր մի կորագէմ, լայնաճակատ, առոյդ ծերունի: Դա սրբազան պատրիարքն էր, որի սիրալիր ընդունելութիւնը վայելելուց և ազգային յայտնի բարերար մեծարելի ժամանականների յայտնած բարի և մարդասէր ինձ յանձնարարած ձեռնարկութեան մասին մի ամբողջ ժամ խորհրդակցելուց յետոյ, վերադարձայ շոգենաւ, որը մի ժամից յետոյ սլացաւ դէպի Բոսֆոր:

Դուցէ երկրի ոչ մի անկիւնում չ'կայ այնպիսի կլիմայ, որ կարելի լինի Բոսֆորի կլիմայի հետ համեմատել: Հարաւից և հիւսիսից փչող մշտական օդի հոսանքը և յաճախակի թափուող անձրեները Բոսֆորի օդը դարձնում են հրաշալի և առողջարար: Մի ուրիշ երկրում միլիոնաւոր բազմութիւն ունեցող քաղաք, այնպիսի կեղուսութեամբ, որպիսին Պոլիսն է, անպատճառ ժանդակական կամ խօլերայի բուն կամ մշտական հիւանդանոց կը դառնար: Բայց Բոսֆորի թարմ և առողջարար օդի շնորհիւ Պոլիսն ազատ է այդ դժբախտութիւնից:

Մեր շոգենաւը դեռ Բոսֆորումն է: Ահա վերստին Դոլմա-Բահչէն, Զըրագանը, սուլթանական պալատները և այլն: Սև ծովը դեռ չէ երևում: Եւրոպական և ասիական ծառաշատ լեռ-

ները հեռառում փակել էին հորիզոնը: Թւում էր, թէ շոգենաւը սլանում էր գետի վրայով: Ահա վերջապէս երևաց, որպէս մութ հայելի, Սև ծովը: Արշիբելակի և առհասարակ հայելի, Սև ծովը: Արշիբելակի յետոյ, իրաւ որ Սև րաւային կապոյտ ջրերից յետոյ, իրաւ որ Սև ծովայլ է երևում: Հնում իզուր չեն անհիւրծովը մոայլ է երևում: Հնում իզուր չեն անհիւրծովը մոայլ է երևում: Հնում իզուր չեն անհիւրծովը մոայլ է երևում:

Ցամաքից ոչ այնքան հեռու, Սև ծովի վրայ, կարծէք թէ, սպասում էր մեզ ամպի մի կտոր, կարծէք թէ, սպասում էր մեզ ամպի մի կտոր, որը մի ժամից յետոյ ծածկեց մեր շոգենաւը ու անտեսանելի դարձրեց մեր շըջապատը... և անտեսանելի դարձրեց մեր շըջապատը...

Վ. Ե. Ռ. Զ.



Լոյս ընծայուած.

1. Հոռվմայեցի էպիկտէտ իմաստասէրի կեանքն
ու վարդապետութիւնը 40 կ.
2. Ժողովրդական ընտրութիւններ 10 կ.
3. Բնաւանիքի սիւները 10 կ.
4. Դէպի գեղարուեստի հայրենիքը 50 կ.

Պատրաս են սպազրութեան համար.

1. Դաստիարակութիւն:
2. Պատերազմը և նրա ապագան:
3. Խորտակուած պատճէշ:
4. Եղէք երջանիկ:

Տպարան Շահրապետական.

Բագու, Միլիւտինսկայեա Փող.

Առարտում են տպարանական ամեն տեսակ զործեր ուսւերեն, տեղային եւ եւրոպական լեզուներով.

Պարբերական նրանքափորիւններ, գրեր, քօշիւններ, պրէսսուրաններ, լուսիւններ, օքապերականներ, հասկեր, հրակեններ, տաճեր, բանկային եւ այլ նրմանակուրիւններ, առևտուրական, արդինաբեական եւ այլ գրաենեակերի համար բանիններ, մատեաններ եւ ծրաններ, աժիշտներ, ազգեր, խոյարութիւններ եւ այլն եւ այլն:

Գները մատչելի են, զործը՝ մաքուր, բարեխփող եւ ժամանակին:



21687

Նոր բնձայուած.

1. Հոռվմայեցի կտիկտէտ իմաստաների կեսնքն
ու վարդապետութիւնը 10 կ.
2. Ժողովրդական ընտրութիւններ 10 կ.
3. Բնտանիքի սիւները 10 կ.
4. Դէպի գեղարծւեստի հայրենիքը 50 կ.

Պատշաճ են սարգութիւնն նախա.

1. Դաստիարակութիւնն:
2. Պատերազմը և նրա առաջան:
3. Խորտակուած սպանիչ:
4. Եղէք երջանիկ:

Գիւլ 50 ԿԲՊ.